ՊԱՅՐԵՆ

— Մարդկային սեռն երկու կուսակցութեան բաժնուած է, մարդիկ յարձակողական պատերազմ կը մղեն, կանայք պաշտպանողական, սէրը կը գրգռէ երկու կողմերը, եւ խառնուրդի միջոցին, շահը շարժելով երկուքին մէջտեղ կը նետուի: Բայց այս պատերազմը միւս պատերազմներուն չի նմանիր, փոխանակ պատերազմիկներու թիւը պակսեցնելու, անոնց թիւն աւելցնելու կը ծառայէ:

ՍԷՎԷՆ ՄԱՐԿԵԱՎ

— Ո'վ որ աղջիկներ ունի, միշտ հովիւ է:

— Աղջիկ սպահելը ծանր բեռ մ'է:

ՌԵՆԵՍԱՐ

— Պարահանդէսի մէջ մայր մը ծպտեալ նստար մ'է:

— Ամբողջ Եւրոպան կրնամ հաշտեցնել, բայց երկու կին չեմ կրնար հաշտ պահել իրարու հետ:

ԼՈՒԻ ԺՊ.



ԱՌԵՒՏՈՒՐԻ ԿԵԱՆՔԷՆ

ՎԱՐԿ. — ԴՐԱՄԱՏՈՒՆ. — ՁԵՂՁ

Ի՞նչ է վարկը. — Առեւտրական կեանքով զբաղողներու համար անհրաժեշտ է լաւ մը ըմբռնել թէ՛ ի՞նչ է վարկը : Կ'ըսենք թէ Յակոբ՝ Թոմասին վարկ կ'ընէ՝ երբ Յակոբ իր ունեցած ո՛ր եւ է մէկ ինչքը Թոմասին կը յանձնէ : Վտահ ըլլալով որ որոշեալ ժամանակ մը ետքը Թոմաս իրեն պիտի վերադարձնէ զայն : Փոխ տուողը վարկ կ'ընէ եւ փոխ առնողը վարկ կ'ընդունի : Վարկ բառը՝ վասհուրեան նշանակութիւնը ունի եւ Յակոբ կը հաւատայ որ Թոմաս ետ պիտի տայ իր ինչքը (բան մը որ շատ անգամ չպատահիր) : Յակոբ պահանջատէր է եւ Թոմաս պարտական :

Վարկ բառը ամէն պարագայի մէջ չգործածուիր : Երբ մէկը ձի մը, գիրք մը, տուն մը, մեքենայ մը, վերջապէս ո՞՞ւր է առարկայ մը փոխ կ'առնէ եւ գործածելու համար դրամ կը վճարէ, վարձած կ'ըլլայ եւ վճարածն ալ վարձ, հասոյթ կ'ըսուի : Շատ երկիրներու մէջ, ուր տակաւին դրամը գործածութեան

մէջ չէ, ցորեն, իւղ, գինի, բրինձ եւայլն փոխ կուտան իրարու եւ կ'առնեն : Իսկ քաղաքակիրթ երկիրներու մէջ սովորութիւն դարձած է դրամը միայն փոխ տալ : Երբ մէկը մեքենայի մը պէտք ունի եւ զայն գնելու չափ դրամ չունի, կ'երթայ կրցածին չափ լաւ պայմաններով փոխ դրամ կ'առնէ եւ մեքենան կը գնէ այն տեղէն ուր ամէնէն աժանն է : Շատ անգամ ալ մեքենան ծախողն է որ գնողին վարկ կ'ընէ եւ մեքենային արժէքին չափ դրամ փոխ տուած կ'ըլլայ :

Առուտուրի կամ ճարտարարուեստի մէջ վարկը խիստ կարեւոր է. որովհետեւ սեփականութիւն մը անանկ մէկուն ձեռքին մէջ կը դնէ՝ որ կարող է անոր արժէքը գնահատել տալ : Խիստ շատ մարդիկ սեփականութիւններ ունին եւ սակայն անկարող են գործի ձեռնարկելու, ինչպէս՝ կիները, ծերերը, տըղաքները, եւ այլն : Երբեմն կը գտնուին մարդիկ ալ՝ որոնք այնքան շատ հարստութիւն ունին որ մտքերնուն չեն անյներ գործի մէջ մտնել՝ եթէ ուրիշ մէկը յանձն առնէ իրենց համար նոյնը ընել : Եւ եթէ ձեռնարկի մը միջամուխ ըլլան իսկ՝ իրենց ամբողջ հարստութեան պէտք չունին եւ տրամադիր կ'ըլլան ուրիշին փոխ տալ աւելորդ մասը կարճ պայմանաժամերով : Միւս կողմէ շատ ճարպիկ ու գործունեայ մարդիկ կան՝ որոնք կարող են գործատեղիներ հիմնել, հանքեր փորել ու առուտուր ընել՝ եթէ բաւական դրամ ունենան հարկ եղած գործիքները, նախնական նիւթերը գնելու, գործաւորներու վճարելու եւ ուրիշ պէտքերու համար : Մարդ մը վարկ ստանա-

լու համար, անհրաժեշտ է որ սեփականութեան մը տէրը ըլլայ: սակայն սղտիկ բան մը ունենալով ալ կարող է ի հարկին իր գործին պէտք եղած դրամը հայթայթել՝ եթէ պատուաւորութեան ու կարողութեան լաւ համբաւ մը չահած է:

Գրաւի վրայ փոխասուութիւն. — Վարկը շատ մը տարբեր կերպերով կ'ստացուի: Երբեմն մէկը լիովին վստահութիւնը վայելելով բարեկամի մը կամ ազգականի մը՝ անկէ տեւական կերպով փոխառութիւն մը կ'ընէ:

Գրաւի վրայ ալ ահագին գումարներ կարելի է փոխ առլ: Մարդ մը որ իր հարստութիւնովը բամբակի մանարան մը շինած է՝ զայն իբր երաշխաւորութիւն կուտայ կատարած մէկ փոխառութեանը, այսինքն պահանջատէրին իրաւունք կուտայ՝ մանարանը ծախելով իր դրամը գանձելու, եթէ երբեք ինքը որոշեալ պայմանաժամին անկարող ըլլայ վճարելու: Այս պարագային կ'ըսեն որ մանաւանդ գրաւի դրուած է:

Շատ հաստատութիւններ, ինչպէս ապահովագրական ընկերութիւններ, շինութեանց ձեռնարկու ընկերութիւններ եւայլն, մեծամեծ դրամագլուխներ փոխ կուտան գրաւի վրայ եւ ասոնց օրինակին կը հետեին շատ մը հարուստ անհատներ: Տուներ, խանութներ, արտեր եւայլն իրենց անուանական տէրերուն շեն պատկանիր՝ հապա այն անձերուն, որոնք դրամ վճարած են այդ տէրերուն՝ անոնց կալուածները գրաւի առնելով:

Այդ կալուածներու արժէքին, եւ փոխ տրուած դրամին քանակութեան միջեւ բաւական մեծ տարբերութիւն մը կը դրուի, ծախուած ժամանակ կրելիք գինի անկումին տեղը լեցնելու համար: Այսպէս 1000 ոսկինոց տունի մը վրայ 700 կամ 800 ոսկի միայն կը տրուի:

Գրաւի միջոցաւ կնքուած փոխառութեան մը տոկոսը համեմատական է գրաւի դրուած կալուածին արժէքին ու ներշնչած վստահութեան համեմատ: Երբ անոր շինուածքը խախտու կամ իր իրական արժէքով ծախուելը կասկածելի է՝ բնականաբար փոխատուութեան տոկոսն ալ բարձր կ'ըլլայ արուած դրամին գանձումը աստիճան մը կասկածանքի ենթարկուելով:

Փոխատուութեան համար իբր գրաւ կ'ընդունուին հաստատուն կալուածներ, տուն, գործատեղի եւայլն, այսինքն անանկ ինչքեր, որոնք երկար ժամանակ կը պահեն իրենց գոյութիւնը. սակայն երբեմն ալ նոյն գործողութիւնը կը կատարուի վաճառանիւթի մթերքի վրայ. ինչպէս բամբակ, գինի, ցորեն եւլն:

Դրամասուց. — Քաղաքակիրթ երկիրներու մէջ ամէնէն աւելի վարկ տուող հրամատէրն է (պանքի), որուն համար կրնայ ըսուիլ թէ վարկի վրայ կը շահագործէ: Դրամատէր մը սովորաբար երեք չորս տեսակ գործողութիւններ կը կատարէ, սակայն անոր իրական գործն է կարգ մը անձերէ դրամ փոխ առնելով՝ ապրանք գնելու համար դրամի պէտք ունեցողներուն փոխ առլ:

Երբ վաճառական մը ձեռքի ապրանքները ամ-

բողջովին կը ծախէ՝ փոխարժէքը դրամ կ'ընդունի . մինչեւ որ ապրանքի նոր մթերք մը գնէ՝ պէտք չունի այդ դրամին : Նոյնպէս անոնք որ թողակ , շահաբաժին կամ հասոյթ կ'ստանան , ամէնը մէկանց մէկ անգամէն չեն ծախսեր . փոխանակ այս դրամները իրենց քով պահելու՝ ուր որ եւ է շահ մը չպիտի բերէ և նոյն իսկ գողցուելու , այրելու , կորսուելու վրտանգներու ենթակայ ալ պիտի ըլլայ , նախապատիւ կը սեպեն եւ իրաւամբ ալ՝ դրամատէրի մը փոխ տալ որ ուզած ժամանակնին իրենց կը վերադարձնէ զայն :

Ընդհանրապէս վաճառականները , ճարտարարուեստով զբաղողները , ամէն օր ստացած դրամին կը զրկեն իրենց դրամատէրին եւ քովերնին մանր ծախքերու համար քիչ մը բան միայն կը պահեն :

Դրամատան մէջ գողերէ , հրդեհէ եւայլն վախ չի կայ : Ուզուած ժամանակ կարելի է տրուած դրամը ետ առնել . դրամատէրը տոկոս կը վճարէ իրեն պահ տրուած դրամներուն : Ահա՛ այս առաւելութիւնները կը վայելեն իրենց հարստութիւնը դրամատուն մը յանձնողները :

Այս յանձնումը զանազան պայմաններով կը կատարուի : Երբեմն յաճախորդը յանձն կ'առնէ դրամը ետ ուզելէն եօթն օր առաջ իմաց տալ դրամատէրին , երբեմն ալ դրամատան յանձնուած գումարը երկու կամ մէկ տարի եւ կամ վեց ամիս ետ շառնուելու պայմանաւ կը տրուի , այս պարագային փոխատուութեան պայմանաժամը որքան երկարի՝ տոկոսն ալ նոյնքան բարձր կ'ըլլայ :

Ամէնէն աւելի ընթացիք հաշիւի դրութեամբ է որ դրամատուն մը դրամ կը յանձնուի . յաճախորդը ուզած ատենը իրաւունք կ'ունենայ գումար մը պահ տալու կամ ետ առնելու : Այս պարագային , սակայն տոկոսը շատ ջնջին բան մը , նոյն իսկ ոչինչ կ'ըլլայ որովհետեւ դրամատէրը ստիպուած է իրեն յանձնուած գումարը գրեթէ ամբողջովին պատրաստ պահելու , չգիտնալով թէ յաճախորդն ո՛ր ատեն ետ պիտի ուզէ :

Երբէք հաւանական չէ որ դրամատան մը հազարաւոր յաճախորդները միեւնոյն ժամանակ ելլան իրենց յանձնած գումարը ետ ուզեն , երբ մէկ քանին դրամ կը քաշեն՝ ուրիշներ նոր գումարներ կը բերեն , այսպէսով դրամատէր մը միշտ մեծաքանակ գումարներ կ'ունենայ իր արամադրութեանը տակ առանց հաշուելու դրած դրամագումարը զորս կը շահագործէ ուրիշ անհատներու փոխ տալով :

Դրամատէր մը իր փոխատուութիւնները կը կատարէ զանազան կերպերով : Երբեմն , ինչպէս որ վերը բացատրեցինք , կալուած , ապրանք , երկաթուղայ բաժնեթուղթ կամ հանրային պարտաթուղթեր գրաւ առնելով դրամ փոխ կուտայ . սակայն այս տեսակ գործողութիւններու համար չլինար մեծամեծ գումարներ յատկացնել , որովհետեւ ուզած ատեն դրամը ետ առնելը դժուար է : Փոխատուութեան ամէնէն պարզ միջոցներէ մին է թողուլ որ յաճախորդները իրենց վարկէն անցնին , այսինքն դրամատան յանձնած դրամէն աւելի մեծ գումար մը առնեն : Բնականաբար այսպիսի գործողութեան մը համար դրամատէրն չափազանց վստահութիւն ունենալու է յա-

ճախորդին վրայ, եւ անկէ կամ անոր բարեկամներէն հարկ եղած երաշխաւորութիւնը առած ըլլալու է :

Զեղչ. — Դրամատէր մը վարկ բանալով իր դրամները փոխ տալու եւ զանոնք շահագործելու համար ամէնէն աւելի տոմսակներ գեղչելու գործողութիւնը կը կատարէ, այսինքն որոշեալ պայմանաժամին վերադարձնելու հաստատ գրաւոր խոստումի մը վրայ դրամ փոխ կուտայ :

Ենթադրենք որ Յովհաննէս հազար ոսկիի բամբակեղէն ծախեց խանութպանի մը՝ Թովմասին: Թովմաս այդ ապրանքները ծախելու համար քանի մը ամսուան պէտք ունի. եթէ պատրաստ դրամ ալ չունի առած ապրանքին փոխարէնը կանխիկ վճարելու, այն ատեն կը համաձայնի Յովհաննէսին հետ հազար ոսկիի վարկ մը ստանալու համար եւ անոր կը յանձնէ սա՛ կերպով գրուած տոմսակ մը :

Կ. Պոլիս, 1906 Մարտ 2

Վ. Մ. 1000 Օււլ. ոսկի

Թուախանես իննսուն եւ մեկ օր յետոյ պարտիւ վճարեչ Պ. Յովհաննէսի կամ հրամանին հազար Օււլ. ոսկի, փոխարեւը ապրանք ստացած եւ :

ԹՈՎՄԱՍ

Եթէ Յովհաննէս և Թովմաս աղէկ վարկի տէր են, դրամատէրը անժիջապէս կը գեղչէ այդ Թովմարը, այսինքն կը գնէ զայն՝ նշանակուած գումարը վճա-

րելով՝ ուրկէ նախապէս վար կը դնէ հարիւրին սա-
չափ տոկոս՝ իբր իր շահը: Այս տոմսակը ապահովու-
թիւն մըն է դրամատէրին ձեռքը՝ որովհետեւ Թով-
մաս ստիպուած է որոշեալ պայմանաժամին վճարել
զայն, եթէ անանկանալ կամ օրինաց տրամադրու-
թեան ենթարկուիլ չուզեր :

Այս տեսակ տոմսակ մը ձեռքէ ձեռք քանի մը
հոգիի կը ծախուի՝ որոնց իւրաքանչիւրը ճիշտ կ'ընէ,
այսինքն հրաման կուտայ դրամը վճարել այն մար-
դուն որուն կը ծախէ ինք տոմսակը : Երբ որոշեալ
պայմանաժամին Թովմաս կը մերժէ վճարել, իւրա-
քանչիւր ստորագրող իրաւունք ունի նոյն գումարը
պահանջել իրմէ առաջ ճիշտ ընողէն :

Զ Ո Ւ Մ Ք Ժ Ս Լ Պ Ք

— Պարոն, բարի ու երջանիկ տարի մը կը մաղ-
թեմ ձեզի... :

— Հա՛ւ, լա՛ւ, դալ տարի Դեկտեմբեր Յին նո-
րէն եկո՛ւր, եթէ ըսածդ իրաւ ելլէ՛, քեզի 5 Փրանք-
նոց մը պարգեւ կայ :

×

— Նոր տարին բարեմաղթելու եկողներուն պիտի
ըսես թէ՛ արկղակալս դրամարկղին բանալիներն ու
դրամները առեց ու փախեր է :

— Բայց ... ձեր արկղակալն է եկողը :

×

— Տեարք դատաւորք, ամբաստանեալն արժանի է ձեր ներողամտութեան: Արդէն իսկ բաւականէն աւելի պատժուած չէ՞ միթէ ձմեռուան այս ցուրտին բարակուկ բանդալոն մը գողնալովը:



— Պարո՛ն, անկարելի է որ աղջիկս ձեզի կնութեան տամ, ձեր վրայ լուրեր հաւաքել տուի. ամէն տեղ մեծագումար պարտքեր ունիք:

— Ո՛հ, այդ մասին անհոգ եղիք, երդում ըրած եմ բնաւ չվճարել զանոնք:



Փասաբանը. — Ընդհանուր դատախազը ամբաստանեալին գլուխը կը պահանջէ. տեա՛րք դատաւորք, առէ՛ք զայն, մեղի պէտք եղածը պատիւն է:

Ամբաստանեալը. — Պապանծէ՛, աւանակ:



— Հայրի՛կ, դուն չըջանաւարտի վկայական առած ես, Ովկիանիոյ մէջ ո՞ր կղզիները կան:

— Տղա՛ս, միտքէս ելած են ատոնք:

— Անանկ է նէ ես ինչո՞ւ սորվիմ, մեծնամ նէ պիտի մոռնամ:



Վարձակալը. — Սենեակին թուղթերը փոխելու է:

Պանդոկապետը. — Ի՞նչ հարկ կայ. քսանը հինգ տարի է յաճախորդներս բան մը ըսած չունին:



— Պարոնը այսօր մարդ չընդունիր:

— Թո՛ղ չընդունի, կ'օգտէ որ վճարէ:



— Մարիա՛մ, սանդուղները մաքրէ քիչ մը, նայէ՛ ֆինօն գիրկս առած վար իջայ որ ոտքերը չաղտոտին:



Վաճառականը նոր առած սպասաւորին. — Քեզի քովս առնելու չէի, վարժապետութենէ եկողները գործի չեն գար, ծուլութեան վարժուած կ'ըլլան:



— Ի՞նչ, սիրելիս, դուն ալ գիտես որ անոր անցեալին վրայ արատ մը կայ, և կ'ողգէ նորէն անխելքը ամուսնանալ:

— Արատին եթէ նայելու ըլլաս... արեւն ալ արատներ չունի՞ միթէ:



Ամբակումին ակուան կը ցաւի:

— Վստահ եղիք որ պզտիկ ցաւ մը իսկ չպիտի զգաք, կ'ըսէ ատամնաբոյժը:

— Անանկ է նէ, քու ակուայէդ հատ մը քաշէ որ տեսնեմ:



Պարոնը խոհանոց մտնելով սպասուհիին. — Ինչո՞ւ այդ չգաի ազմուկ կը հանես կոր սաներով, ձայնը մինչեւ վեր կուգայ կոր:

Սպասուհին, — Դիտմամբ կ'ընեմ որ՝ տիկինին դաշնակին ձայնը չառնեմ, ջիղերուս կը դալչի կոր:



— Շատ խելացի է սա տղեկը, երեկ դերձակը հաշիւը առեր բերեր է. շուտ մը գնաց դիմաւորեց ըսելով որ՝ տունը չեմ եւ ճամբեց զանի:



— Քեզի համար բան մը չենք կրնար ընել, խեղճ կնիկ, մենք աղքատ որբ ու տղաքները միայն կը ինամենք :

— Յիսուսըվեց տարի է, ես ալ որբ մնացած եմ :

×

Տիկիւնր. — Պարո՛ն, կարծեմ ձեզի մեծ արուեստահանդէսին ժամանակը տեսայ :

Պարոնր. — Կարելի է, տիկի՛ն, բայց ո՞ր արուեստահանդէսին էր, 1900ի՞ն, թէ ոչ 1888ի՞ն :

×

— Քեզի օղի մը հրամցնեմ սա գինետունէն :

— Չէ՛, ադ չըլար, այդ տեղի ծախուած օղին ես կուտամ, գիտեմ ի՛նչ ապրանք՝ ըլլալը :

×

Երկու որսորդներէ մին ընկերօջը, — Այդ տուփին մէջ ի՞նչ կայ :

— Վէրքեր դարմանելու հարկ եղած նիւթերը, նշան առնել չեմ գիտեր, կրնայ ըլլալ որ քեզ վիճակ տրեմ :

×

— Պարո՛ն, քեզի տեսած ըլլալս լաւ կը յիշեմ :

— Բայց բնաւ ձեզի հանդիպած չեմ, տիկի՛ն, բնա՛ւ :

— Կրնայ ըլլալ, ներեցէ՛ք ուրեմն, անանկ հասարակ երեւոյթ մը ունիք որ՝ խաբուեցայ :

×

— Կը ներէ՞ք պարո՛ն, անգամ մը երթամ տեսնեմ, ամուսինս ո՞ւր է :

— Կը նախանձի՞ք, տիկի՛ն, . . . :
— Ո՛հ, ո՛չ, կ'ուզեմ վստահ ըլլալ թէ՛ մեկնա՞ծ է :

×

— Սո՛ւտ է, ատանկ բան չկայ, մի՛ հաւատար :

— Բայց սա՛ լրագրին մէջ գրուած է, տե՛ս :
— Գիտեմ, ես ալ խմբագիր եմ, ատանկ բաներէ կը հասկընամ :

×

Պատահուր. — Ամբաստանեալ, արդէն անգամ մը դատապարտուած ես :

Ամբաստանար. — Այո՛, տէր դատաւոր, բայց յանցանքս այն անգամուան փաստաբանինս էր, ապուշը չի կրցաւ շնորհքով խօսիլ :

×

Մայրը. — Կը բաւէ՛, ալ Սիրանոյշ, նշանուած աղջիկ մը այդչափ չպարեր :

Սիրանոյշ. — Չգէ՛. մայրիկ, թող որ քիչ մը զը՛ ուարճանամ հիմա, ետքը ամէն բան կը լմնայ :



ԽՈՇԱՆՈՑԻՆ ՄԱԾՈՒՆԸ

Շատեր կ'ուզեն անարատ եւ համեղ մածուն ուտել, բայց այդպիսի բնութիւններով օժտուած մածուն գտնել զրեթէ՛ անհնար է կաթնավաճառներուն քով, ուստի մեր Տաբեցոյցի ընթերցողները գոհացնե-

լու համար կը զնենք ասոր մասնագէտ վարպետի մը ցցուցած եղանակն եւ կը յուսանք թէ գոհ պիտի ըլլաք անարատ մածուն պատրաստելով ուտել :

Առէք լիդրա մը կաթ , լեցուցէք մաքուր ամանի մը մէջ , լաւ կրակ մը պատրաստեցէք , դրէք սանր կրակին վրայ եւ տաքցուցէք կաթը : Այս միջոցին մաքուր շերեփով (ֆերչե) մը կաթը շարունակ խառնեցէք եւ հոսեցէք (շերեփով կաթն առնել եւ քիչ մը բարձրէն սանին մէջ վաղցնել) , երբ կաթն այլ ևս սիսի փրփուրալ , աւելի շուտ հոսեցէք և ուշադրութիւն ըրէք որ աճելով սանէն դուրս չյորդի , 5-10 վայրկեան վերջը վար սռէք կրակին վրայէն եւ շարունակեցէք հոսել միշտ մինչեւ որ պաղի այն աստիճան որ ճկոյթ մատերնուդ ծայրը կաթին մէջ միսած ատեննիդ հագիւ թէ դիմանայ . — եթէ մատերնիդ վարժ չէ եւ փափուկ է մտնաւանդ , պիտի խաբուիք : Առաջուց պատրաստեցէք փայտէ սնտուկ մը , զորօրինակ քարիւղի սնտուկ , մէջը լեցուցէք մանր յարդ , եւ հոն զետեղեցէք մածուն բռնելիք ամաննիդ . միսկողովէ առէք ապուրի դգալ մը թարմ մածուն եւ քիչ մը պաղ ջուրի հետ լաւ մը հարեցէք . այնպէս որ իր թանձրութիւնն հաւասարի թանի (տաճկերէն այլաւ) : Երբ կաթին տաքութիւնը որոշեալ աստիճանին հասնի , այն ատեն լեցուցէք յարդին մէջ պատրաստուած ամաններուն մէջ , մակարդը (ջրով հարած մածունը) բաժնեցէք իւրաքանչիւրին հաւասար չափով , (եթէ քանի մը հատ են) լեցուցէք ուշադրութեամբ ճիշտ մէջտեղէն , եւ փայտէ դքալի մը կոթով եւ կամ ուրիշ բարակ առարկայով մը մէջտեղէն խառնեցէք որ մակարդը կաթին հետ միանայ առանց երեսի սերը շարժելու : Այս ընելնէդ վերջը , եթէ ձմեռ է , առէք եր-

կու խիստ փոքր թաղարներ (սախը) կամ անոնց նման ո եւ է ամաններ . մէջը լեցուցէք տաք մոխիր , եւ վրան շարեցէք մէկ քանի կտոր կրակ եւ զետեղեցէք սնտուկին մէջ , մածունի ամաններուն մօտ . ծածկեցէք սնտուկը իր կափարիչով կամ տախտակով մը , վրայէն ալ մէկ երկու բրդեղէն ծածկոցներով ծածկեցէք , երեք ժամ վերջը բացէք սնտուկն , եւ պիտի տեսնէք որ ձեր կաթը մարկարդուած է , բայց տակաւին մի շարժէք տեղէն , կրակները վերուցէք եւ քիչ մը թողէք այնպէս , քիչ ետքը կրնաք բոլորովին սնտուկէն դուրս հանել եւ պաղ տեղ մը զնել :

Սովորաբար այսպէս կը պատրաստեն մածունը , բայց երբ կ'ուզէք որ քիչ մը թանձր ըլլայ , կաթն աւելի եփեցէք որ շոգիանալով գրեթէ կէսը մնայ , իսկ եթէ չէք ուզեր շատ եփել՝ կաթին մէջ խառնեցէք քիչ մը թարմ եւ հում սերոց (Քոհմ) : Կաթին տաքութեան աստիճանը (մակարդելու համար) փորձով գտած եմ որ 55° հարիւրամասնեայ է ամառուան համար , եւ քիչ մը աւելի , մինչեւ 60° , ձմեռուան համար : Մակարդը կրնաք լեցնել կաթին մէջ պզտիկ ապակեայ գրեխով մը , որ ուժով պայթեցնելով , ամէն կողմ կը տարածէ առանց երեսի սերն աւրելու , որով խառնելու ալ հարկ չի մնար վերջը :



ՇԱՊԻԿՆԵՐՈՒ ԹԵՒԵՐՆ ՈՒ ԿՈՒՐԾՔԵՐՆ ՈՂՈՐԿԵԼ

Ամերիկացիք իրաւամբ կը պարծին թէ ոչ ոք կըրնայ հաւասարիլ իրենց շապիկներու թեւերն ու կուրծքերն ողորկելու մասին , մեր ընթերցողուհիներն ան-

տարակոյս շնորհակալ պիտի ըլլան մեզի եթէ ցոյց տանք իրենց թէ՛ ողորկելու այս պղտիկ դաղտնիքն ի՞նչ բանի մէջ կը կայանայ: Գործածուելիք նշաստակին (foլա) մասնաւոր պատրաստութեան մէջ կը կայանայ պարզապէս այս դաղտնիքը:

Մէկ կողմէ նախ լիդրս մը ջուր եռացնելու է, որուն մէջ պէտք է նետել կաղինի մեծութեամբ քաբարմաչեք՝ բարակ մը տաշելէ վերջ որպէսզի դիւրաւ հալի: Յետոյ եռացող հեղուկին խառնելու է քիչ մը մեղրամոմ որպէս զի արդուկելու ժամանակ, արդուկը չփակչի լաթին:

Միւս կողմէ նշաստակը պաղ ջուրի մէջ հարելու է ամենամեծ խնամով մինչեւ որ սերի թանձրութիւն առնէ: Այս գործողութեան մեծ խնամք տանելու է, եթէ չէք ուզեր որ նշաստակն եփած ատեն փսորի: Յետոյ պէտք է եռացող ջրին մէջ լեցնել այսպէս լուծուած նշաստակը, կամաց կամաց եւ անդադար շարժելով, մինչեւ որ նշաստակը օշարակի մը թանձրութիւնն առնէ: Այս վիճակին մէջ 15-20 վայրկեան եփելու է, մերթ ընդ մերթ դգալով մը խառնելով, որպէսզի սանին տակը չփակչի: Եփելէ յետոյ, թըրչած շղարչէ (քիւլպէն) մը պէտք է անցնել. եւ թողելու է որ պաղի մինչեւ մարդուն մատը դիմանալու չափ: Այն ատեն, ձեր շապիկին թեւերն, օձիքներն ու կուրծքերն խնամով կրնաք թաթխել այս հեղուկին մէջ, եւ ծրարելով քառորդ մը սպասելէ ետքը կ'սկսիք արդուկել: Արդուկը շատ տաք ըլլալու է, և պէտք է ուժով կոխել եւ արագաբար շարժել, որպէս զի ողորկումն միօրինակ ըլլայ:

Օձիքներու ու թեւնոցներու համար կրնաք նաեւ

մասնաւոր շոհ (foլա) մը գործածել հետեւեալ կերպով:

- Լիդրս մը նշաստակի համար աւելցուցէք՝
- 90 կրամ սիլիքադ տը սուտ,
- 30 « կօմ արապիք կամ տէքսթ էրին
- 60 « շաքար, բայց փոշի ըլլալու է:

Չէ՞ք զարմանար եթէ ըսինք թէ Ամերիկայի մէջ ամէնէն ճարտար արդուկողներն են աղտոտ կարծուած Ջինսցիներն, որ ճարտարարուեստի այս ճիւղին մէջ մեծ համբաւ հանած են:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ

(CRISES COMMERCIALES)

Ճարտարարուեստը պարբերական է. — Ամէն մարդ հարկաւ դիտած է որ առոււտուրը կը փոփոխէ իր գործունէութիւնը ժամանակ առ ժամանակ, պարբերաբար: Եւ քարտի իրաւամբ ըսած է.

Մարդկային գործերու մէջ մակընթացութիւն մը կայ.

Որուն բարձրացող ալիքները հարստութեան կ'առաջնորդին:

Գործի ելեւէջներու մէկ քանին կախում ունին տարւոյն եղանակներէն. գարնան ու տմառուան մէջ առուտուրը խիստ շատ է, մինչդեռ ձմեռուան մէջ գրեթէ ոչինչ, Յունուար, Փետրուար, Մարտ, Յունիս Յուլիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն մէջ շատ դիւրութեամբ կարելի է ստակ ձարել, Հոկտեմբեր եւ

Նոյեմբեր, մասնաւորապէս, շատ գէշ կ'երթան. դրամին սակը շուտով կը բարձրանայ եւ տարւոյն մէջ ամենէն աւելի այս երկու ամիսներուն մէջ է որ սնանկութիւնները կը շատնան. Ապրիլ եւ Մայիս ալ բաւական չվտանգաւոր են վաճառականին, սակայն առաջուրնէ լաւ պատրաստուելով կարելի է անցնել դանոնք առանց սնանկութեան վտանգներու :

Գործերու մէջ, ա'լ աւելի երկար տեւող մակընթացութիւն մը կայ որ բարձրանալու եւ իջնալու համար գրեթէ տասը տարուան տեւողութիւն մը կ'ունենայ : Պատճառը յայտնի չէ, սակայն իրա՛ւ է որ տարիներ կ'ըլլան ուր մարդիկ սովորականէն աւելի վտտահ կ'երեւին եւ աւելի մեծ յոյսեր կ'ունենան իրենց գործերու յաջողութեան վրայ, կը մտածեն որ եթէ դրամագլուխին նոր ճարտարարուեստներու, դրամատուններու, երկաթուղիներու, շոգենաւնէրու եւայլ նոր առեւտրական ձեռնարկներու մէջ դնեն, մեծամեծ շահեր պիտի իրագործեն : Երբ կարգ մը մարդեր այս լաւատեսութիւնը, այս յոյսերը կ'ունենան, ուրիշներ ալ անոնց կը հետեւին : Ինչպէս որ ընտանեկան ընկերութիւններու մէջ մէկ երկու հոգիին զուարթութիւնը բոլորին ալ կը փոխանձի եւ ամենուն դէմքըն ալ կը զուարթանայ : Այս յոյսերը կամաց կամաց կը տարածուին առեւտուրի ամէն տեսակ ճիւղերուն վրայ ալ : Հնարագէտ մարդիկ նոր ձեռնարկներու, նոր գիտերու ծրագիրներ կ'առաջարկեն եւ շուտով կը գտնեն դրամատէրեր որոնք յօժարամիտ կ'ըլլան մասնակցելու : Ուրիշ շահագէտներ ալ տարբեր ծրագիրներ կ'առաջարկեն, եւ քանի մը առեւտրական ընկերութիւններու բաժնեթուղթերը վրայ գնելուն կ'ենթադրեն թէ՛ միւսներն ալ պիտի բարձրանան :

Ամէնէն անհեթեթ ծրագիրները իսկ պաշտպաններ կ'ունենան լաւատես ժամանակամիջոցին եւ ասանկով յառաջ կուգայ « Առեւտրական տենդ » ըսուածը :

Առեւտրական տենդ. — Երբ այս մտադրուած ծրագիրները ի գործ դնելու ատենը կու գայ ու կըսկըսին անոր ձեռնարկել, շինութեանց համար անհրաժեշտ եղող նիւթերու ահագին պէտք մը կ'զգացուի եւ շուտով անոնց գիներն կը բարձրանան : Զանոնք արտադրող գործատուները շատ դրամ կը վատաւրկին ու կը վատնեն՝ հանգստութեան, զուարճութեան համար աւելորդ ծախքեր ընելով : Նոր կարասի նոր հագուստ գնելով, եւլն : Բոլոր այս առարկաներուն գիները կը սղեն եւ անոնց առուտուրով զբաղողները մեծամեծ շահեր կ'ունենան : Ամէն վաճառական նոր նոր ապրանքներ կը մթերէ սուղ գիներով, սա յոյսով թէ՛ ապագային ա'լ աւելի պիտի բարձրանայ անոնց գիները :

Իրերու այս վիճակը չկրնար սակայն երկար տեւել : Նոր առեւտրական ձեռնարկներու մասնակցողները վճարումներ ընելու պարտական են, այսինքն իրենց խոստացած դրամագլուխը հայթայթելու են. ասոր համար կ'երթան դրամատուները պահ տուած գումարները ետ կ'առնեն. որով դրամատէրին ուրիշին փոխ տալու համար արամադրած դրամին քանակութիւնը հետզհետէ կը նուազի : Միւս կողմէ՛ ճարտարարուեստով զբաղողները, վաճառականները, շահագէտները՝ որոնք մեծամեծ քանակութեամբ ապրանքի մթերքներ կը պատրաստեն կամ կը գնեն՝ կ'ուզեն ալ աւելի ընդարձակել գործերնին ու մեծցնել շահերնին եւ երթալով մեծաքանակ գումարներ փոխ առնել կը

ջանան : Ասոր իբր հետեւանք դրամը կը սղէ , այսինքն , կարճ պայմանաժամով (մէկ շաբաթէն մինչեւ երեք կամ վեց ամիս) փոխ տրուած դրամին տոկոսը կը բարձրանայ : Տենդը երթալով կ'աւելնայ ու բախտախնդիր կամ անբարոյական շահադէտեր իրապէս ունեցած հարստութիւններուն քանի մը պատիկը աւելի դրամ փոխ կ'առնեն : Վարկը շատ ձգտած կ'ըլլայ , եւ 10 հազար ոսկի դրամագլուխ ունեցող հաստատութիւն մը 2 կամ 300,000 ոսկի պարտք կ'ունենայ վճարելիք՝ ի փոխարէն շահադիտութեամբ գնուած ապրանքներու :

Տոկոսի սակին այս բարձրացումը խիստ վտանգաւոր է շահադէտներուն . անոնք երբ ապրանք գնել սկսան՝ տոկոսը 2 կամ 3 էր : սակայն երբ երթալով կը բարձրանայ ու կը հասնի մինչեւ 8 կամ 9 (նոյն իսկ 18էն 24) շահադէտերը կը տեսնեն որ գնած ապրանքնուն ընելիք շահերնուն գրեթէ ամբողջութիւնը տոկոսի պիտի տան , միւս կողմէ ալ իրենց դրամաբուրդները՝ առնելիքին ետ պահանջելով , կ'ստիպուին ի վերջոյ ունեցած ապրանքնուն մէկ մասը ծախել՝ վճարելու յանձնառութիւննին կատարելու համար :

Քանի մը վաճառականներ ասանկ ծախել սկսելնուն պէս՝ նոյն ապրանքէն ունեցողները՝ ամէնքն ալ իրար կ'անցնին՝ գիները շատ չիմկած ձեռքերնին գտնուած ապրանքները ծախելու համար : Այն ատեն յառաջ կուգայ ծախելու շտապում մը եւ հասարակութիւնը ամենացած գիներով միայն կը հաճի գնել : Գէշ շահադէտները անկարող կ'ըլլան իրենց վարկը պահելու , որովհետեւ եթէ ունեցած ահագին մթերքը մեծ մլաստով մը ծախեն՝ իրական դրամագլուխնին չի բաւեր յառաջ եկած մլասը գոցելու : Այսպէսով չեն

կրնար ստորագրած թուղթերուն վճարումները օրին կատարել եւ կը դադրեցնեն վճարումնին , այսինքն կը սնանկանան :

Նոյն շահադէտներուն հետ գործ ընողներուն համար շատ ցուալի բան է այս , (օրինակի համար գործարաններու պետերը որոնք սպառիկ ապրանք ծախած էին սնանկին), ունեցած առնելիքնին ամբողջովին չեն կրնար դանձել , եւ եթէ երբէք իրենք ալ նոյն ապրանքները պատրաստելու համար ուրիշէն զըրամ փոխ առած էին , իրենք ալ վճարումնին կը դադրեցնեն , զարկի անկումը կը տարածուի այսպէս , եւ այն տուներն իսկ , որոնք դրամագլուխնուն համեմատութեամբ միայն դրամ փոխ առած էին , սնանկանալու վտանքին կ'ենթարկուին :

Առեւտրական սազմապ . — Իւրերու այս վիճակին առեւտրական սազմապ կ'ըսեն : Այդ ժամանակամիջոցին գիները կը կտրին , վարկը կ'իյնայ , ձեռնարկները կը կասեն :

Երբ տաղնապը տեղի կ'ունենայ , ամէն բան կը փոխուի . Ա՛յ մէկը նոր ծրագիր մը առաջարկելու համարձակութիւնը չունենար , նոր առեւտրական ընկերութիւն մը կազմելու չձեռնարկել , որովհետեւ ամէն մարդ տագնապի մէջ է արդէն , առաջուրնէ իսկ ստանձնած յանձնառութիւնները կատարելու անկարող :

Տենդը կը կասի , եւ շատ անգամ յայտնի կ'ըլլայ որ ամենամեծ շահեր սպասուած ձեռնարկները անհետեւ թաւաքու են լոկ : Երկաթուղի մը շինել կ'առաջարկուէր անանկ տեղ մը ուր փոխադրելիք ապրանք չկայ . հանք փորել կ'ուզուի ուր ո՛չ հանքածուխ ,

ո՛չ մետաղ գոյութիւն ունի. նաւեր կառուցանել կ'աշխատէին՝ որոնք կարող չեն ջուրին վրայ ծփալու : Բոլոր այս ծրագիրները մէկդի կը թողուին և անոնց համար վատնուած գրամը վրայ կ'երթայ :

Այս անկումին հետեւանքով չէ թէ մինակ այդ ձեռնարկներուն մասնակցողները կը սնանկանան, հապա անոնց համար աշխատող բոլոր գործաւորներն ալ պարսպ կը մնան. լաւ խորհուած ձեռնարկները րնականարար կը շարունակուին և ատեն մըն ալ գործ կը հայթայթեն կարգ մը աշխատաւորներու : Սակայն ասոնք ալ կամաց կամաց կ'աւարտին և մէկը չի համարձակիր նոր ձեռնարկի մը վրայ խօսելու : Ամէն մարդու աչքը սարսափած է իրարու յաջորդող այդ վիճակներէն : Երբ կարգ մը վաճառականներ այդ վախը ունենան, մնացած բոլորն ալ վախ կ'զգան. առուտուրի մարդիկը ոչխարի կը նմանին, ասանկ գործերու մէջ միշտ իրարու հետեւելով գործ կը տեսնեն : Մէկ կամ երկու տարուան մէջ երկաթին, ածուխին, փայտին եւայլնի գինները խիստ վար կ'իյնան, շինուածանիւթեր հայթայթողները ամէնն ալ մեծամեծ վիճակներ կ'ընեն և ահագին թիւով գործաւորներ պարսպ կը մնան : Աշխատաւոր դասակարգը ծախքերը կը նուազեցնէ և ընդհանրապէս պարանքներուն գինները կ'իյնան : Առուտուրը կը քիչնայ, շատերը աղքատութեան մէջ կ'իյնան կամ խնայած գրամին կը ծախսեն :

Իրերու այս վիճակը երկու կամ երեք տարի կը տեւէ, մինչեւ որ շահագէտները մոռնալ կ'սկսին գլուխնուն եկածները և կամ նոր սերունդ մը հասնելով, անգիտակ անցեալին, նորանոր շահեր տեսնել կը կարծէ : Այդ ժամանակամիջոցին ծախքեր-

նուն աւելի եկամուտ ունեցող հարուստները աւելորդ դրամին դրամատուն յանձնած կ'ըլլան. վաճառականներն ալ պարանքի մթերքնին ծախելով փոխարժէքը նորէն դրամատուն կը յանձնեն : Այսպէսով դրամագլուխները կը շատնան և սոկոսի սակը կը նուազի. ժամանակ մը ետքը դրամատէրները հարկ կը տեսնեն քովերնին դիզուած գումարները ուրիշներուն փոխ տալ, որով վարկը կը բարւոքի : Այսպէս է որ կ'սկսի վարկի նոր շրջան մը, որու պիտի հետեւի առաջուան վիճակը :

Առեւտրական ցագնապները պարբերական են. — Շատ օգտակար բան մը պիտի ըլլար քրեւտրական տենդի մը կամ տագնապի մը մտալուտ լինելն գուշակել, սակայն անկարելի է առաջուընէ վստահօրէն գիտնալ այդպիսի բան մը : Ամէն տեսակ պատճառներ, — պատերազմ, բարեփոխումներ, նոր գիւտեր, առեւտրական դաշնագրեր, լաւ կամ գէշ հունձք, ևլն. — կրնան առուտուրի ընթացքը փոփոխել : Սակայն զարմանալի է տեսնել որ գրեթէ տաս տարին անգամ մը առեւտրական տագնապ կը պատահի : ԺԸ. դարուն մէջ, ուր առուտուրը այսօրուանինէն տարբեր էր. առեւտրական տագնապներ տեղի ունեցած են 1753ին, 1763ին, 1772ին կամ 1773ին, 1783ին, և 1793ին : Իսկ անցեալ դարու մէջ առեւտրական տագնապներ եղան 1815ին, 1825ին, 1836-39ին, 1847ին, 1857ին, 1866ին եւ դուցէ 1876 կամ 77ին ալ տեղի ունենար, սակայն Ամերիկայի կառավարութիւնը կարողացաւ առաջքն առնուլ :

Այս տասը տարուան մէջ վարկի երեւէջները կա-

րելի է սապէս պատկերացնել, — Առաջին երեք տարիներու մէջ առուտուրը դանդաղ կ'ըլլայ, գործերը կը նուազին, գիները կ'իյնան, շահերը կը քիչնան, աղքատութիւնը կը տիրէ: Յետոյ կուգան երեք տարի, որու միջոցին առուտուրը կամաց կամաց կը զարգանայ, գիները կը բարձրանան չափաւոր աստիճանով մը և վարկը կը բարւօքի. ասոնց կը յաջորդեն քանի մը տարիներ չափազանցուած առուտուրի, որ « տենդի » մը երեսոյթը կ'առնէ և ասոր կը յաջորդէ տագնապը:

Տ Ա Ր Ի Ն Ե Ր									
1	2	3	4	5	6	7	8	9	10
ԴԱՆԴԱՂ	ԶԱՓԱԻՈՐ	ԾԱՅՐԱՅԵՂ	ՏԵՆԴ		ԱՆԿՈՒՄ				
ԱՌՈՒՏՈՒՐ	ԱՌՈՒՏՈՒՐ	ԱՌՈՒՏՈՒՐ	ՏԵՆԴ		ՏԱԳՆԱՊ				

Պէտք չէ ենթադրել որ իրական կեանքի մէջ ասանկ կանոնաւոր կերպով տեղի կ'ունենան. երբեմն այս շրջանը ինը տարի, կամ նոյն իսկ ութը տարի կը աւելէ՝ տասնի տեղ, երբեմն ալ մանր տագնապներ տեղի կ'ունենան ընդմիջաբար:



Հ Ա Ր Յ ՈՒ Մ Ն Ե Ր

- Ո՞վ պիտի սրբագրէ արանց ճակատագիրը:
- == Կինը:
- Ի՞նչ է ողորմութիւնը:
- == Մարդուս Աստուծոյ նմանելու միջոցը:
- Ո՞վ քեզի պիտի օգնէ:
- == Նախ Աստուած՝ եւ ասպա դու:
- Ո՞վ է արանց անկման պատճառը:
- == Կինը:
- Ինչո՞ւ համար էրիկ մարդիկ այսպէս եղան:
- == Որովհետեւ կիները այսպէս ուզեցին:
- Ի՞նչ է գարունը:
- == Բնութեան ժպիտը:
- Ի՞նչ է ամառը:
- == Երիտասարդութիւնն է հրատապ:
- Ի՞նչ է աշունը:
- == Հարսնցու աղջիկ մը՝ որ արգասաւորելու կը պատրաստուի:
- Ի՞նչ է ձմեռը:
- == Հարուստներուն հաճելի ժամանցի միջոցը, երիտասարդներուն ժամադրավայրը եւ աղքատներուն պատուհասը:
- Ի՞նչ է մայրը:
- == Զուկներուն սիրովը մխացող խնկաման մը:
- Ի՞նչ է պատիւը:
- == Դրամագլուխներուն պատուականը:
- Ի՞նչ է աշխատութիւնը:
- == Աստուծոյ առ մարդիկ շնորհած թանկագին պարգեւը:

- Ի՞նչ է կեանքը առանց աշխատութեան :
- Ծովին վրայ շիւղ մը որ կը տատանի առանց նպատակի :
- 'Իրամն ի՞նչ բանի պէտք է :
- Մինչեւ իսկ Աստուծոյ մօտենեալու համար :
- Ի՞նչպէս կը ճանչցուի կատարեալ մայր մը :
- Դիտէ՛ իր զաւակները :
- Աղջիկ մը ի՞նչպէս պէտք է շարժի :
- Նոյն իսկ առանձին գտնուած միջոցին , որպէս թէ՛ հարիւրաչեայ Արգոս զինքը դիտէր :
- Ո՞րն է պատուական երիտասարդը :
- Նա՛ որ զինքը կը բազմապատկէ հետզհետէ նիւթապէս եւ բարոյապէս :
- Ի՞նչ է գինետունը :
- Գեհեհի մանրանկարը :
- Ի՞նչ բանի կը ծառայէ գինետան կեանքը :
- Վախճանդ փութացնելու :
- Ինչո՞ւ կիներուն մէջ ոճրագործները քիչ են :
- Որովհետեւ նուազ չար են :
- Ո՞րն է իմաստուն այրը :
- Նա՛ որ քիչ շատ կնոջը կը համակերպի :
- Ի՞նչ է գիրքը :
- Անցելոյն հայելին , ներկային մխիթարն , ապագային կտակն եւ ամէն ատեն միայնութեան ճշմարիտ բարեկամը :
- Աչքերուն ո՞ր գոյնը սիրուն կը գտնես :
- Յորենագոյն դէմքի վրայ կապոյտ աչքերը , ինչպէս լուսինը թուխ ամպերուն մէջ :
- Ի՞նչ է մահը :
- Փոխադրութիւն մը դէպ ի ուրիշ կեանք :

ԲՍՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Օր մը Արարիչը ուղեց հանդէս մը տալ իր կապոյտ ապարանքին մէջ : Բոլոր առաքինութիւնները հրաւիրուեցան , Շատեր պատասխանեցին այդ հրաւերին , մեծերն ու փոքրերը : Փոքր առաքինութիւններն աւելի ակտիվութիւնով ու աւելի համակրելի էին՝ քան մեծերը . բայց ամենքն ալ շատ գոհ կ'երեւային եւ զուարթօրէն կը խօսակցէին , ինչպէս կը վայլէ մտերիմ եւ նոյն իսկ արեւակից անձերու : Բայց ահա Արարիչը նշմարեց երկու գեղեցիկ տիկիւններ , որոնք կարծես չէին ճանչնար զիրար :

Տանտէրը բռնեց այդ տիկիւններէն մէկուն ձեռքէն եւ տարաւ միւսին քով :

« Բարեգործութիւն » ը , ըսաւ առաջինը ցոյց տալով . — « Երախտագիտութիւն » ը , աւելցուց միւսին : Երկու առաքինութիւնները չափազանց զարմացան : Աշխարհս աշխարհ ըլլալէն ի վեր , որ բաւական ժամանակ է , անոնք առաջին անգամ ըլլալով իրարու կը հանդպէին եւ զիրար կը ճանչնային :



ՓԵՏՐՈՒՍՐ ԱՄԻՍԸ

Սիրուն աւանդավէպ մը՝ որ Թէմիզի մուշապատ ասիերուն վրայ ծնունդ առած է , հետեւեալը կը պատմէ :

Փետրուար ամիսը իր երիտասարդութեանը, այսինքն աշխարհի սկզբնաւորութեանը, մոլեգին խաղամոլ մ'էր. թէեւ միշտ կը կորսնցնէր, բայց շարունակ կը խաղար :

Օր մը, երեք չորրորդ մասամբ կործանած, վերջին խաղ մը եւս սկսաւ իր սովորական խաղակիցներուն հետ, որոնք բնականաբար իր Յունուար եւ Մարտ դրացիներն էին :

Այս վերջինները նորէն շահեցան :

Ա'լ դրամ չունենալով խաղի մէջ դնելու համար, խեղճ Փետրուար անոնց իւրաքանչիւրին մէյմէկ օր տուաւ :

Եւ ահա՛ թէ ինչո՞ւ Յունուար եւ Մարտ ամիսները երեսունը մէկ օր ունին, մինչ Փետրուար քսանըինը կամ քսանը ութը, տարիներուն համեմատ :

ՃԱՆՃԱՄՊԱՆ ՈՉ—ԹՈՒՆԱՒՈՐ ԹՈՒՂԹԸ

Ահա՛ թէ ինչպէս կրնանք պատրաստել ճանճասպան թուղթ մը, որ ճանճերուն համար վնասակար, բայց մարդոց համար անվնաս ըլլայ :

Գառն քուստիայի (կուստիա ամառա) կեղեւի տաշուք առէք եւ լաւ մը խաշեցէք, յետոյ անոր վրայ աւելցուցէք բեւեկինի խէժ (քիւրկմեքի) 300 մաս եւ 150 մաս ալ խաշխաշի հունտի իւղ, և 60 մաս ալ մեղր : Այս խառնուրդը թանճը խաւով մը տարածեցէք հաստ թուղթի վրայ, եւ այն ատեն կ'ունենաք ճանճասպան թուղթը :



ԱԿՆՑԻ ԳԱԲԻԿ ԱՂԱՆ

ԸՆՏԱՆԵՕԲ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԻՆ ՀԱՆԵԼ ԿՈՒՏԱՅ

Ազնիւ ընթերցողները կ'իշխեն թէ նախորդ տարի միեւնոյն էջերուն մէջ գրած էինք սոյն խորագրով մանրավէպը, և զանոնք թողած էինք լուսանկարչատան մէջ, որ վարպետը զեկուցած էր թէ «Լմացաւ», և ահա՛ այժմ կ'շարունակենք միեւնոյն տեղէն :

Բայց, այս առթիւ պիտի փութանք քանի մը հակիրճ տեսութիւններ ընել մեր սոյն գրութեան շուրջը դարձած զանազան կարծիքներուն դէմ, որ ոմանց ջիղերը գրգռած է, ոմանց զուարճութիւն պատճառած է և ոմանց ալ բանասիրական պաշար հայթայթած է : Այսինքն իւրաքանչիւր ընթերցող իր հասկցած եղանակին ու ճաշակին համեմատ հետեւութիւններ հանած է :

Մինչդեռ մեր գրելու նպատակն եղած է յուր բարքերը զարնել, լաւագոյնները վեր հանել և միեւնոյն ատեն գաւառաբարբառի մը ոճը ներկայացնել բաբանասէրներու : Եթէ ծաղրանքի իմաստով չառնուին անոնք և մանաւանդ դիտուի Գաբիկ աղային բարեմասնութիւնները՝ իրբեւ ծնողք, ընտանեացը պատուոյն հանդէպ ունեցած նախանձախնդրութիւնը,


քրիստոնէի մը վայել բարեպաշտութիւնը, տիպար խանութպանի արժանիքը, եւայլն, եւայլն, ա՛յն ատեն կը հասկցուի մեր գրութեան նպատակը :

Իսկ անոնք որ երգիծանքի իմաստով կ'առնեն ու մեզ դատափետելու կ'ելլեն, այսպիսիները չարաչար կ'սխալին, որովհետեւ այն արհամարհական լուտանքները պէտք է թափեն զաւելտաթերթերու դէմ, որոնք այնքան խեղաթիւրուած բառերով ու կոշտ աղճատաբանութիւններով իբրեւ Ակնայ բարբառ կը մատուցանեն ընթերցողին : Մանաւանդ յանձին Ճանիկեանի, որ այն դաւառաբարբառին վրայ ստուար հատոր մը գրած է, և նոյն իսկ Իգմիբեանց մրցանակին արժանացած է. մինչդեռ մենք շուրջ 16 տարիներէ ի վեր զանազան թերթերու և գլխաւորաբար Պէրպլեբեան Տարեցոյցին մէջ այնքան հիւթեղ, իմաստալից և ճշգրիտ բառերով յողուածներ ու մանրավէպեր գրելով հանդերձ, մեզի գրչածայր մը անգամ նուիրող չէ՛ եղած : Եւ երբ այս ամէնուն վրա աւելցնենք նաև գրիչը բռնել չգիտցող երեկուան խլէզներուն գրելու մարմաջը, որ մեր 4—5 տարի առաջուան գրած ու հրատարակածները բառ առ բառ կ'օրինակեն և հանապազօրեայ թերթերու մէջ կ'արտասպեն, ստորագրութիւննին հրատարակուած տեսնելու փառքէն չլ'որած :



Ա Կ Ն Ց Ի Գ Ա Բ Ի Կ Ա Ղ Ա Ն

ԸՆՏԱՆԵՑՕՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԻՆ ՀԱՆԵԼ ԿՈՒՏԱՅ



Տեսարանն է լուսանկարչատունը

— Մատէմ քի լմնցաւ նը, սահաթ մի ն'էռէջ սըվկի ճիհէլլէմ լընինք, կ'ըսէ Գաբիկ պղան իրեններուն :

— Թէեւ հիմա աւարտեցաւ, բայց քիչ մը քովի սենեակը սպասեցէք որ նայինք թէ կառուփնիդ յաջողեցա՞ւ, կը պատասխանէ լուսանկարչին վարպետը :

— Աս հէրիֆը ա'ս կիտիչէօվը գիտէս թը ասէօր մեր եախտն չի տի ձգէ. ո'ւր ալ կար իւր էկանք ֆէօս ինկանք, տէ՛ քալեցէք օթթի (միւս) օտան, կ'ըսէ, և ընտանեօք կ'անցնին սպասման սրահը :

Նանըֆար խաթունը, որ մինչեւ այն պահուն համբերութեամբ լռած էր ամուսնոյն քիչ մ'առաջուան անպատեհ վարմունքին դէմ, և մեծ փոթորիկի մը մօտալուտ պայթիւնը նշմարելով անոր դէմքին վրայ, միջադէպը խափանելու մտածուածով, պայքարին նախայարձակն ինք կ'ըլլայ :

— Էս մալիս խույը գիտէյի ըմայ՝ ճիփ (բոլորովին) ա'ս տէրէճէն լընել տ'ալ չի գիտէյի. տասը տարվանը մէջ չէօրս տըպայ (անգամ) կուլլի իւր տանը դռնէն հիրաց դիւրս կ'ելլինք, էմմէն տպուկին ալ քթնէ՛ս իւ բերնէս բերիբ :

— Տա'հա լեղիւ ալ իւնիս իւ կու խօ՞րըթէս, էլ-

լէհէլէմ (կարծեմ) հէրիֆը բանիտ էկաւ . խաթիւն , կ'պատասխանէ Գարիկ աղան , բարկութիւնը գագաթ- նակէտին հասած :

— Մըրա՛յ , մըրա՛յ , հըմայ էրկինքէն կրայ (կը- րակ) տի թափի , ինտէօ՞ր ալ բերանդ վրայ կ'երթայ . հէ՛չ իւր չէ նը՝ մասիւմներէն իշկէլ արէ իւր պօյէր- նիս օնցէրին :

— Զօ՞ր իւր (քանի որ) գիտէս թը ձէռվիս իւ օտվիս քէլէփչէնէ նը՝ բէրնիտ էկածը թէօղ տիւր , հէլպէ՛տ օղ մնացողին ասի տիւն տ'երթա՛նք :

— Տիւն էրթանք նը ի՞նչ տի կրաս անէր , լսէօղը քեզի բան տ'ըսէ :

— Շա՛ն տղայ կնիյ , ձանըդ խըռտիւկդ քաչէ , զորէ՛մ լէթձէս կու դառնայ , հըմայ տ'էլլիմ տ'երթամ ան քաչած թափսիրը տ'առնիմ տի խըղտիւտիմ (պա- տըռտեմ) , քէզ ալ աքինս տակը տ'առնիմ իւ ըռէս- վա տ'անիմ , իւր հէրիֆը էկէր թիւնչտ (թուչ) կու շոյէ ու դիւն տեղէտ չէս էրրըար (շարժիր) : Վէօ՞ր էրիյմարդ իմ տեղ ս'իւր լընի նը բերանը տի կղպէ :

— Տէ՛ , տէ՛ , փաթուռավա (չափազանցել) չ'ուզէր , քանի մի տըպայ թասփիր հէնէլ չէյի տըվէր իւր գիննայի թը ի՛նչ տի գար գխլիւս . էղազ ն'ալ պարի բա՛ն մի լընի . մատը թիւնչիս դիմնելէօվ կէսըս գնա՛ց :

— Զէհէ՛ր կէս տ'ալ տանէր նը աշվիտ տի գօցէի՛ր :

— Հէմ կօյն'էր ըսիմ (կեցիր որ ըսեմ) , իսմէ ի՞նչ կ'ուզէս : Մարդիւն քօվ ն'իքէն կատիւ կըյեցար , իւ հըմայ էրիյմարդիւթիւնդ բռնեց . ի՛նչ տըսէյիր նը թօղ անէօր ըսէյիր :

— Սա էքսիւկէթ էկները հետերնիս չելլէյին նը՝ էս գիտէյի թը ի՛նչ տ'անէյի . տատին տըվան գլօխ ն'է էղեր :

— Հէ՛չ բան ալ չէյիր կրար անէր . դիւն սա՛լթ իս կրաս գըզէր :

— Ի՛նչ տանէյի՛ . գիննայի իւր իրէք տարի բռան- կան տ'երթայի նը , կինէ բարէօվ մի տի , տըպըրկէյի :

— «Եթէ՛ր» դիր անիւնը , տէքսիւզ տէքսիւզ խօ- րըթէլ չուզէր . բռանկան էրթալիւ հաֆաս իւնիս ն'ը , մարդը ներս ն'է , դնայ պօղազը պըլլըվէ :

Այր ու կին իրարու հասցէի ուղղած սոյն անձա՛հ վէճը շատ աւելի տխուր վախճանի մը պիտի յանգէր , եթէ անակնկալ մը վրայ չհասնէր . որովհետեւ Գա- բիկ աղային նախանձէ մղուած բարկութիւնն այն կէտին հասաւ որ , ա՛լ ըրածին գիտակցութիւնը կո- րուսած , սրահին մէջտեղը՝ սեղանին վրայ ի տես դըռուած մեծագիր ալպօւը յափշտակելով խոյացած էր կնոջը վրայ . առանց խնայելու նոյն իսկ աղոցը յա- ըուցած ահ ու դողն ու սրտայոյզ աղաչանքները , որ կ'զոչէր :

— Յը՛յնօղիդ իւ վաստըկօղիդ տա՛տին իւ մօրը... ըսելով՝ ալպօւը պիտի իջեցնէր նանըֆար խաթուենի գլխուն , բայց դուրսէն եկող ոտքերու աղմուկէն ու դռան զանգակին ձայնէն սթափելով , ետ քաշուեցաւ , և զարմանք մը ամէնուն դէմքը պատեց , որ ծանօթ անձերու խուռն բաղմութիւն մը սրահին դռնէն ներս կ'մտնէին :

Այս նորեկներն ալ Ակնցի Հողբացիկոնց ընտա- նիքն էին , որ կը բաղկանային այր , կին , մեծ մայր , երկու մանչ եւ երկու աղջիկ զաւակներէ , որոնք Գա- բիկ աղային հետ հեռաւոր խնամութիւն մ'ալ ունէին , եւ անոնց պէս՝ առաջին անգամ ըլլալով , զուգադի- պարար նոյն օրն եկած էին ընտանեօք լուսանկար- նին հանել տալու :

լէհէլէմ (կարծեմ) հէրիֆը բանիտ էկաւ խաթիւն, կ'պատասխանէ Գարիկ աղան, բարկութիւնը գագաթնակէտին հասած :

— Մըրա՛յ, մըրա՛յ, հըմայ էրկինքէն կրայ (կըրակ) տի թափի, ինտէօ՞ր ալ բերանդ վրայ կ'երթայ . հէ՛չ իւր չէ նը՝ մասիւմներէն իշկէլ արէ ի՛ր պոյէրնիս օնցէրին :

— Զօ՛ր իւր (քանի որ) գիտէս թը ճէովիս իւ օտվիս քէլէփչէնէ նը՝ բէրնիտ էկածը թէօղ տիւր, հէլպէ՛տ օղջ մնացողին ասկի տիւն տ'էրթա՛նք :

— Տիւն էրթանք նը ի՞նչ տի կրաս անէր, լսէօղը քեզի բան տ'ըսէ :

— Շա՛ն տղայ կնիյ, ծանըդ խըռտիւկդ քաչէ, զօրէ՛մ լէթճէս կու դառնայ, հըմայ տ'էլիմ տ'երթամ ան քաչած թափօսիը տ'առնիմ տի խըղտիւտիմ (պատըռտեմ), քէզ ալ աքինս տակը տ'առնիմ իւ րուէսվա տ'անիմ, իւր հէրիֆը էկէր թիւնչտ (թուշ) կու շօյէ ու դիւն տեղէտ չէս էրրար (շարժիր) : Վէօ՞ր էրիյմարդ իմ տեղ ս'իւր լընի նը բերանը տի կղպէ :

— Տէ՛, տէ՛, փաթուռավա (չափազանցել) չ'ուղէր, քանի մի տըսայ թասփիր հէնէլ չէյի տըվէր իւր գիննայի թը ի՛նչ տի գար գիւլիւս . էղազ ն'ալ պարի բա՛ն մի լընի . մատը թիւնչիս դիմնելէօվ կէսըս գնա՛ց :

— Զէհէ՛ր կէստ'ալ տանէր նը ալվիտ տի գօցէի՛ր :

— Հէմ կօյն'էր ըսիմ (կեցիր որ ըսեմ), իսմէ ի՞նչ կ'ուղէս : Մարդիւն քօվ ն'իքէն կատիւ կըյեցար, իւ հըմայ էրիյմարդիւթիւնդ բռնեց . ի՛նչ տըսէյիր նը թօղ անէօր ըսէյիր :

— Սա էքսիւկէթէկները հետերնիս չելլէյին նը՝ էս գիտէյի թը ի՛նչ տ'անէյի . տատին տըվան գլօխ ն'է էղեր :

— Հէ՛չ բան ալ չէյիր կրար անէր . դիւն սալթիս կրաս գըզէր :

— Ի՛նչ տանէյի՛ . գիննայի իւր իրէք տարի բռանկան տ'էրթայի նը, կինէ բարէօվ մի տիտըպըրկէյի :

— «Եթէ՛ր» դիր անիւնը, տէքսիւզ տէքսիւզ խօրըթէլ չուղէր . բռտնկան էրթալիւ հաֆաս իւնիս ն'ը՝ մարդը ներս ն'է, գնայ պօղազը պըլլըվէ :

Այր ու կին իրարու հասցէի ուղղած սոյն անձահ վէճը շատ աւելի տխուր վախճանի մը պիտի յանգէր, եթէ անակնկալ մը վրայ չհասնէր . որովհետեւ Գարիկ աղային նախանձէ մղուած բարկութիւնն ա՛յն կէտին հասաւ որ, ա՛լ ըրածին գիտակցութիւնը կորուսած, սրահին մէջտեղը՝ սեղանին վրայ ի տես դրուած մեծագիրը ալպօւը յափշտակելով խոյացած էր կնոջը վրայ . առանց խնայելու նոյն իսկ տղոցը յարուցած ահ ու դողն ու սրտայոյզ աղաչանքները, որ կ'ըոչէր :

— Յըյնօղիդ իւ վաստըկօղիդ տա՛տին իւ մօրը... ըսելով՝ ալպօւը պիտի իջեցնէր նանըֆար խաթուին գլխուն, բայց դուրսէն եկող ոտքերու աղմուկէն ու դռան զանգակին ձայնէն սթափելով, ետ քաշուեցաւ, և զարմանք մը ամէնուն դէմքը պատեց, որ ծանօթ անձերու խուռն բազմութիւն մը սրահին դռնէն ներս կ'մտնէին :

Այս նորեկներն ալ Ակնցի Հողբացիկոնց ընտանիքն էին, որ կը բաղկանային այր, կին, մեծ մայր, երկու մանչ եւ երկու աղջիկ գաւակներէ, որոնք Գարիկ աղային հետ հեռաւոր խնամութիւն մ'ալ ունէին, եւ անոնց պէս՝ առաջին անգամ ըլլալով, զուգարիպարար նոյն օրն եկած էին ընտանեօք լուսանկարներն հանել տալու :

— Բա՛րբիկինն զայ վրանիդ, ըսելով՝ եւ արմանք զարմանքով իրարու երես կ'նային :

— Բա՛րին արեւնիդ՝ լընի, կ'ըսէ Գաբիկ աղան, բարկութիւնը զսպելով ու այլ այլմէ եղած :

Ըստ կարգին կիներն ու դեռուատիներն ալ իրար կը բարեւեն, եւ Հողբացիկոնց Օվընէս (Յովհաննէս) աղան խօսք-գլուխ կ'ըլլայ՝ սապէս .

— Գաբիկ աղա, ասէյ (այսպէս) միթ մի ն'իւնէյիւր նը՝ մեզի ինչի՞ւ էռէլիւց իմաց չարիւր իւր հիրաց գալանք, հէյկիտիսի (երանեի) :

— Տըրիւս ն'իւր ըսիմ նը էս ասէնկ միթ մի չիւնէյի, իւթ օրվանը մէջ սայհմանեցանք : Գիտես թը գիւնն ալ իմ կրակիս էրէցար :

— Հէ՛չ մի հարցնէր . ամիս մի ն'է իւր Ուսկուլը (Իսկուհի իր կինը), գիւրիւս միսը կերաւ թը՝ « Օյասէնք քիւլֆըթօք թասֆիրնին քաշել ին տըվէր, դիւն ալ մերը քաշել տի տաս » , ես ալ ձեռվընիւն զար մնացի, արի չարի էռլիս ձդեցի վ'էկանք Ֆէօս իւր ժըզը կըյեըվին (հանդարտին) :

— Էս ալ ֆինտիրցէօնց կրակին էրէցայ , ա'յնի ատէնկ (ճիշտ այդպէս), ֆինտիրցէօնք թասֆիրնին քաշելին տըվեր տէհի, նանըֆարը իւթօր լըման պուկս (կոկորդ) մտա՛վ թը՝ « Մենք ալ քաշել տանք », հալ պու քի էկէր իւր էռէլիւց գիննայի ասէյ լընէլը նը՝ ատլիւսն տանը դռնէն դիւրս չէյի նէտէր :

— Գաբիկ աղա, վախի՛մ թը գէօրծին մէջ միւշ-կիւլիւթիւն մը կայ :

— Խայի՛ր Օվընէս աղա, միւշկիւլիւթիւն ն'անէ իւր՝ թասֆիր հէնէօղը չափխուռնին մէյ ն'է էղեր . էքսիւկէթէյնէրիւն հետ կու մըյըզտըկայ (քծնիլ) իմ ալ աֆաղաննէրս դառցաւ : Գի՛տէս իւր մէնք ասէյ

բանէրէն հազ չինք անէր . պա՛ խուսուս իմ թէպիյէ-թիս մուղայիր է . անի տըպուկին լէթ չէս կու դառնայ իւ բըրդէրս կու տընկըվի :

— Ատէօր հախին ծառայական ա՛յալ ձէօմէրտիւ-թիւն չիմ կըբար անէր . բանին դէ՛օրը, Ֆախէթ՝ ա՛տ է նը բան մ'ըսէլ չ'է, ատ՝ ըստըմպօլցէօց էտէթ ն'է-լաքին հըլէ՛ (եթէ) կրայ նը թէօղ աշկը (աչքը) ճը-տէ իւր տ'էսնէ թը կէրած հէրգէն (թանցր ապուր) ի'նչ համ իւնի :

— Ես քէզի բան մ'ըսի՛մ, Օվընէս աղա, անէօնց էրէսին տէրին խըզտէր է, թըքնէս նը օրգէվ (անձ-րեւ) կուգայ, դիւն նայէր աշվէտ չէ՛օրս բանաս :

Մի եւ նոյն ատեն՝ սրահին միւս կողմն ալ նանը-ֆար եւ Ուսկուլ խաթուռները տաք խօսակցութեան մը բռնուած էին, կ'արժէ որ քիչ մ'ալ անոնք մտիկ ընենք :

— Իլահի՛մ նանըֆար խաթիւն, ա՛ս մտօքս չէր օսնէր թը ասէօր իրար տի տեսնինք : Ի՛ւր էք իւր օրթան չիկաք, օր մի քըրէքը (պատուել) չէք դնէր իւ դարնիգան (դէպի այն կողմ) գար, ջրի պէս ծառվըցէր էի, քանի Այնէն էկիր նը՝ աս երկու տը-պայ կուլի իւր իրար կուտեսնինք :

— Խապի՛ւլ չիմ անէր՝ Ուսկուլ խաթիւն, դիւն քանի՞ տըպայ մէր ն'էկար . ի'նչ ըսել է թը ձեզ քը-րէքը չինք դընէր, ըմայ (բայց), ինտէ՛օր ըսիմ իւր հասկնաս, տղօս (տղոց) տէրինք, թիւրաքի արիկ (այր) իւնիմ, տանը խէյլէն (հողը) վրաս է, աշ-վիս կու բանամ իւ կու գօցիմ, շարաթ ն'իւնտէ՛օր կ'էլլէ նը չեմ գիննար :

— Ես ալ ատէնկ (այդպէս) իմ իւ բան մ'ալ էվէլ տղօսվէրէօվ (տղաքներով) կիյնինք իւ կէլլինք, օր

ն'ինտէօր իրիկիւ կ'ուլլի, նը չիմ գիննար, անէս տէ-
օէր իւր արեւը մաներ է (արեւը մարը մանել), Ի'նչ
անինք, թող օղը (ողջ) լընին իւ մէր խէյլէն ալ
անէօնք լնին:

— Ատէնկ է' քուրուկ, ըմայ, էկանք իւ կերթանք
օր վ'արեւ մի չի տեսանք: Առտիւն (վաղը = ապա-
գայի ասումով) գլօխնին մէյ մէկ տեղ իւր խօթին
նը մէզ տի մօռնան, Դիւն ճիփ իզմէ էվէլ մօյեը մա-
ղը կու բռէս. տէ' ըլօխ (օ'ն անդը), քիշ մ'ալ մէք
մեզ նայինք, մէզ չիտի շալկին իւ Վէրիւսաղէմ տա-
նին:

— Մէնայ ըլօխ (վերջացուր), սէնքիմ դիւն իս-
մէ էս կու մընաօս, իրենք մարդ թող լընին իւ մէզ
Վէրիւսաղէմ տարազ կ'ուլլին:

— Կ'ըսէս ըմայ՝ սա Ըստըմպօլցօց կթթիկը (կինե-
րը) ինտէօր կ'անին իւր. էք (երբ) տէսնէս նը՝
եայ տանը փէնճիրէն նստէր հօյա կու շինին, եայ
դրասնէրիւն տընվինքը գնացէր մարդ Փասլը կ'անին-
եայ արտըգէօրէր (դարդարուիլ) իւ դուվիք (փողոյ,
ցի նշանակութեամբ) ն'ին ինկէր. գիտէս թը նէ,
տան խըզմէթ իւնին, նէ՝ ալ վըլան իւ կործին:

— Անէօնք վէօօր արած բանին խէլվընիս կու հաս-
նի, Նանըֆար խաթիւն: Կու նայիս իւր էրկիւ էրիյ-
մարթ իւնին՝ իրիյվընէ տընէն ներս կու մըննին, մէյ
մ'ալ առտօնց կու նայիս իւր օնթ (շատ) մի մարդ
դիւրս կ'էլլին: Ելէս խալտինաս (սխալիլ) իւ հար-
ցնէս թը « Գիշերը միսէֆիր իւնէյիք » նը, բերան-
նին կու բանան թը՝ « Բա մեզայ, վայ գլխուս, մի-
սաֆիր ինչո՞ւ պըտօր ըլլան, էրկան պօյլու, սարը
պըյըլը տէլի խանլըն կընքըհօրս խալֆան էր, խում-
բալի վրայ էթինէ տօլղուն մը կար նէ՝ մեր առջի քի-

բաճիյին կէնճին թէյ յգէին տղան էր. չաթըլս ըքվիլի
զայիֆ մը կարնէ Սարըեարի տանտէրերնուս տղան
էր, ան մէկալ էթինէ տօլղուն քիպար պաքըլը մըն
ալ կար նէ՝ ա'ն ալ մեր էտիի անդամուն Արմաշ գա-
ցած տարինիս առջեւի առապանիս էր: Ամէնն ալ ճան
ճիյէր էն. օղ ըլլան մեզի չեն մոռնար տէ՝ սանկ
արատապիր կուգան կօր: Հէմ գաթը Աստուած պալ-
սութիննին չիտայ, մենք էվվէլտէն պէրի փէք էթ-
րաֆ թարաֆլը էնք: Աօթ չէ՝ եայ, սօյէրնիս սօփեր-
նիս փէք շատ էն »:

Բերաննին բանաս նը՝ ալ չէօ կրար գօցէր, գի-
տէս թը տիլ օթի ին կէրէր: Մեր տիւն ն'իվէր էրիյ
մարթ մի գայ նը՝ չի գիտինք թը վէօօր ծակը տի մըն-
նինք, անէօնք ալ ալվընին դէօռ նէ թը՝ հըմա վէօօր
էրիյ մարդը տիգայ:

— Չըսեօ իւր միննակը (անոր համար) առտօնց
իւր եաթախնիւն կ'ելլին նը այնային էռէչքը կ'օսնին
սահաթնէրով դան չին էրթար, էրէսնին ֆութուռա-
օվ կու մալակունին, ըքվինին քէմուրով կու սեցը-
նին. պուկունքնին (չըթունք) գալիպառտիօվ կու կար-
մըրցնին իւ օրը տըպայ մին'ալ լաթ կու փոխին: Բա-
րի՝ իւր մէր էրկըտաք ն'ալ վախտիւն կուգային իւ
ֆէօս կու մնային:

- Հա՛ իրաւ, բարէօվ մի'տ ս'ինկաւ:
- Խէ՛րը լընի, Ուսկուլ խաթիւն:
- Խէր ն'ալ խօրըթայ է՛, մէկըլօր (անցեալ օր)
լսեցի նը շատ խնտացի, մըտօք ս'ըսի թը Նանըֆար
խաթիւնը տեսնիմ նը աշկը լիւսիմ:
- Բիէ՛ (քա) ինչը՞:
- Օղըտան Խզարենց Աբիկ աղային մեզ տղիւն՝
Ուսկիին տի նշանէք էղեր:

— Ուսկի՞ լսէցիր, ատենկ խօրըթայ մի չիկայ :
 — Իսմէ՞ կու պահէս, էմմէն տէզ թէգէթիւռ կ'ա-
 նին, էլէմ աշխարք գիտին. լսեցի նր շատ խնտացի :
 — Լընի նը ինչի՞ տի պահիմ, թչ'է ալ նը՝ Աս-
 ուազ լսէ ձանըդ :
 — Մէռայ ըլօխ. խէյիրլիւ է նը՝ իշալա՞ կուլլի
 իւ մենք ալ շինահալէօրէլիւ (չնորհաւորել) կուգանք :
 — Խէյիրլիւ բանին իմ նէֆէսս թէզ կու բռնէ,
 տի տեսնես իւր կիւմէն (յոյս) չարածը կ'ուլլի :

* * *

Լուսանկարչապետը Գարիկ աղային յարուցած աղ-
 մուկը լսելէն ի վեր, աշխատանոցը հիւրանոցին հետ
 հաղորդակցութեան դնող դրան ետին դարանակալ
 եղած՝ հիւրանոցին մէջի խօսվաւորքը մտիկ կ'ընէր,
 որ արդէն բաւական երկար տեւած էր, եւ խորհելով
 որ այլ եւս գինքը հետաքրքրող նիւթ մը չկայ, հե-
 տեապէս նախորդ յաճախորդները ճամբել ու նորեկ-
 ներն ընդունելու համար, դուռը բանալով՝ կ'խառ-
 նուի մէջերնին. նորեկները կը բարեւէ, եւ խօսքը
 Գարիկ աղային ուղղելով՝

— Բարեկամ, ձեր կռուփը շատ լաւ յաջողած է,
 ուստի ալ կրնաք մեկնիլ : Միայն թէ պիտի հաճիք
 հարիւր զուրուշը կանխիկ վճարել :
 — Կըտերը հըմայ տի ցնձանք՝ ըսել կ'ուզես, կը-
 սէ Գարիկ աղան ծանր շեշտով մը, լաքին տիւն ալ
 ինձի ֆըթիլ մի տի տաս իւր, անէօր մէջ իշար ա-
 րած տիլիս, մաթլուպաթըթ եէք թախտատան ախս
 անելըդ իւ թասֆիրները վէ՞օր օր տալըդ :
 — Անշո՛ւշտ, անշուշտ, ահաւասիկ ընկալագիրը,
 գրած եմ թէ՛ 15 օրէն պիտի ստանաք :

— Հըմայ բան մ'ալ մնաց, կ'աւելցնէ Գարիկ ա-
 ղան: Եանիեայ ըսել տ'իւզիմ թը սա՛ մեր եկէն ա-
 ղային քուլֆըթիւն (ընամանեացը) ալ թասֆիրը տի
 հէնէս, լաքին անէօնցին ն'ալ հիրաց տի տաս, սէն-
 քիմ ըսել ս'անէ թը անէօնք ալ 15 օրէն տի գան
 տ'առնին, չիւնքիմ թասֆիրնիս իրարիւ հետ տէկիւ-
 չիւկ տ'անինք :
 — Շատ լաւ, թող այնպէս ըլլայ, մեր միակ փա-
 փաքը մեր յաճախորդները գոհացնելն է, կ'յարէ վար-
 պետը :
 — Էլէմօտ (երանի թէ) էմմէն բանի մէջ ալ ա-
 անէնկ լընիք, կ'քըթմիջէ Գարիկ աղան, ե. իրենները
 առջեւը ձգելով՝ « Մնաք բարով » ի արարողութիւն-
 ներէն ետք, կ'մեկնին :

ՔԻՉ Մ'ԱՆ ԵՐԹԱՆՔ ԽՉԱՐԵՆՅ ԱՐԻԿ
 ԱՂԱՅԻՆ ՏՈՒՆԸ

Նոյն կիրակի երեկոյին, Արիկ աղայենք ճաշերնին
 ըրած ու խմբովին նստած կ'իտուակցէին. Արիկ աղան
 գրպանին ժամացոյցը կ'նայի եւ փոքր զաւկին դառ-
 նալով՝
 — Տէ՛ հայտի աղաս, գնա՛ աղօթքըթ արէ իւ
 պառկէ, գօրէմ առտիւն էրկուշարթի է, թէզ տ'ել-
 լէս :
 Կիրակոս ծնօղացը ձեռքերնին կ'համբուրէ ե « Գի-
 շեր բարի » ըսելով կ'մեկնի :
 Արիկ աղան ալ լուրջ կերպարանք մ'առնելով՝ կը

դառնայ մեծ գաւկին .

— Ուսէ՛՛փ , տղաս՛՛ իս մտիկ արէ տ՛ըսիմ , հըմայ միւհհիւմլիւ բանի մի վրայ տի խօրըթիւմ հետդ , կ՛ուզիմ իւր խօրըթանէրս բարէօվ մտիկ անէս իւ ակնճի էտի չի նետես . զօրէմ անէնկ մատտէի մի վրայ տի խօրըթիւմ իւր էմմէնիւս ալ հախին խայրիլիւ տ՛իլլի :

Յոփսէփ հօրը այս յառաջարանէն խնդիրը քիչ մը կուահելով , փոքր ինչ շառագնեցաւ . բայց առանց տատամսելու փութաց ըսել թէ՛

— Խօսեցէ՛ք հայր իմ , բոլոր ուշագրութիւնս ձեզի տուած եմ :

— Ապրի՛ս , Ասուազ անփորս պահէ : Հըմայ ի՛նչ իւր տըսիմ նը դիւն իսմէ բարէօվը գիտէս , հալ պուքի դիւն կարդալէօվ իւ պէյին եօուսիչ անէլէօվ էս սօրվէր . լաքին իշխըտար իւր լընի նը , ասօրուան օրըս տատ տ՛իւմ գըննըվէր՝ հէ՛չ իւր չէ նը քսան շապիք էվէլ իմ հինցիւցէր :

— Ի՛նչ ըսել է , հայր իմ , հարկաւ դուք մեծ փորձառութիւն ունիք կեանքի պայքարին մէջ , եւ մենք միշտ պէտք ունինք անոնցմէ օգտուելու :

— Ապրիս , Ասուազ հախիդ խայրիլիւն կամենայ : Հիմայ ըսել բանս ան է իւր , պապաիկիտ կյեիճ էղար , քէրի քիսպի էտըվն էս , մօրըդ հետ խարար տըվանք թը՛ Աստծիւ հըրամմաննէօվը քեզ կարգինք : Զօրէմ մէր արեւը քարին վրայ է , ասէ՛օր կանք առտիւն չիկանք . աչվընիս բաց իքէն մէյ մի քէզ կարգինք . ալ ասկի էթքը մենք տեսնելիք բան մի չունինք . աղբարըդ տահա պզտիկ է՛ էռջի արզունիս քէնէ ա՛ռունիք :

— Հա՛յր իմ , քաւ լիցի որ ձեր կամեցողութեան և հրամանին դիմադրութիւն ընեմ , բայց ինչպէս գի-

տէք , Պոլսոյ բարքերուն համար տակաւին տղայ կը համարուիմ , եւ նիւթական շահս ալ ընտանիքի մը ապրուստն ապահովելու վիճակ մը չունի դեռ :

— Ատ ըսաղներըդ առած թէրպիլէյիտ հիւքմին իճիրան է իւր կ՛անէս , կ՛ըսէ հայրը , լաքին էվվէլ էմիրտէ կիչիմէյիդ վրայ կալած մամըտուքըդ չի պիտիւ վէսիլէ է , շիւնքի աշվիս իւր գօցիմ նը Աստըզիւ տըվածէն քանի մի փարայ տի գըննէք , քէզա աղայ ամույէդ , Փա՛ռք բարեբարին՝ դիւք ալ շահեցօղ տղաքներ էղաք , ձեռք ձեռքի կուտաք իւ մարդիւ էխտած (կարօտ) չեղած , պէկի պէս կէչինմիչ կուլլիք , վէ հաթթա թէօոնէրիւս ալ միրաս կու ձըգէք : Մէկ ալ մատտէյին հախին ալ կ՛ըսիմ թը՛ մենք Ըստըմպոլցօց պէս մագերնիս ձերմըկըլէն էտու չինք կարգըվիր : Սէյ նէնկ (այսպէս թէ այնպէս) քսանվիրեք տարիտ գնացիր . Ակը լընէյիւր նը հըմայ հիլ վէց տարիւ թէօռ տի կալլէի : Պա խուսուս մար տ՛ալ մինակ է , տանը մէջ շէնլիկ կուլլի . մենք ալ վրանիտ կու նայինք իւ կ՛ուրախանանք :

— Մինչեւ հիմա դուք ինձի բարի հայր մը եղած էք , անշուշտ ասկէ վերջն ալ չար չէք կամենար , մանաւանդ չեմ ուզեր որ հնազանդութեանս վրայ տարակոյս ունենաք :

— Էֆէրի՛մ , միտքս բարէօվ էս հասկըցեր , հըմայ Տէրը կամենայ նը՝ հախընիս խայրիլիւսիյօվը , մօրըտ հետ խայրէթ (բանակցութիւն) մին արի՛ էթնէթքը (վերջ ի վերջոյ) կայանք տըվանք իւր Գաբիկ աղային մեծ աշխիկը՝ Օղըտան մեզի հարսընցիւ անինք . զաննըս թը մինասիպէթլիւ խընամութիւն մի կուլլի :

— Հա՛յր իմ , կը ներէք որ գոնէ այդ մասին ձեզի

գաղաբարակից չ'ըլլալս յայտնեմ:

— Ի՛նչ, վախիմ թը դիւն մէնէ էռէջ հարսընցիւ մի ն'էս թէտարիւք արեր: Վէ եախսթ, դիւն ալ ըստըմպօլցօց պէս փարալիւ աշխիկ տի բռե՞ս:

— Ո՛չ, ո՛չ, քաւ լիցի որ առանց ձեր խորհուրդին ու գիտակցութեանը ո՛ւր է ընտրութիւն ըրած ըլլամ, նա մանաւանդ Սուրբ ամուսնութեան նուիրականութիւնը՝ դրամական ճղճիմ հաշիւներով ասպականեմ, այլ դիտողութեանս բուն կէտն այն է թէ՛ Օղըտան դաստիարակուած չէ, եւ թերեւս մեր երկուքին բնաւորութիւններն իրարու չհամապատասխանեն:

— Մինակ ատ խոսուսին հախ իւնիս, տղաս, լաքին մէնք էկէր ըստըմպօլցի հարս մի ն'առնինք նը, բերաննիւս համը տ'աՎըրի, զօրէմ անէօնք հարսնիւթիւն չին կըրար անէր, անէօնք էրկան խըյմէթ չի գիտին, իւնիս նը բեր իւր ուտին, մատերնին մախիւրը թաթխել չի գիտին, բարէօվ պատի պարկենք (պատկեր) կ'ուլին. քիչ մ'ալ կապերնին քաչէս նը « Հայտէ՛ վայ գլխուդ, էրէկուան դուրսէցի խըմպըլը՝ չի հասնէյիր դէմս ելլալու. մեխք օր երկու պաթալ սընտուկ ալ ճիհէզ պէրի » տի պօռան էրէս տի վեր: Ի՞՞ր տի գըննինք կաթը թամիզ հէլալ զատէ մի ն'իւր գայ մեզի միւթի (հնազանդ) լընի իւ հարսնիւթիւն անէ:

— Հայր իմ :

— Սա՛ ալ ըսիմ իւ դիւն կինէ գիտցածըդ ըսէ: Գաբիկ աղան մեր ձօշվօր ն'է, նամուսին համար հոգին ֆէտա կ'անէ, քէզալիկ կնիկը՝ Օղըտան ըսես նը բերանը կիւտ մի աղ դիր իւ մօրթէ: Դառնանք այժմիւս քու իզահ արած նօխթայիտ իւ միւհիւմլիւ վէսիլէյիտ, եանիեայ Օղըտային դպրոց չի տեսնելլուն,

ատէօր հախին ալ տահա վախթը չէ օնցեր՝ հարիւր տպայ քու բերնէտ լսեր իմ թը ֆռէնկիտան վացուն տարիւ մարդիկը պիլէ դրպատիւն կերթան իւ բան կու սօրվին, ա՛լ իւր կու մընայ 18 տարիւ էքսիւկ էթէկը. էվ սա խոսուսին ալ, քենէ բարէօվ վարժպետ չ'ըլլիր, սէպէ թը աշկերտ մի ն'իւնէյիր իւ կարդալ տի սօվըրցնէյիր: Ի՛նչ անինք տղաս, սա աշխըքիս վրայ էմմէն բարէօվ բան հիրաց չիգար, թը էկէր գայ ալ նը՝ մեզ չի գար գըներ: Հուսա (սա տեղ) էրկու օրվան էմը իւնինք, բերաննիւս համը չաՎըրինք: Հէմ էս քեզի տըրիւսպ նըսի՛մ, հա՛տի ըսինք թը՝ էլանք խալտեցանք (սխալեցանք) ըստըմպօլցի աշխիյ մ'առանք իւր կարդալիւն եէքտայ է, հալպուքի հօգիւն համար օր մի Սաղմօս չիտի կարդայ. լաքին դըրասնին տղիւն հետ թէմիզ չիւրիւթլիւ բարեւագիր տիտան իւ տ'առնին: Աս ըսաղնէրիւս « էմմէն » ըսիր նը՝ էլի մօրդ ձեռքը պաք, էս ալ առտիւն մէկըլլէօր Գաբիկ աղային կ'երթամ, Աստծիւ իղնէօվը Օղըտան կ'ուզիմ:

Յէվսէփ այս ամէնը մտիկ կ'ընէր եւ միեւնոյն ատեն հօգեկան մեծ պայքար մը կ'մղուէր գանկին մէջ: Արդարեւ Օղըտան գեղանի էր, բայց բոլորովին անուս, միւս կողմէ ալ ծնողքը կը սիրէր ու կ'յարգէր, օր մը օրանց անհնազանդ գտնուած չէր անոնց կամքին յանդէպ, մանաւանդ կ'մտածէր թէ քիչ շատ դպրոց տեսած Պոլսեցի հարս մը անկարելի էր որ գար իրենց լսան ներդաշնակութիւնը պահէր: Ուստի մտադրեց որ Օղըտան կնութեան առնէ եւ հօրը ըսածին պէս, ինքը տակաւ առ տակաւ ուզածին պէս դաստիարակէ: Հետեւապէս մեծ մասամբ հօրն իրաւունք տալով, ելաւ հօրը եւ հետոյ մօրը ձեռքերնին

համբուրեց. փոխարէն շատ ու շատ օրհնենքներ ու մաղթանքներ ընդունելով անոնցմէ :

* * *

Հիմա ալ երթանք Գաբիկ աղային բնակարանը

Աբիկ աղան տղուն ամուսնութեան եւ Օղըտան կնութեան առնելու հաւանութիւնը ստանալէն երեք օր ետքը, այսինքն Չորեքշաբթի երեկոյ, ժամը 2¹/₂ ին միջոցները Գաբիկ աղային դուռը ասի կ'առնէ . նոյն անեցիք ալ ճաշերնին ըրած ու սուրճի պատրաստութեամբ կ'ըբաղէին :

— Մաշիւկ Ունէ՛փ, գիտես թը դէօռ ն'է, կ'ըսէ Գաբիկ աղան աչկերտին: Շըլլաթը խէր ն'է, ա'ս վախիտ դըռվընիս չալէօղ ն'էօվ տի'լի, ատիւրայ մաշիւկ գնայ նայէ թը վէօ՞վ է :

Ունէ՛փը կ'վազէ դուռը կ'բանայ որ խզարէնց Աբիկ աղան է :

— Վախի՛մ թը պառկուկ էք, կ'հարցնէ Գաբիկ աղան Ունէ՛փին :

— Ձէ', տահա հացերնիս նէօր կերանք, օնցիք ներս, կը պատասխանէ Ունէ՛փը :

Մի եւ նոյն ատեն Գաբիկ աղան ալ սանդուխին կատարէն ահանջ տուած էր ուշ ատեն դուռերնին չալողին ո'վ ըլլալը հասկնալու համար. երբ Աբիկ աղային ձայնը կ'առնէ, արմանք զարմանքով կ'վազէ վար. կը դիմաւորէ եւ մեծ բացագանչութիւններով կ'սկսի շաղակրատել :— Աս ինտէօր էղաւ իւր օտաս տայ նախեցաք :

— Տահա էռջի օրը Փէօս էյանք կ'ըսէ Աբիկ աղան :

— Տիւնը ձեր ն'է, էփիւր քէֆէրնիդ հիւք մ'առնէ նը կրաք գար, գէհէր համրէօվ տի գայիք : Լաքին գիտես թը մինակ էք, Միւթէպեր խաթիւն նիւ աղաներ ն'ինչի՞ւ հիւրաց չի բերիք, Հըրա'մեցէք, օնցիք վեր :

— Աս իրիկիւն պէյինս հիւք մ'արաւ թը գամ թաճիգիւթիւն մի տամ :

— Թաճիգիւթիւն ի'նչիւ տի'լի, մենք ալ մինակ ինք, անէօնք էլ գային նը հագըր էյլիկ կուլէինք :

— Դիւք մերը գալէն հա'լ կու մնաք, օղջ մնացողին ասկի էտքը շատ կ'երթանք իւ կուգանք, կ'ըսէ Աբիկ աղան :

— Դիւք մեր խուսուրին մի նայիք, ըսելով վեր կ'ելեն եւ Աբիկ աղան կը հրամցնեն բազմոցին ամէնէն հանգստաւէտ տեղը :

— Քէրէմ արէ, էս միտաֆիր չիմ, ի'ւր իւր նստիմ նը քիրան մէկ է, կ'պատասխանէ Աբիկ աղան :

— Ձենէ բարէօ՞վը տի նստի, կ'աւելցնէ Գաբիկ աղան : Է բարի էկաք, տահա ինտէօր էք նայինք. Միւթէպեր խաթիւն ն'իւ աղաներ ն'ալ ըռէ՞հէթին :

— Օղջ իւ բարի կեցիք, փառք բարեբարին, պերքէտէր ին, մախսիւս բարեւ կ'անին, կ'ըսէ Աբիկ աղան :

— Խրկողներ ն'ալ օղջ ընին իւ բերօղ ն'ալ, կը պատասխանէ Գաբիկ աղան :

— Դիւք ինտէօրէք, իշա'լլահ աղէյ մի աղէկ էք, կիրակի թավսիրնիդ քաշել տալիւ գնացի՞ք, կ'հարցընէ Աբիկ աղան :

— Պէլի էֆէնտիմ, գնացանք իսէ տէ, հայլի

միւջկիւ բան մի ն'է էզեր, Հէր ի'նչիւր է նը օրթա-
յէն էլաւ, մեծ խէյլէ մի ն'էր վրայէս գնաց: Հրա-
մանքբ բարէօվ գիտես իւր ծառայականդ ճիփ անէնկ
նեղվաւսք բաներէն հաս չիմ' անէր իսէ տէ՛ չօլուխնէ-
րին սիրաը չի կօյեէլու համար, արազ լընինք ըսի:

— Անիւրիւր իխթիզա է էզեր նը՝ կէչէր ախչայի
պէս իստիմալ տ'անինք, տ'անէնկ օղանցաներ թէօրէ
կ'անին իւր՝ պիտին իւ չի պիտին նայեօղ չիկայ:

Այս միջոցին Օղըտան սուրճերը կ'մատուցանէ, կը
ի մեն, և քանի մը կցկաուր խօսքերէ ետք, Արիկ
աղան կ'պատրաստուի բուն նպատակին դիմել:

— Գարիկ աղա, խապիլը կայ նը՝ էօմ ր'անէյիք
իւր ճահէլները քչիյ մի օթթի օտան երթային, միւ-
հիւմիլու խօրըթայ մի ն' իւնիմ' հըրամմանիւցդ:

— Ի՛չ կայ խապիլը չիլլէլիւ: Հայտի՛ տղաք մեզ
քիչ մը խէլվէթ արէք, կ'ըսէ Գարիկ աղան, և ամէնը
մէկէն կ'մեկին:

— Խօրըթաս նանրֆար խաթիւնին համար չէ,
կ'ըսէ Արիկ աղան և զայն ետ կը դարձնեն:

Այն ատեն այր ու կին Արիկ աղային սոյն անա-
կնկալ այցելութեան պատճառը քիչ մը կ'կուահեն, և
երկուստեք ծածկաբար աչքի՝ քթթումներ կ'փոխա-
նակեն:

— Արիկ աղա, միւթմէյին (հանգարտ) էղիք իւր
մեզ մտիկ անէօղ չիկայ՝ սըռէրնիդ կրաք բանար,
կ'ըսէ Գարիկ աղան:

— Արո՛ւ բան մի չիկայ, կ'յարէ Արիկ աղան: Տը-
րիւստ ն'իւր ըսիմ նը՝ աս իրիկուն ձեր տիւնը գօղիւ-
թան իմ էկէր, եայնիեայ Աստծիւ իգնէօվը Օղըտանիտ
մեր Ուսէփին կ'ուզիմ, էկէր լայըլս կու տեսնէք նը
մեր հին ճօլվէօրիւթիւնը խընամիւթան թէպտիլ կ'ա-
նինք էվ մեր իշատակը պախի կու մնայ:

— Ինչո՞ւ մինասիպ չի տի տեսինք, խատանիդ
թօղ առնէ, կ'ըսէ Գարիկ աղան:

— Գարիկ աղա, հէտորս չէ իւր էս հըրամմա-
նիւցդ իղահ անիմ, լաքին ասենկ բաները ձէպրէօվ
չիլլիւր: ձեզի օխ ն'իւթ օր միւֆլէթ, նանրֆար
խաթիւնին հետ խօսք արէք, օթթիս նըթթին (աս-
դին անդին) հարցուցէք, բռեցէք, Ուսէփիս էհվալը
թախքիք արէք իւ անէօր կօրայ մեզի ճուղապ տըվէք:

— Ի'նչէր ալ կ'ըսես, Արիկ աղա, զէհէր մենք
ձեզ նէօր տի ճօշնայանք իւր տ'էլլինք սըվէօր նը-
վէօր տի հարցընինք, մեզ թէքտիր արազ կ'ուլլէք, կը
պատասխանէ Գարիկ աղան:

— Թէքտիր ինչու տիլի, կ'ու ելցնէ Արիկ աղան,
ասէօր աստեղը Ըստըմաօլ է. հաթթայ էքսիւկէթ էկին
ալ ըրէյը առնելիւ էք, պէլքի ան Ուսէփէն հազ
չանէր:

— Անէօր հէտ ն'է՞ իւր Ուսէփ պէկիս համար բե-
րանը վրայ տ'երթայ, կ'ըսէ Գարիկ աղան. պախու-
սուս մենք մեր հին կիտիչէն օթթիս չինք կրար օս-
նիր: Մենք մեր տըղաքը անենկ թէրպիյայ արերինք
իւր, տատ ն'իւ մարը ի'նչ իւր կամենան նը իրենց
ընդիւնակ ն'է:

— Մենք ալ ատենկ գիտինք իսէ տէ, կ'յարէ Ա-
րիկ աղան, առտիւն լըսէօղները թօղ չըսին թը «է-
վէլքիւ կիտիչէօվ նշանտիւքին արեր»:

— Օրի՞ւն հէտ ն'է իւր մեզ ֆասլը տ'անին, կը
գոչէ Գարիկ աղան, «Ասեմք խէյլիւրլիւ լընի»: Աս-
ուազ ամիւր ձէոք պահէ, Ասուազ էօմրէրնին եր-
կընցնէ, Ասուազ խէտէմլիւ անէ էվ Ասուազ աջը վը-
րանիւն պակաս չանէ:

— Խէյրիւն Ասուազ անէ, ապրին իւ գօրանան,
ծլին իւ ծաղկին, կ'շարունակէ Արիկ աղան:

— Նանըֆար, ըսէ աշխըներին իւր չէրպէթ բերին: Խեղճ կինը ուրախութենէն արիւնը երակներուն մէջ ցամքեր էր, և դեռ հաւատալը չէր դար եղած առաջարկին ու պարզապէս հրաշք մը կը համարէր որ Յովսէփին պէս կը թեալ ու բարեբարոյ երիտասարդ մը իրեն աղջիկը կնութեան կ'ուզէր, և վերջապէս ա'յնքան ցանկացած երազն իրականութիւն կ'դառնար:


Ակնայ սովորութեան համեմատ՝ Օղըտան այլ եւս չպիտի երեւար, ուստի օշարակին ափսէն պզտիկ քոյրը կ'բերէ, և այս առթիւ ալ փոխադարձ բարեմաղթութիւններ ըլլալէ ետք, Արիկ աղան կը մեկնի վերջին անգամ յիշեցնելով թէ.

— Ասուազ իւր կամենայ նը՝ էռջնիւս կիրակին չէ, անէօր դիմըցի կիրակի իրիկիւնը պէհը տի բերինք, էկէր մանի մի կալլէք նը՝ մեզի իշար արէք:

— Քէֆսիւզիւթէնէն մատէ ի՞չ մանի տի կ'ալլինք վէօր վախ տ'իւր գաք նը՝ դէօռէրնիս բաց է:

— Շինօրհակալ իմք, Ասուազ չանէ իւր քէֆսիւզ լընիք, գիշեր բարի ձեզ:

— Ձեզ լէօս բարի:



Սօսքկապը որոշուած կիւրակէ երեկոյեան համար մեծ պատրաստութիւն կար Գարիկ աղայենց բնակարանը, քանի մը մօտաւոր բարեկամներ ալ հրաւիրած էին՝ իրենց կողմէ հանդէսին փայլ մը տալու դիտումով:

Գիշերուան ժամը գրեթէ երկուքուկէսին Արիկ աղայենք ներս կ'մտնեն, անոնք եւս իրենց կարգին քանի մը լաւածանօթ անձնաւորութիւններ միատեղ բերելով:

Իւրաքանչիւրն իր կարգին կ'առաջնորդուի հիւրանոցը և պատուոյ աստիճանի համեմատ կը դասաւորուին մէյմէկ տեղ:

Չափուած ու ձեւուած սովորական բարեկներու փոխանակումը և որպիսութիւնները հարցաքննուելէ յետոյ, Արիկ աղան ընդհանուր կերպով փափաք կը յայտնէ թէ.

— Հէր իշխըտար իւր մենք աթմուս Ըստըմպօլինք իսէ տէ, ծառայականնիդ արդու կ'անիմ իւր հարսընցիւնիս Այնայ օղանցայէօվ էրրվայ, եանիեայ պուրունկէօվ գայ, զաննս թը մէջէրնիս դրսէ մարդ չիկայ:

— Ծառայ բարձրելիւն, կ'ըսէ Գարիկ աղան, ինտէօր իւր էօմըր կ'անէք նը անենկ թող անին: Տըրիւթ ն'իւր ըսիմ նը մէղավէօր ս'ալ ատենկ արզիւ կ'անիմ:

— Էմմէն ս'Աստծիւ մեղայ, էֆէնտի'մ մեր հին օղանցաները պաշխայ անիւշիւթիւն մ'ունին:

Արիկ աղային կախքը շուտով կ'գործադրուի, այսինքն հարանցուին գլուխը՝ թափանցիկ մեծ քօղ մը կ'ծգուի, որուն ծայրերը մինչեւ ծունկերը կ'ծածածանին, շուրջն համակ ոսկեհուս բանուածքով, (որ Նանըֆար խաթունին օթխտէն մնացած էր), և երկու պատուակալ օրիորդներու առաջնորդութեամբ Օղըտան կ'մտցնեն սենեակ: Օղըտային հիանալի գեղեցիկութիւնը և այդ կերպարանքին տակ տեսնողը ճշմարիտ դիցուհի մը պիտի կարծէր գայն, և նկարելու համար վիտալի վրձինը կարող չպիտի ըլլար ուրուագծել, ինչպէս որ բոլոր այն տեղ զանուղները զմայլած էին: Ուր ուրեմն, յոյժ ծանրաքայլ ընթացքով կ'առաջնորդեն նախ ապագայ պարոնտատին՝ Արիկ աղա-

յին, որուն սրկու ձեռքը կ'համբուրէ ծնրադիր, նոյնպէս ալ կեսորձը և ապա մնացեալ հանդիսականներուն մէջմէկ ձեռքը համբուրել տալով սենեակին վարի անկիւնը կը կեցնեն :

Կեսուրցու Միւթէպէր խաթունն ալ իր կարգին պատգամ մ'արձակած ըլլալու համար, կ'յարէ :

— Էս ալ ուխտ էի արեր թը՝ Ուսէփ ս'իւր նշանինքնը հարսընցիւս անխօս չիտի պահիմ, հըմայ կուգիմ իւր աս սահաթին խօրըթէ : Հէրիւ (անցեալ տարի) Պէկօղլի մեր ճօշվէօրներէն Խուպիյարենց տիւնն է՛յի գնացեր, իրեք տարվան հարսէրնիւն տահա անխօս պահել կուտան. «Մա'հնի ձեզ էլլէ, ըսի մե'ղք իւր Պէկօղլի ալ կու նըստիք, օղանցանիտ տ'անէք նը Քինտիրիւ գեղիւնաքը գնացէք » :

— Մի' մեխդրէք (մեղադրել) Միւթէպէր խաթուն կ'ըսէ Գարիկ աղան, « վէօր քան է մարդ' անքան է բընիւթիւն » կ'ըսին. մարդըս Պէկօղլի նստելէօվ գէյինը չի բարկընար, ճուհարը ներսիդիէն լընելու է :

Այս միջոցին անուշ և սուրճ կ'մատուցուի, եւ խօսքը կը դառնայ լուսանկարին վրայ, որ տակաւին նոյն օրը ստացեր էին ու Միւթէպէր խաթունը կը խնդրէ որ տեսնեն, Խնդիրքը շուտով կը գործադրուի միանգամայն Հողբացիկոնցիւնն ալ միատեղ :

Միւթէպէր խաթունը նախ կ'քննէ Գարիկ աղանց կուսիք և շատ լաւ կ'գտնէ, յետոյ միւսը նայելով՝ մէկէն ի մէկ շճանչնար ու Նանըֆար խաթունին կը հարցնէ թէ՛

— Ասէօնք վէ՞օվին :

— Մըրայ չէ՞ս ճօշնար, կ'պատասխանէ Նանըֆար խաթունը :

— Գիտես թը կնիկը տեղ մի տեսեր իմ, միտքս վրայ չիգար, կը յարէ Միւթէպէր խաթունը :

— Իքօնց ինքն է, կ'ըսէ Նանըֆար խաթունը :

— Վէ՞օր ինքօնց ինքը, կ'հարցնէ Միւթէպէր խաթունը :

— Իշտէ ինքօնց ինքը, կ'պատասխանէ Նանըֆար խաթունը :

— Սա՞ ինքօնց ինքը, կ'գոչէ Միւթէպէր խաթունը :

— Ը'հհհ, կ'կակազէ Նանըֆար խաթունը, անկըրմահ էլլէ ասենկ խելքը՝ լեզվիս ճէօթ ն'է իւ շիմ կրար ըսեր :

— Ին ծ'ալ անենկ կուգայ թը տի ճօշնամ, կը պատասխանէ Միւթէպէր խաթունը :

— Հը'... քրլէ կէցիր իւր ըսիմ, ինքօնց ինքն է, մէւայ ըլլիս, գիտես թը գաղլերիմ (ցնդի), կ'աւելցնէ Նանըֆար խաթունը :

— Ատուազ չ'անէ, ինչու տի դաղլիս, հէլպէտ միտվընիս տի գայ, կ'յարէ Միւթէպէր խաթունը :

— Գտա՛յ, գտա՛յ, Ուսկիւլ ն'է իշտէ, կ'գոչէ Նանըֆար խաթունը :

— Վէ՞օր Ուսկիւլը կ'հարցնէ Միւթէպէր խաթունը :

— Ամա՛ն անթէօքը, ի՛շտէ ինքօնց Ուսկիւլը, կ'ըսէ Նանաֆար խաթունը :

— Հօղվըրթիքօնց կ'հարցնէ Միւթէպէր խաթունը :

— Հը'... հ, Հօղբացիկօնց, կ'պատասխանէ Նանըֆար խաթունը :

— Մըրա՛յ մահնինք... Հօղբացիկօնց Ուսկիւլն է՞, կ'հարցնէ Միւթէպէր խաթունը գարմացմամբ :

— Ան օրը հիրաց էյանք, իրարու խօսք տըվանք իւր էտէւ տէկիւչիւկ անինք իրարու հետ, կ'ըսէ Նանըֆար խաթունը :

— Հը'մայ ճօշայ, այնի ինք իւ իր կտէօր ն'է,

իլա՛հիմ Ուսկիւլ, աղաք ն՛ալ ասսոյնն էղեր, իլա-
հիմ Ուսկիւլ, դիւն ալ Ըստըմպօլ տի գաս էղեր իւ
ֆօթօրդաֆ քաշել տի տաս. . . Աս ենկ ալ այնի, ի-
լա՛հիմ Ուսկիւլ, գիտես թը աշկիս մէջ կու նայի:
Աշխընիւթիւնը գիտիմ անէր թօֆաֆիս կուգայ, ին-
տէ՛օր ալ քէնլէմէլիւ (փառաւոր) նըստըվասք է , ի-
լա՛հիմ Ուսկիւլ. հա՛, հա՛, հա՛:

— Ի՞նչ կու խնտաս Միւթէպէր խաթիւն:

— Ուսկիւլը կու խընտամ, իլա՛հիմ Ուսկիւլ:

Բարեբաղդաբար ուրիշներ ալ լուսանկարները
նայելու համար ձեռքէ ձեռք պտտցուցին, և վերջ
գտաւ Միւթէպէր խաթունին գարմանքները:

Ապա յաջորդեց խօսք կապի մատանիները մատու-
ցանելու արարողութիւնը, և հարսնցուին տրուեցաւ
բաւական արթէքաւոր մարգարիտէ վզնոց մը, որուն
յաջորդեց շնորհաւորութեան աւանդական շաքարն ու
քաղցրահամ ըմպելիները և հանդիսականաց շնորհա-
ւորութիւնները տեղի ունեցան, ամէն բերնէ սրտա-
բուխ բարեմաղթութիւններ տեղալով՝ անպագայ ա-
մուշներուն:

Երբ ուրախութեան ոգեւորութիւնը տակաւ հան-
դարտած էր, այր հանդիսականներուն տարեցներն
օրուան առետուրի գնացքին վրայ կ'իսուակցէին, և
երիտասարդներն ալ սա՛ ու նա նորագոյն. գիւտերու
և տնոնց կիրառութեանը վրայ կ'ձառէին իրարու,
իրաքանչիւրն իր ըմբռնած եղանակովը: Չմոռնանք
սակայն ըսելու թէ սոյն հանդէսին մէջ Յովսէփէն ա-
ւակելի գարգացած ու մշակուած գլուխ չկար: Օրի-
նակի համար, ձուկօնց Օվիկը (Յովհաննէս) օգապա-
պարիկին գիւտը կ'դրուատէ:

— Ախպրտաք կ'ըսէք ըմայ, հավա վարօւիին
պէս տահա մեծ իճատ չէ էղեր:

— Հէյկիտիսի, հըլէ (նախ) մէյ մի տա՛ « հավա
վարօւի » ըսածիդ պալուն ըսէ կ'ըսիմ, կը պատաս-
խանէ Շուշմայենց Գէվիկը (Գէօրգ): Ատկի խաթինա-
զար, պալունը բան մ'ըսել չէ, դիւն հըլէ մէյ մի
միտքդ բեր ծովուն տըկէն գնացէօղ նէօր իճատ
տալղունձ վարօւները:

— Ի՞նչ ըսել է թը՛ պալունը բան մ'ըսել չէ,
դիւն հէջ հավան էլած իւնի՞ս, Գէվիկ աղայ. հէրիֆ-
ները հըմվի (մինչեւ) էրկինքին կէս խաթը կ'եւլէն:

— Բարէօվ կ'ըսես Օվիկ աղայ ըմայ, պալունը
սածըդ՝ լաստիկէ հէօյպէթիւ տիկ մին նին շիներ,
քէլլէքի տիկի պէս՝ հաւակաղիօվ փշեր փշեր ին, տը-
կէն ալ տաշտ մինին կախեր էվ մէջ ն՛ալ թախուճ մի
տէմիւր ալաթի մաքինաներին դրեր, հարկաւ վեր
տնլլէ, լաքին ծովուն տըկէն երթալիւ համար նէֆէս
առնել չիկայ, պախուռիւս օճախ տի վառի իւ միւխ
առնել չիկայ, պախուռիւս օճախ տի վառի իւ միւխ
դիւրս տի տայ նը՛ ինտէ՛օր տ'իտայ, կ'պնդէ Գէվիկը:

— Քէրէմ արէք իւր ըսիմ, կ'ըսէ ճըթիկօնց Համ-
բօն (Համբարձում), ատէօնք տահա բան մ'ըսել չին:
Հըմայ անենկ իճատ մի նին արէր իւր մարդիւն ներ-
սի դիւն ֆօթօրդաֆը կու քաշին, անիւնը էճէ յիփ
բան մի ն'էր, միքըս չի գար իւր ըսեմ. . . ՌԱՆԴ-
ԿԵՆ Ք էր, ի՛նչ էր, սըվէօր պէս չէլիփէլիկ անիւն
մի, Տէ հըմայ դիւք ասէօր ի՞նչ տըսէք:

— Ի՞նչ տըսինք իւր, կ'ըսէ Սլլիխօտենց Ստեփիկը
(Ստեփան), մարդիկը այր, բեն, գիմը լըմընցու-
ցեր իւ լիւն, փիւր, քէնին հասեր, ա՛ս կիտիշօվը
եւ օ ֆեն տ'ըսին տի լըմընցընին:

— Դիւք գիտէք թը եւ օ ֆեն նէ՛օր տ'ըսին, կ'ա-
ւելցընէ Օրմընթէօլէնց Ավտօն (Աւետիս), քանի՛ տարի
էղաւ իւր եւ օ ֆեն հասան, իւ ա՛ն ձեր ըսած պա-

լուսնը, տալդուճ-վարէօռը, մարդիւս շրջօք դիուսն ֆօ-
թօրդաֆը հէ՛ջ բան մ'ըսիլ չին սա՛ նէօր իճատին
քէօվ, Հըլէ՛ մէյ մի գէյինի զարկէքթը թէլսիւզ թէլ-
ղըրաֆ իճատ արին :

— Էն՛ղի օրը մէյ ն'ալ ըսաց աա , ըմայ էս չավ-
տըցի (չհաւատացի), կ'ըսէ Համբօն :

— Աւտալի՛ւ բան էր տ'աւտաս , կրկնեց Շուշմա-
յենց Գէվիկը :

— Չէք ավտար նը պարիւն Ուսէփին հարցնինք ,
կ'յարէ Ավտօն , որ այն միջօցին Յովսէփ տարեցնե-
րուն կ'բացատրէր մանածի եւ տպածոյի գործառնու-
թիւնները՝ Մանչէսթէրի եւ Պոլսոյ հրապարակին վը-
րայ եղած վաճառումներն ու վճարմանց սակերը :

— Հարցնինք, կ'պօռան՝ ամէնը մէկէն :

— Պարիւն Ուսէ՛փ, քիչ մ'ալ սա թարաֆը հը-
րամմէյեր , միւշկիւլ մի ն'իւնինք հէլլը տ'անես, կ'ըսէ
Ավտօն :

— Ամենայն սիրով, կ'պատասխանէ Յովսէփ, եւ
կուզայ քովերնին :

— Սէրիմ Պարիւն Ուսէփ, կ'դոչէ Ավտօն , հըմայ
միւճէտէլէ մի ն'իւնինք՝ մէզ իսթիֆի տ'անէս :

— Պայմանաւ որ, կ'աւելցնէ Յովսէփ, ձեռնհա-
տութենէս վեր եղած չըլլայ :

— Էվէլ էմիրտէ , էս իպրամ տ'անիմ իւր իզահ
արած վախտը՝ ճիփ դրարառ չի խօրթէս իւր էմ-
մէն ս'ալ հասկնանք, կ'ըսէ Գէվիկը, միջանկեալ նա-
խադասութեամբ մը :

— Տէհի՛ դիւն չէս հասկընար նը՝ գիտես թը մենք
ալ դագա՞ (համբ) ինք, կ'պատասխանէ Ճոնիօնց Օ-
վիկը :

— Տիրացի՛ւ, էս քէնէ բարէօլ դրարառ գիտիմ,

կ'յարէ Գէվիկը, ըմմայ, անէօր ալ խարճէլիւն տեղը
կայ : Մենք Ակինը վերի ժամիւն (եկեղեցի) դրպա-
տիւն ն'իքէն՝ Էպիչէիվայ Գիրգէօր պայվէլիին օրօքը
Նարեկը պիլէ աշխարարառի կու դառցընէյանք :

— Ճիփ խօրունկը գնացիր. Գէվիկ աղայ , կ'պա-
տասխանէ Ավտօն , իրավէս նը իզահ արէ նայինք թը՝
Երանելի Նարեկացին իւր ըսեր է թը « վասն կենա-
րարին ձենճերիմ » նը ի՞նչ ըսել տ'իւզէ :

— Ատկի խօրայ ի՞նչ կայ իւր, կ'գոչէ Գէվիկը. « Իս
հասլը բէրէօղին հօգիւն քէպապ լընիմ » ըսել կ'ուզէ :

— Սիրելի՛ք, լաւ կ'ընէք որ Նարեկին վրայ չվի-
ճարանիք. կ'ըսէ Յովսէփ, փաղաքըլէ շեշտով մը, վասն
զի այդ գործն արդէն ձեռք առնուած է անուանի
վիպագիր Բասիմի և ծանօթ հրապարակագիր Հօրօյի
միջեւ : Նայեցէ՛ք, կղերականներն անգամ լուս կ'անց-
նին Նարեկին հասկանալիութեանը մասին :

— Էֆէրի՛մ պարիւն Ուսէփ, կ'գոչէ Համբօն, տէր-
տէրին չի հասկըցածը մե՞նք տի մէյնինք (մեկնել) :

— Նարէյն՛իւր չի հասկընար նը ինչի՞ւ տէրտէր
էղէր է, կ'հարցնէ Օվիկը :

— Տէրտէրը ինքերէնը չի փուսնիր, կ'պատաս-
խանէ Համբօն, դիւն էփիւիւր կարդալ չի գիտցօղը
տէրտըր կ'անէս նը՝ ա՛լ ի՞նչ մէյմէնէթ տի կալլէս
անկի :

— Մատէմ քի անիւրիւր կարդալ չի գիտցած
տէրտէր կ'ուլլի նը, էտէվ թօղ սօրվի, դիտել կու-
տայ Գէվիկը, բան ն'իւ գէօրծը ինչէ՛յ, օրը տըպայ
մի պիլէ ժամ չներթար , սա՛լթ մէտել թաղելը կու
սորվի՞ :

— Դարձեալ նիւթէն շեղեցաք, կ'ըսէ Յովսէփ,
այդ խնդիրը կրօնական ժողովին իրաւասութեանը

կ'պատկաննի. եթէ ուզէ՛ լուրօրեայ դասարան մը կը հաստատէ անուս քահանաներու համար, եւ հմուտ կղերականներ հոն կ'դասախօսեն. բայց ինչպէս ըսի, այս խնդիրները մեզի չվերաբերիր. կարծեմ ասկէ առաջ ուրիշ նիւթի մը վրայ կ'վիճարանէիք:

— Պէ՛լի պէ՛լի, Օրմըթէօլէնց Ավտօ աղան կ'ըսէ թը՛ կ'գոչէ Օվիկը, թէլսիւզ թէլըրրաֆ ին իճատ արեր նը ի՞նչ ըսել կ'ուզէ:

— Այո՛, ճշմարիտ է, կ'պատասխանէ Յովսէփ, այդ գիւտը հինգ վեց տարիէ որ ճանչցուեցաւ, եւ սա՛ վերջին մէկ երկու տարուան մէջ մեծ արդիւնքներ տուաւ, եւ մեծ ապագայ կ'խոստանայ:

— Սա՛ չիմ հասկընար թը, կ'ըսէ Շուչմայենց Օվիկը, « թէլսիւզ » իւր կ'ըսէք նը էրկիւ ճէօթը թէլէօվ իրար չի կապած ինտէ՞օր իրարիւ հետ մուխապէրէյի տի մըննին: Մէկէր թը պուկուի պէս վէ եսխութ վէցհագարիեայի տայիւ թըլըսիւմ մը տի կալէ:

— Ո՛չ, բարեկամս, կ'փութայ աւելցնել Յովսէփ, այս գիւտը Մարգօնի անուն իտալացի երիտասարդ մը գտաւ, որ պարզապէս երկու անջատ գործիքներ հեռաւոր տեղեր զետեղուելով՝ ինքնին հաղորդակցութեան կ'դրուին:

— Պարիւն Ուսէփ, անէնկ բաներ կու խօրըթէք իւր՝ կ'ըսէ ժռիկօնց Օվիկը, մարդիւս զէ յինը էպէռզէպէռ կ'ուլլի: Մաքինաները ֆէրէսէթ ի՞նչին իւր իրարիւ հետ միւխէպէրէյի տի մըննին: Պիմպաթ առտէօր մէջ սատընիւթիւն մի տ'իլլի, կ'յարէ Լստեփիկը, զաննըս լաֆէրը հավայէն չիտի թռչին ա՞:

— Ըսիմ թը չ'ըսիմ, կ'գոչէ Գէվիկը՝ զայրացկոտ շեշտով մը, լաքին մարդըս կըռնըկին օրթայէն կու

ճաթէցընէք: Հէ՛չ հավայէն լաճ կու թռչի՞: Թը կայ նը պօռուի մէջէ կու խօրըթ ին:

— Ատենկ հիտտէթէօվ խօրըթեյ չի՛ պիտի՛ Գէվիկ աղա, կ'միջմտէ Ստեփիկը: Հըրամմանք տ'ալ մեզի պէս ճիւղապ տիւր իւ ճիւղապ առ: Հէմ՛ դիւն ալ մէյ մի քու պէյիսիդ գարկ թը աշխըրքիս մէյ ճօթէն հըթվի (մինչիւ) մէկալ ճէօթը պօռու կու դըրվի՞:

— Մեղք իւր քըսան տարի է Լստըմպօլիւ խալտուրիւմները չըղնամիշ կ'անէս իւ տահա պուկույի կ'ավտաս, կ'ըսէ Գէվիկը ծաղրական շեշտով մը:

— Կէցիք իւր ըսիմ աղըրտաք, նէօր միթ մինկու, կ'ըսէ Ստեփիկը: Էռջի օրը տեղ մին էի դնացեր՝ աղբօրը մէկը նախը կ'անէր թը նէօրէլիք իճատ մինին արէր էղեր, երկու մարդ դիմըցէ դիմաց կու նըստին էղեր՝ մէկը մէկային պասարաթը կու կապէ էղեր, իւ էտէվ կու պաշայէ բերնին էկածը թօղ տալ. ինչ սըռտան բան իւր հարցընէ նը՝ ճուղապը կ'առնէ էղեր:

— Կամաց կամաց տավարցընէք թը՛ մըյները (մուկերը) կատվին (կատուին) շըլլիէն ճընկուտիւկին կախէր, կ'ըսէ ժռիկօնց Օվիկը՝ հեգնոտ ժպիտով մը:

— Ստեփան աղային ըսածը ճշմարիտ է, կ'միջմտէ Յովսէփ, մանաւանդ նոր գիւտ մ'ալ չէ: Գրեթէ 15 տարի մը կայ որ մայլիխացուլ ըսուած գիտութիւն մ'երեւան ելաւ, թէ և հին ժամանակներն ալ ծանօթ էր, բայց կիրառութիւնը ճշդուած չէր: Իսկ այժմ մեծամեծ գիտուններ անով կ'զբաղին և հետզհետէ լուրջ հանգամանք մ'առնելու վրայ է:

— Պարիւն Ուսէփ, ստ ըսագներէդ հէչ բան մ'ալ չի հասկցանք, կ'գոչեն ամէնը մէկ բերան,

քըչիյ մը բացէն օնցի նայինք թը խելլընիս տի կը յեէ :

— Արտաքին երեւոյթին մէջ խելք չհասնելիք բան չկայ, երբ ուզեն որ մէկը մագնիսացնեն ու խօսիլ ասան, ենթական կ'ընտրեն այնպիսի մէկը որ մագնիսացնողէն տկար կազմ ունենայ, այն աստե՛ն մագնիսացնողը կ'անցնի ենթականին դիմացն ու գրեթէ կէս կանգուն հեռուէն ձեռքի զանազան շարժումներ կ'ընէ, միշտ աչքերուն մէջ կ'նայի. « Պիտի քնանաս » կ'ըսէ ու գրեթէ կէս ժամուան մէջ հարիւրներով անգամ գայնս կ'կրկնէ: Հուսկ ուրեմն ենթական դալուկ մը մը կ'ունենայ և ինքզինքը կ'կորսնցնէ, իբրեւ թէ խոր քնոյ մէջ թաղուած ըլլար: Ա' անկէ վերջ մագնիսացնողը կ'սկսի հարցումներ ուզղել և ենթական մեղամաղձիկ ու տարտամ ընդհատումներով կ'պատասխանէ իւրաքանչիւր հարցումին:

— Էթնախըպէտ (վերջ ի վերջոյ) ըսածիս տիգաք, կ'ըսէ Օվիկը, պուկուճիութիւն ն'ալ ատէօր կ'ըսին: Ատ տահա վեցհաղարիեային մէյ ճէօթ ն'էր իւր ձեռք ին ասեր: Ըսել է թը թէլսիւզ թէլըղրաֆ ն'ալ ատէօր պէս բան մին է:

— Գրեթէ, կը պատասխանէ Յովսէփ:

Այս միջոցին հանդիսականներուն մատուցուեցաւ մրգօղի և գինի: Մեծ խանդավառութեամբ գաւաթները դէպի ստամոքս պարպելէ ետք, Օրմըթէօրենց Ավտօն իր մէջտեղ նետած անթել հեռագրին խնդիրը նորէն արծարծելով՝ Յովսէփին կ'յարէ թէ.

— Աէրիմ պարլուն Ուսէփ, անենկ է նը՝ տա թէլսիւզ թէլըղրաֆին միտ բանին քըչիյ մը իղահ անէյիբ իւր սա՛ մեր էկէն աղաներիւն պէյինը մըններ թը ինտէօր կ'ուլի:

— Սիրելի՛ք. կ'ըսէ Յովսէփ, անթել հեռագրին կազմածը պարզապէս երկու զոյգ գործիքներէ կը բաղկանայ: Ասոնց մէկ զոյգն ընկալուչ կ'կոչուին, որ գրեթէ 50—55 հարիւրորդամեղը բարձրութեամբ և 20—25 հարիւրորդամեղը տրամագծով գլանաձեւ մետաղէ խողովակներ են, բերանի կողմը կոնաձեւ կափարիչով մը, որոնց մէջ զետեղուած են ընդունուելիք հեռագրին թղթէ երիզներն ու զանոնք շարժման դնող մանր մունր գործիքները: Իսկ միւս զոյգը որ հաղորդիչ կ'կոչուին, ասոնք ալ կը կրեն ելեքտրականութեան հոգին կազմող դուճերը (պօպին), որոնք նուրբ գործիքներով՝ նժարի մը պէս ուղղահայեացաբար կեցած են, անոնց կցուած ըլլալով հաղորդիչ թեւճակը, այսինքն մանիվէլարքօր: Արդ, այս զոյգ գործիքներուն իւրաքանչիւրէն մէյ մէկ հատ կ'զետեղուին ուղուած հեռաւորութեամբ տեղերու վրայ, երկուքին ալ ելեքտրականութիւն ստացող թելերուն ծայրը քանի մը մէթր կը մխրճեն հողին կամ ծովին մէջ, և գործիքները կը դնեն ելեքտրականութիւն արտադրող հասանքի մը ազդեցութեան տակ: Ա' անկից վերջ՝ մէն մի կողմի հաղորդիչը դիմացի ընկալուչին հետ հաղորդակցութիւն կ'ունենան. ահա՛ այսչափ:

— Ատ էմմէնը բարէօվ, լաքին անիւրիւր էթնախըպէթը իրարիւ հետ կապ իւր չիւնին նը՝ ինտէօր իրարիւ ըսածը կու հասկընան, կ'հարցնէ Ստեփիկը:

— Արդէն բուն գաղտնիքն ալ ատոր մէջ է, կը պատասխանէ Յովսէփ. ինչպէս քիչ մ'առաջ մաքնիսականութեան վրայ կ'իտօսէինք, մի եւ նոյն պատճառն է նաև անթել հաղորդակցութիւնը: Պարզա-

պէս երկու գործիքներուն մէջ մաքնիսական հոսանք մը կ'կազմուի երկրիս մէջէն, իբր թէ թելով մը կամ խողովակով մը կցուած ըլլային իրարու հետ :

— Մատէմ քի թել իւր չիկայինը, պաշխա մէյ ն'ալ անենկ մաքինա մի կու դնէ իւ ինքալ վուխուֆ կուլլի մէկալին սըուին, դիտել կուտայ Համբօն :

— Տարակոյս չկայ, կ'ըսէ Յովսէփ, արդէն այս գիւտին միակ անպատեհութիւնն ալ այդ է : Բայց առ այժմ ատոր ալ առաջըր առնելու համար, մէն մի անթել հեռագարտան կայանի պաշտօնեայ իր դէմի հաղորդակցին հետ ծածկագիր բանալիներ ունին, որոնք ուրիշներու համար անհասկնալի են, և այսպէս փոխարդածաբար :

— Ինչ իւր ալ ըսէք նը իմ դէյինս չառներ թը երկու մաքինայ զաա զատ տեղվանք դնելէով իրարիւ հետ տի խօրթին, կ'պնդէ ձեիկօնց Օվիկը :

— Սխալըրտաք, կէցիք իւր ըսիմ, կ'ըսէ Գէվիկը, նէօր պէյնս կաթեց, էֆէրի'մ Մարգօ, բարէօվ է գըտեր : Հէրիֆը լայըլօվը քրիստօնեայ է էդեր : Զօրէմ, չէ՞ իւր Ս. Աւտիարանին մէջ գըրված է թը « Ի'ւր իւր աղօթես նը՝ Ասվաղ ձանըդ ֆէօն կու լսէ » : Իշտէ ատ Դալիեան ն'ալ Ս. Աւիտարանին աս քէլիմէյին կիւվէնմիշ լընիլէօվ՝ թէլսիւզ մաքինայ իճատ արեր իւ արզիւին հասեր է :

— Շատ լաւ տրամաբանեցիք Գէվիկ աղա, կ'աւելցնէ Յովսէփ : Պ. Մարքօնի գիւտին պատճառն ուրիշ շարժառիթով մ'ալ կրնանք լուծել : Օրինակի համար, տակաւին անթել հեռագրին գիւտը չեղած, երբ պատահաբար ականջնիս կ'խօսէր՝ անմիջապէս 'կըսէինք թէ « մեզ կը խօսին » : Բայց այս մեկնութիւնն իրբեւ ուսովական ասութիւն նկատուած էր

Գիտնոց կողմէ : Մինչդեռ այօօր Մարգօնի գիւտն եկաւ հաստատեց զայն : Որովհետեւ գիտականօրէն պէտք է ընդունիլ թէ մեր ականջն ալ ընկալուչի գերը կ'կատարէ, ու երբ ականջնիս բզզայ՝ անտարակոյս տեղ մը մեր վրայ կ'խօսին, պայմանաւ որ մեր վրայ խօսող անձը՝ մեր կազմին ազդելու չափ զօրաւոր մաքնիսականութիւն ունենայ : Ե'ւ քանի որ մարդոց ձեռքով կերտուած քանի մը մետաղներու կտորուանք՝ հեռաւոր տեղերու վրայ իրարու կ'հաղորդակցին, ինչո՞ւ ուրեմն չհաւատանք Աստուծոյ ստեղծած մարդուն համար, որ մի և նոյն ատեն իր վրայ կ'կրէ հաղորդիչ, ընկալուչ, մաքնիսականութիւն և ելեքտրականութիւն : Միայն մեր ներքին բնազդն ա'յն կարողութիւնը չունի որ գիտնանք թէ՛ ո՞ւր և ի՞նչ բան կ'խօսին մեզի համար : Անշուշտ օր մ'ալ պիտի գտնուի մարդու այս կարեւոր ու նորագիւտ զգայարանքին բանալին :

— Չան տ'անսպառ պարիւն Ուսէփ, բարէօվ էս վուխուֆ էդեր ֆիզիքաճայ մալիւմաթնէրիւ, կ'գովտրանէ Ստեփիկը :

— Շնորհակալ եմ, կ'պատասխանէ Յովսէփ :
— Տէ հըմայ տեսաք թը թէլսիւզ թէլըրբաֆին պէս ճէսիմ իճատ չէ էդեր հըթվի ասօրըս, կ'աւելցնէ Ավտօն :

Մինչեւ այս տեղ մամը վեց եղած էր, հանդիսականները մեկնելու պատրաստուեցան, իսկ միւս կողմը՝ Գարիկ և Արիկ աղաներն ալ որոշած էին որ Յովսէփին հարսնիքը շրտ կատարուի :

Արդարեւ այս նշանաւորէն երեք ամիս ետքը, Ս. Սարգիսի երկուշարթին՝ կէօօրէն վերջ, Մայր եկեղեցիի տաճարին մէջ տեղի կ'ունենար Յովսէփին ու Օղըտային սուրբ պսակի խորհուրդը :

Երկու տարի անցած էր Յովսէփին ամուսնութեանէն ի վեր, կիւրակէ օր մը Պոլսոյ կամուրջին վրայ շնորհալի զոյգ մը կ'ընթացէր զիս. Յովսէփին ու Օղբտան էին, որոնք նուագահանդէսէ կ'ըստնան եղեր: Քաղաքացիական ծանօթութեամբ զիրար բարեկեցինք ու քանի մը պատշաճ խօսքերու փոխանակման պահուն՝ զիտեցի որ, Տիկին Օղբտան ո՛չ միայն արտաքին արդուզարդովը մայրաքաղաքացիի մը անըստաքին արդուզարդովը մայրաքաղաքացիի մը անըստաքին վայելչութեամբ հագուած էր, այլ և խօսակցութեանը մէջ ալ հազիւ գաւառացիի շեշտ կ'ընշմարուէր:

Իրարմէ բաժնուելէ ետք, մտովի սա եզրակացութեան հանգեցայ թէ՛ Յովսէփին բարի կամքն ու անձանձիր յարատեւութիւնը մեծ դեր կատարած էին:

Գրեց

Մեհ. Գիւմ, Այբ, Լիւն, Է, Նու, Տիւն, Է, Ռե:

Մասնաւորապէս Պէրպէրեան
Ժողովրդական Տարեցոյցին համար



ԶԱԶՈՒՊՐԻՆԱ

Վ Է Պ Ռ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Կ Ե Ա Ն Ք Է

Ոցիկիս բուրջի պատուհանը բանտին բակին վրայ կը նայէր: Այս պատուհանը՝ պատին բարձրը կը գըտնուէր, բայց աթոռի մը վրայ ելլելով՝ կրնայի բակին մէջ անցած դարձածը տեսնել:

Իրտարանէս՝ կրնայի ուզածիս չափ ծանօթութիւններ առնել բանտին բնակիչներուն վրայ, և գիտէի որ անոնց ամէնէն զուարթը Զազուպրինա անունը կը կրէր:

Հուժկու ու չարքաշ երիտասարդ մըն էր ան, կարմիր գէմքով, որու վրայ խոշոր աչքերը մշտատեւ ոգեւորութիւն մը կ'արծարծէին:

Գտակը գէպ ի ետեւ ծոծրակին վրայ նետած, ածիւուած գանկէն կը ցցուէին երկու ահանջները տարօրինակ երեւոյթով մը, վզին կապերը միշտ քակուած էին, ժաքէթը միշտ բաց և դնդերներուն ամէն մէկ շարժումը իր հոգին կը բացորոշէր՝ անվստահելի՝ որքան անոխակալ:

Միշտ խնդացող, աղմկայոյզ ու ծաղրածու, բանտւորներուն կուռքն էր դարձած: Ընկերներուն հոծ ու գորշ խումբը կը շրջապատէր զայն, և անոր զուարճալի խեղկատակութիւններովը զբօսնելով՝ գեղեցկացած կը տեսնէր սխուր ու տրտում կեանքը:

Օր մը, շրջագայութեան օրինական ժամուն Զազուպրինա խցիկէն դուրս ելաւ առատանով կապուած

երեք մուկեր առջին ձգած, պոռալով թէ՛ թրոյքայով կը ճամբորդէ (Ռուսիոյ մէջ թրոյքա անունը կուտան երեք ձի լծուած պերճանքի բալիւրներուն)։ Պոռալուքներէն սարսափած, մուկերը կը վազվզէին և բանտարկեալները կը ծիծաղէին ի տես այս խոշոր մարդուն և մուկերուն ։

Զազուպրինա կը կարծէր թէ իր պաշտօնը նմանները զուարճացնելն է և ասոր համար ընաւ առիթ չէր փախցնէր։ Երբեմն ալ հնարամտութիւնը՝ անգութ գործերու կը մղէր զինքը։ Անգամ մը, տղու մը քնացած միջոցին մազերը պատին փակցուց, երբ խէժը լաւ մը չորցաւ, յանկարծակի արթնցուց զայն։ Տղան ոտքի ցատքեց և գլուխը երկու ձեռքերուն մէջ առնելով լալով գետին ինկաւ։ Բանտարկեալները կը խնդային և Զազուպրինա գոհ էր։

Սակայն իրմէ զատ, բանտին մէջ, ուրիշ առանձնաշնորհեալ էակ մ'ալ կար, չիկագոյն, չտրածճի ու խաղցող կատու մըն էր։ Երբ կալանաւորները լգարտէզ կ'իջնէին, Մինջքա հոն էր՝ մէկ անկուն մը կըծկըտած, կ'առնէին զայն շոյելով և իրարու գիրկ կուտային, թողով որ ձեռքերնին ու երեսնին ճանկուտէ։

Երբ պզտիկ կատուն կ'երեւէր, ամէնուն ուշադրութիւնը Զազուպրինայէն կը դառնար անոր վրայ։ Մարդը չէր հանդուրժեր կենդանիին նախադաս սեպուիլը և անշուշտ օրին մէկը վրէժը պիտի առնէր անկէ։

Գարնան գեղեցիկ օր մը, երբ կալանաւորները պարտէզին մէջ ցրուած էին, Զազուպրինա անկին մը ձգուած տեսաւ ներկի աման մը։ Մօտը գնաց, քիչ

մը խորհեցաւ, մատը մէջը թաթխեց ու մօրուքը ներկեց կանաչ գոյնով մը։ Ամէն մարդ խնդալ սկսաւ։ Պատանի մը օգտուիլ ուզելով Զազուպրինայի գիւտէն, վերի շրթունքը ներկեց։ Սակայն Զազուպրինա շուտ մը ձեռքը ներկին մէջ թաթխեց ու տղուն քիթը բերանը քսեց։ Հանդիսատեսները քա՛հ քա՛հներով կը խնդային ու միմօր կը քաջալերէին։

Սյդ պահուն շեկ կատուն երեւցաւ։ Կամաց կամաց կը քալէր ան, թաթիկները մեղմօրէն վերցնելով ու պոչը տատանելով։

— Ընկերնե՛ր, պօռաց մէկը, Մինջքան եկաւ։

— Նա՛, Մինջքա, սրիկա՛ քեզ։

— Աղւո՛րս։

Գրկեցին կատուն և ձեռքէ ձեռք անցուցին հազարումէկ գգուանքներով։

— Օ՛հ, ինչչա՞փ ալ կերեր է, փորը ի՞նչպէս ուռեր է։

— Ո՛րքան շուտ կը մեծնայ կոր։

— Կը ճանկէ կոր, սատանորդին։

— Թո՛ղ տուր քիչ մը ցատքէ։

— Կոնակիս վրայ գիր... ցատքէ՛, Մինջքա։

Զազուպրինայի քովը մարդ չէր մնացեր։ Մինակ էր, պէխերուն վրայի ներկը սրբեց և բանտարկեալներուն կոնակին վրայէն ցատքող կատուն դիտեց։ Ամէնքն ալ կը ջանային Մինջքաի փափաքները կատարել։ մէկը կոնակը կը ծռէր, միւսը կը թոթուրուէր՝ որ աւելի դիւրաւ ցատքէ։ Շատ զուարճանալու երեւոյթն ունէին և խնդուածքնին վերջ չունէր։

— Ընկերնե՛ր, կատուն ներկե՛նք, գոչեց Զազուպրինա։

Այս կատակը առաջարկելով ձայնը կարծես կը պաղատէր :

Կալանաւորներուն հետաքրքրութիւնը արթնցաւ :

— Հապա՛ եթէ սատկի՛, ըսաւ մին :

— Քիչ մը ներկով կը սատկի՞ :

— Օ՛ն ուրեմն, Զազուպրինա, շո՛ւտ ըրէ :

Խոշոր ստահակ մը, հրագոյն պէսերով գոչեց .

— Ինչե՞ր ալ կը մտածէ, սա տղան :

Զազուպրինա, կատուին վզէն բռնած դէպի ներկի ամանը կը յառաջանար երգելով՝

Տեսէ՛ք, պզտիկ եղբայրներ,

Տեսէ՛ք, պզտիկ կատուն

Որ շիկագոյն է կանաչի կը փոխուի :

Ահագնադղորդ քա՛հ քա՛հ մը թռաւ ամէնուն կողորդէն : Կալանաւորները կուշտերնին կը բռնէին խնդալէն, և Զազուպրինան կը տեսնէին, որ կատուին թունջէն բռնած հեղուկ զանգուածին մէջ կը թաթխէր երգելով՝

Մի՛ մլաւեր, քաչէ՛ ձայնդ

Կը նեղացնես հայրիկդ :

Խնդուած քը ծայրագոյն աստիճանին հասեր էր, կը մարմրէին, կը գալարուէին, շունչերնին կը կտրէր : Խցիկներու պատուհաններէն ռալերու մէջ ծածկուած կիներու գլուխներ կ'երեւային : Հսկողը պատի մը կռթնած փորը կը բռնէր ուրախութեան խանչիւններ արձակելով :

Հանդիսատեսները խնդալով՝ քիչ մը հեռացեր էին ներկի ամանէն : Զազուպրինա չտեսնուած պարեր կը ձեւացնէր, խոնարհութիւններ կ'ընէր ու կ'երգէր :

Հա՛, հա՛, կեանքը զարմանալի բան է,

Շեկ կատու մը կար էգ :

Եւ իր ձագը շեկ

Մամուռի պէս կանաչ է :

— Կը բաւէ՛ ալ, պաղատեցաւ խոշոր պեխերով մարդը : Զազուպրինա կատուն գետին դրաւ, սալաքարերուն մէջտեղ բուսնող խոտի խուրձի մը վրայ :

Քրքիչները դադրեցան, խնդալէ յոգներ էին : Մի-նակ Զազուպրինա կը շարունակէր երգը և կատուն կը մլաւէր խոտին մէջ սողալով . ներկը կը կուրցնէր աչքերը, դողդղած ոտքերուն վրայ կը տատանէր, գլուխը խոշորցած, կարծես թէ խոտին փակած էր :

— Ի՛նչ աղւոր բան ըրիր, գոչեց կալանաւորներէն մին :

Ամէնքն ալ իրենց արուեսագետին կը նայէին, հիացումով մը՝ որ կը սկսէր պաղիլ :

— Կը մլաւէ կոր, ըսաւ պզտիկ ստահակը կատուին նշմար ընելով : Եւ ընկերներուն դարձաւ : Անոնք ալ կատուին կը նայէին ու կը լռէին :

— Ամբողջ կեանքին մէջ կանա՞չ պիտի մնայ, հարցուց ստահակը :

— Ի՛նչքան կեանքը մնաց որ, պատասխանեց շեկ մազերով մէկը, գետին չոքելով կատուին քո-վիկը : Հիմա արեւին պիտի չորնայ ներկը, մազերը փակին պիտի ու ինքն ալ վերջապէս պիտի սատկի :

Եւ պզտիկ կատուն կը մլաւէր սրտակեղէք ձայնով :

— Պիտի սատկի՞, հարցուց ստահակը, եթէ լուանք չաղէ՞կնար :

Մէկը պատասխան չտուաւ . Պառտիկ կանանչ կատուն կը տասվտիէր այդ կոշտ մարդոց ոտքերուն տակ :

Կալանաւորները կանգ առին: Մէկիկ մէկիկ հե-
ռացան վերջին հարուած մըն ալ տալով:

Երբ ցրուեցան, Չազուպրինա գետինը պառկած
մնաց երեսի վրայ. ուսերը կը դողային, կը հազար,
կը թքնէր...: Յետոյ ելլել ուզեց, դանդաղօրէն,
կարծես վախնալով որ գետնէն բաժնուելով մարմինը
կտոր կտոր պիտի ըլլայ: Չախ ձեռքը հողին կոթն-
ցուց, սրունքին մէկը ծռեց և շան պէս ոռնալով՝
նստեցաւ:

Դողդիւցող քայլերով պատին քովը գնաց, ձեռքը
երկարելով անոր կրթնեցաւ և զուլս վար կախեց: Կը
հազար...

Սեւ կաթիլներ հողին վրայ կաթկթեցան. պատը
չաղտոտելու համար, Չազուպրինա կը ջանար արիւնի
այս կաթիլները գետինը կաթեցնել:

Վրան կը խնդային...

Անկէ ետքը պզտիկ կատուն անհետացաւ և Չա-
զուպրինա այլ եւս մրցակից չունէր:

ՄԱՔՍԻՄ ԿՕՐՔԻ

ԿԱՐԳՈՒԵԼՈՒ ՀՈՄԱՐ ԿԱՐԵՒՈՐ ԽՐԱՏՆԵՐ

Պօղոս Առաքեալ ըսած է որ եթէ կարգուիք աղէկ
կ'ընէք: — Ըսած է նաեւ որ՝ եթէ չկարգուիք՝ աւելի
աղէկ կ'ընէք:

Այս հակասական խօսքերն իրարու հետ հաշտե-
ցնելու և Պօղոս առաքեալն ալ սուտ հանելու համար
սա՛ կարեւոր խրատները կուտամ:

1.— Առաջին անգամ երբ նշանածիդ տունն եր-
թաս, խըմպըլ մի՛ երեւիր:

2.— Ընդհակառակն՝ հետեւեալ այցելութեանց՝ չէնք
չնորհք ձախաւելութիւններ ըրէ:

3.— Բայց չըլլայ որ կեղծամդ սրահին ձեղու-
նէն կախուած ջահին կառչի:

4.— Կամ ձախաւելութեամբ՝ նօթայի մը թեր-
թերը թղթատած միջոցին՝ դաշնակին յախճապակեայ
անօթը կոտրես:

5.— Կամ անզգուշութեամբ զօքանչիդ սենեակը
մտնես:

6.— Նայէ որ արիւն քրտինք մտնելու չափ զո-
քանչիդ հետ պարես:

7.— Նշանածդ ալ երբ զարմիկին (բուզեմ) հետ
պարէ, դուն այն կողմը շատ մի՛ նայիր:

8.— Երբ աներդ պարապ խօսքերով զուլսդ կ'ու-
ռեցնէ, նշանածդ ալ իր Ֆինօյից հետ կը խաղայ,
դուն Ֆինօյին մի՛ նախանձիր:

9.— Սրահին պատկերները գովէ՛:

10.— Եթէ ընտանեաց պատկերները տգեղ ըլլան,
դուն չի տեսնելու զարկ:

11.— Նայէ՛ որ սիկառներդ հաւնեցնես աներոջդ:

12.— Ճերմակեղէնդ՝ զօքանչիդ:

13.— Ծնորճակից կոտրտուքներդ՝ նշանածիդ:

14.— Նուէրներդ ալ՝ բոլոր ընտանեաց:

15.— Երբեք մի՛ քններ թէ՛ նշանածիդ գոհարե-
ղէնները կե՞ղծ են թէ՛ ստոյգ:

16.— Գործերուդ համար մի՛ գանգատիր, ընդ-
հակառակն միշտ գովէ թէ՛ լաւ վիճակի մէջ են:

17.— Եւ ապացուցանելու համար զայն, դրամօ-
փտն համրուելու ատեն քիչ մը խաբուէ:

Եւ այն ատեն ապահով եղիր թէ՛ կենացդ երկրորդ
խենթութիւնը պիտի ընես և թէ՛ Պօղոս Առաքեալն
ալ պզտիկ պիտի ինչայ:



ՀՈԳԵՅԱՐՑՈՒԹԻՒՆԸ

ՀՐԱՏ ՄՈՂՈՐԱԿԻՆ ՂՐԱՅ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԸ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Շատ անգամ կ'ըսեն թէ հրաշալին անհետանալու վրայ է արդի աշխարհէն՝ տեղի տալով գիտութեան յաղթանակներուն առջեւ: Աւելի լաւ է ըսել թէ ան՝ ձեւն ու տեղը փոխած է միայն: Հրաշալին մեր մէջը կը կրենք, և գիտութիւնն է որ կը հաստատէ անոր գոյութիւնը, կը քննէ զայն ու կը նկարագրէ: Աւելի ի՛նչ տարօրինակ բան կ'ուզէք մեր հոգին իբր թատր ունեցող երեւոյթներէն: Շատ անգամ թեթեւ պատճառի մը ազդեցութեան տակ, գործարաններուն բնական շարժքը կը խանգարի, զգայարանքները զարմացուցիչ զօրութիւն մը կ'ունենան, անանկ յատկութիւններ կ'առնեն՝ որոնցմէ չէինք կասկածիր մենք, կամքը կ'ոչնչանայ, յիշողութիւնը կ'անհետի, մեր էութեանը մէջ իսկ թագչող զօրութիւններ երեւան կ'ուզան որոնց անզգայ գործիքները կ'ըլլանք մենք:

Տարօրինակ երեւոյթներ. — Քսանըհինգ տարեկան աղջիկ մը որ կարդալ իսկ չգիտեր, հիւանդ կ'ըլլայ.

ու կ'սկսի լատիներէն, հին յունարէն ու նախկին եփրայեցերէն լեզուով երկար կտորներ արտասանել: Առողջանալէն վերջը հազիւ կրնայ շիտկէ շիտակ մայրենի լեզուն խօսիլ: Տեղեկութիւններ քաղեցին ու հասկցան որ ինը տարեկանին գիտուն հօրեղբայր մը զանի որդեգրած էր. այս լեզուագէտը սովորութիւն ունի եղեր, ճաշէն վերջը պտտելով եփրայեցերէն ու լատիներէն ոտանաւորներ արտասանել: Գիրքերը նայեցան և տեսան որ անոր ամենէն շատ սիրած կտորներն էր որ հիւանդը կ'արտասանէր:

Սպանիացի դեսպանի մը սենեկագանը ուղեղային ջերմ ունեցաւ. բանդագուշակած միջոցին ճառեր կ'արտասանէր զանազան կառավարութիւններու քաղաքական շահերուն վրայ. այն աստիճան որ դեսպանը մտաւորած էր զայն իրեն քարտուղար կարգել. սակայն երբ հիւանդը առողջացաւ՝ ըսածներուն բոլորն ալ մոռցաւ:

Ասոնց նման ուրիշ շատ դէպքեր ալ կարելի է յիշել որոնց ամենէն զարմանալին հետեւեալն է: Աւստէրլիցի պատերազմին մէջ զինուոր մը վիրաւորուեցաւ և անկէ ի վեր ինքզինքը մեռած գնտէ եղեր: Երբ իր վրայ լուրեր հարցնեն՝ կը պատասխանէր. «Գիտնալ կ'ուզէք թէ հայր Լամպէր ի՛նչպէս է: Ան մեռած է հիմա. գնդակ մը սպաննած է զայն. ձեր տեսածը ետքէն շինուած բան մըն է. ըսէ՛ք որ հատ տեսածը ետքէն շինուած բան մըն է. ըսէ՛ք որ հայր մըն ալ չինեն»: Ինքզինքին վրայ խօսելով, հայր մըն ալ չինեն:» Ինքզինքին վրայ խօսելով, հայր Լամպէր բնաւ «Ճս» չէր ըսեր, հապա «Ասիկա»:

Այս մարդուն մէջ անձնակախութեան կրկնութիւն լառաջ եկած էր, այնպէս որ բնաւ զգայութիւնը չունէր իր յատուկ կացութեանը:

Տօքթ. Մագնիզ ամերիկացի տիկին մը կը դար-

մանէր. այս կինը երկարատեւ քունէ մը ետքը իր ամբողջ գիտցածին յիշատակութիւնը կորսնցուց : Ստիպուեցաւ նորէն հեգել սորվիլ, կարդալ, գրել, հաշուել ուսանիլ, առարկաները ու անձերը նորէն ճանչնալ : Քանի մը ամիս ետքը խոր քունի մը մէջ ինկաւ, արթննալէն ետքը իր առջի ամբողջ յիշողութիւններուն տէրն էր. նախորդ ծանօթութիւնները պահած, երիտասարդական յիշատակները մտքին մէջ. մինչդեռ բացարձակապէս մոռցած էր երկու քուներու միջեւ անցած ժամանակին ծանօթութիւնները : Չորս տարիէն աւելի այս երեւոյթը շարունակեց փոփոխակի՝ խոր քունի մը մէջ ընկղմելէ ետքը առաջի գոյութիւնը մոռնալով և այսպէս մի կամ միւս վիճակին մէջ ապրելով : Նէ՛ ապրելու առաջին կերպը կը կոչէր «հին վիճակ», իսկ երկրորդը՝ «նոր վիճակ» : Առաջին վիճակին մէջ նէ կը պահէր բոլոր նախկին ծանօթութիւններուն յիշողութիւնը. մինչ նոր վիճակին մէջ միմիայն հիւանդութեանը ժամանակ ունեցած ճանաչողութիւններուն միայն գիտակից էր : Հին վիճակին մէջ գեղցցիկ գրութիւն մը ունէր, մինչ նոր վիճակին մէջ շատ աղտոտ կը գրէր :

Աւելին կայ : Այս անձնաւորութեան կրկնութիւնը, այս կրկին կեանքը մենք ալ կրնանք յառաջ բերել. քնէածուծութեան պարագան ուրիշ բան չէ :

Առնենք պարզ օրինակ մը, ուրկէ ամէն աչքի խաբէութեան վանուած է : Հիւանդոտ աղջիկ մը որ հիւանդանոցին մէջ կը խնամուէր. գործաւորուհի մըն է սա՛ որ ամէն հարցումի չնորհալի պատասխան կուտայ, և սովորական կեանքին մէջ ամէն մարդու պէս կը խօսի ու կը վարուի : Աչքին թարթիչները կամաց մը իջեցուցէք ու պահ մը յետոյ վեր առէք : Ըստ

երեւոյթին փոխուած բան մը չկայ : Գլուխը խաւաքարդի թերթ մը դրէք և իրեն ըսէք որ պսակ մըն է դրածնիդ : Անմիջապէս իշխանուհիի մը վեհութիւնը պիտի առնէ, հրամայական ձայնով մը խօսի և մեծ տիկնոջ մը շարժուածքերն պիտի կատարէ : Գաւաթ մը ջուր տուէք իրեն և ըսէք որ գինի է. խմելէն ետքը գինովի մը նման պիտի դանդաղէ :

Սորհեցէ՛ք վայրկեան մը այս տարօրինակ երեւոյթին վրայ. անհատի մը տարիներէ ի վեր ունեցած անձնականութիւնը կ'առնէք. խօսելու, մտածելու, ապրելու կերպերն ու սովորութիւնները կ'առնէք և իրմէ՛ ձեր առջեւ մօային զանգուած մը միայն կը մնայ, զայն կ'ոգեւորե՛ք պարզ հաստատումով, ուզածնիդ կ'ընէք զայն. զթառառ մէկը կամ աւազակ մը, վատ մը կամ դիւցազն մը : Ասկէ աւելի հրաշալի բան մը գոյութիւն կրնա՞յ ունենալ :

Ձեր գործիքը եղող անհատին ի՛նչպէ՞ս կրել կուտաք այս փոփոխութիւնները, ի՞նչ կ'անցնի անոր ուղեղին մէջ այդ վայրկեանին :— Շիտակը խօսելով բան մը չենք գիտեր :

Տօքթ. Ճէյմս Կրէկօրի՝ 1758ին Լուիսպուրկի արշաւախուժարին մասնակցող սպայի մը պատմութիւնը կ'ընէ : Յերեկուան լոյսին, աչքերը բաց, այս սպան կ'երազէր, ինքզինքը ուրիշ աշխարհի մը մէջ կը կարծէր և ըստ այնմ կը շարժէր : Նոյն իսկ կարելի էր երազին ընթացքը ուղղել ականջն ի վար զանազան հրահանգներ ըսելով : Իր ընկերները շատ կը զուարճանային ասով : Անգամ մը երբ սնտուկի մը վրայ նստած էր՝ անանկ հաւատացուցին թէ ծովը ինկած է և խրատեցին որ լողալով ինքզինքը ազատէ. անմիջապէս լողացող մէկու մը շարժումները սկսաւ կատա-

րել, Ըսին թէ շանաձուկ մը ետեւէն ինկեր է ու ազատելու համար ջուրին մէջ մխրճելէ ուրիշ ճար չկայ. սնտուկին վրայ նստած տեղէն ընկղմելու ձևով անանկ մը ինքզինքը վար նետեց որ ծանր ճմուռածքներ ունեցաւ :

Բանական ու բանդազուռակ. — Էլէն Սմիթ երեսուն տարեկան գեղանի ու գեղեցիկ կին մըն է, մտացի դէմքով, սեւ աչքերով ու մաղերով, խորունկ նայուածքով մը որ յափշտակեալ երեւոյթ չունի բնաւ. տեսքը համակ առողջութիւն կ'արտացոլայ : Բարիզի մեծ վաճառատուններէ մէկուն մէջ պաշտօնեայ է ու լաւ յարմարութիւն ցոյց կուտայ իր գործին : Անա՛ աղջիկ մը որ անագիւտ բարոյականի տէր է, ծնողներուն տունը կ'ապրի և հացը կը շահի անանկ գործի մը մէջ որ մտքի յստակութիւն և արթնամտութիւն կը պահանջէ : Իմացականութիւնը բաց է, զուարթ բնաւորութիւն մը ունի և ամէն բան քաղցրութեամբ կը կարգադրէ :

Հիմա՛ սա սնեակը մտէք ուր հազիւ թէ կէս-լոյս մը կ'ընէ. տասնի չափ անձեր բոլորակ սեղանի մը շուրջը հաւաքուած են խոր լուծեան մը մէջ : Այս տարօրինակ հաւաքոյթին վրայ մտախոով բան մը կարծես կը սաւառնի. գաղտնիք մը կայ այդ մթնոլորտին մէջ. օդին մէջը անսահմանելի ի՛նչ մը կը թառի՛ իբր թէ հանդիսականները կատարուելու վրայ եղող անձանօթ երեւոյթի մը սպասէին :

Յանկարծ ներկաներէն մին աթոռին վրայ կ'իյնայ : Քիչ մը առաջուան գոցուած աչքերը խոշոր կը բացուին, ապուշ տպուշ նայուածքը պարապութեան մէջ կը սեւեռի կամ առարկայներուն և ներկայներուն վրայ կը շրջի՛ առոնց դանոնք տեսնելու : Զգտած բիրերը

անշարժ կը մնան. դէմքը անթափանց ու անզգայ դիմակ մը կը դառնայ, կարծես թէ բոլորովին բացակայ է ան : Եւ փոխուած այս դէմքը, այլաճանաչ այս գիմակը, ինքզինքը մուսոյդ այս էակը՝ հանդարտարարոյ էլէն Սմիթն է :

Այս վիճակը քանի՞ ժամ պիտի տեւէ : Ո՞վ գիտէ. գուցէ ժամ մը, կամ երկու ժամ : Քանի մը վայրկեան ետքը էլէն կ'սկսի խօսիլ : Երբեմն, իր բնական ձայնովը կը նկարագրէ աչքին երեւցած տեսիլները : Երբեմն ձայնը կը փոխէ՝ նմանցնելով անոր որու տեղ ըլլալ կը կարծէ ինքզինքը : Սովորաբար խօսքը ներկաներէն մէկուն կ'ուղղէ և անոր հարցումներուն կը պատասխանէ :

Յաճախ կը խօսի գաղտնալի «ոգիի» մը վրայ որու անունը Լէթօլտ է և նէրա առաջնորդն ու պաշտպանն ըլլալ կը թուի : Սովորաբար սեղանին վրայ զարնուած Օր. հարուածներով երեւան կ'ուգայ ան. երբեմն ալ Օր. Սմիթի հետ կը միանձնանայ և անոր բերնով կը խօսի :

Սեղանին վրայ երեք հարուածներ կը յայտնեն թէ նիստը վերջացած է : Վերջնական զարթնումը տեղի կ'ունենայ քանի մը կարճատեւ զարթնումներէ յետոյ որոնք կ'ընդմիջուին ընդհանուր քուներով, ինքզինքին գալէն ետքը՝ էլէն բան մը չիշեր՝ քնեած վիճակին մէջ ըսածներէն :

Առեւտրական պատճօնեակին մը հրաւալի անձնափոխութիւնները. — Այս տագնապներու միջոցին էլէն Սմիթ՝ երկար ատենէ ի վեր մեռած մարդերու անձնաւորութիւնները կ'զգենու : Շատ անգամ իտալացի նշանաւոր բազդախնդիրի մը՝ ֆակիլիօթրօի՛ դերն է որ կ'ստանձնէ. նկարագրենք այս տագնապը սկիզբէն սկսեալ :

Ամենէն առաջ էլէն կ'զգայ որ բազուկներէն կը բռնեն, անհաճոյ, ցաւագին զգայնութիւններ կ'ունենայ վզին, ծոծրակին, կոկորդին մէջ. արտեւանունքները կը գոցուին, կոկորդը կ'ուռի ֆակլիթութրօի դէմքին նմանութիւն մը տալու աստիճան: Յետոյ մէկէն ի մէկ էլէն կը կանգնի, հպարտ դիրք մը կ'առնէ, ձեռքերը խաչաձեւուած կուրծքին վրայ: Ամէնուն հետ զուգելով կը խօսի, և իր շեշտէն իսկ կ'զգացուի հաւաքոյթին պետը՝ ներկայներուն «Եղբայր» և «Հապա դո՛ւն, քոյր» բառերը ուղղած ժամանակ: Երբ գիր կը գրէ՝ իբր ֆակլիթութրօ՝ գրութիւնը բոլորովին կը տարբերի իր սովորական գրէն:

Քանի մը անգամ էլէն տարօրինակ բառեր արտասանեց. ընդօրինակեցին զանոնք և նշանաւոր արեւելագէտներու քննութեան ենթարկելով տեսնուեցաւ թէ Սանսկրիտ լեզուաւ էին ատոնք: Ուրիշ առիթով մը պարբերութիւն մը ըսաւ, որ բոլոր ներկաներուն անհասկնալի էր. արարերէն առած մըն էր ան:

Հիմա պատմենք էլէն Սմիթի ցնորական տեսիլքներուն ամենէն զարմանալին: Հրատ մոլորակին վրայ ըրած այցելութիւնը:

Նախ էլէն նշմարեց շատ հեռուն ու բարձր՝ վառ լոյս մը: Յետոյ տատանում մը զգաց. գլուխը պարպալ ըլլալ կ'երեւէր և իրեն անանկ կուգար որ մարմին չունի: Կը ծածանէր ու վեր կը բարձրանար: Նոյն վայրկեանին երեք խոշոր գունդեր նշմարեց, որոնցմէ մին խիստ գեղեցիկ էր: «Ո՞ւր կը գտնուիմ» հարցուց: «Հողի մը վրայ. Հրատի վրայ» եղաւ պատասխանը:

Էլէն սկսաւ նկարագրել ի'նչ որ կը տեսնէր, առանց ձիւ և անիւի կառքեր կը վազվզէին կայծեր ար-

տադրելով, կառքի լապտերի ձեւով թռչելու գործիքներ, տուներ՝ որոնց տանիքին վրայ շատրուաններ կան, տարօրինակ լեզու մը խօսող մարդեր, որոնք սայթաքելով զիրար կը բարեւեն, օրորոցի մէջ տղաքներ՝ որոնց վրայ երկաթէ հրեշտակներ թեւերնին կը բանան իբր վարագոյր, եւլն.:

Անծանօթ աշխարհներու մէջ այս առաջին ճամբորդութիւնը կատարելէ ետքը, նոր քնէածական փորձերու մէջ կրկին այցելեց Հրատը և կամաց կամաց հոնտեղի լեզուն սկսաւ գրել ու խօսիլ: Այս ճամբորդութիւնները ա'յնքան կրկնուեցան որ՝ անոնց միջոցին էլէնի ըրած նկարագրութիւնները կորսնցուցին իրենց անկապակից նկարագիրն ու աւելի ամբողջական երեւոյթ մը առին:

Հրատի բնակիչներուն կեանքն ու բարքը. — Դեղձի կամ վարդի գոյնով լեռներու և ժայռերու տարածութիւն մը ծածկուած է ծիրանի գոյն բուսաբերութեամբ մը՝ որոնց մէջէն վեր կը ցցուին կղմիտրագոյն ծառեր սև տերեւներով ու ոլորուն բունով: Մաշկները՝ գետնին վրայ ամէն տեղ կը բուսնին եւ լիլա գոյնովին բաւական հետաքրքրաշարժ են:

Անգամ մը էլէն ինքզինքը Մանկարանի մը մէջ գտաւ: Ահագին սրահ մըն էր սա որու չորս կողմը պատերուն գամուած էին սեղանի նմանող դարակներ. պատերուն իւրաքանչիւրին մէջ մէյմէկ տղայ կար, մարտոնց իւրաքանչիւրին մէջ մէյմէկ տղայ կար, մարտոնց գլուխը տափակ ու լայն է, առանց մազի. խոշոր աչքեր ունին որոնք անոյշ նայուածք մը կը ձգեն, մարմիննուն ձեւը քշիկ մը մեր այծերուն կը նմանի, սակայն ասոնց պոչը տափակ է, ծիծերնն քառակուսի

գործիքներու մէջ առնուած է որոնց ծայրէն կը մեկնի խողովակներ, Հրատցիները այս խողովակին միջոցաւ կը դիեցնեն մանուկները :

Օր մը էլէն՝ գտնուած քաղաքին կառավարիչին Ասթանէի ընկերակցութեամբ խնջոյքի մը ներկայ գտնուեցաւ : Ահագին քառակուսի հանդիսասրահ մը լուսաւորուած էր չորս անկիւնները զետեղուած լապտերներով : Այս լապտերները կը բաղկանան իրարու վրայ դրուած չորս գունդերէ : Երկուքը կապոյտ, երկուքն ալ վարդագոյն՝ որոնք աւազանի մը մէջ կը մնան : առատութեան եղջիւր մը ջուր կը վազցնէ անոր մէջ : Ամէն կողմ առատօրէն ծաղիկներ կը զարգարէին : սրահին մէջտեղ կար պուրակ մը որու շուրջը շարուած էին անագապղինձի նման փայլող մանրիկ սեղաններ :

Այս դիւղիչ զարդարանքին մէջտեղ խառնուած էր զուարթ հանդիսականներու բազմութիւն մը, երիտասարդ մանչեր ու աղջիկներ, որոնց մազերը ետեւի կողմէն վարդագոյն, կապոյտ կամ կանաչ թիթեռնիկներու ձեւով վարսուած էին :

Ասթանէի կողմէ տրուած նշանի մը վրայ բոլոր հանդիսականները նստան սեղաններուն առջեւ որոնք ամբողջ ծաղիկներով զարդարուած էին : Երկու մարդիկ մին սպիտակ ու միւսը վարդագոյն հագուած սեղաններու վրայ զետեղեցին քառակուսի պնակներ ու առանց կոթի պատառաքաղներ : Յետոյ իբր կերակուր հրամցուցին ճերմակ ու կարմիր գաւազանիկներ՝ որոնց ծայրերը մէյմէկ ծաղիկներ կային :

Սոյն հանդէսը վերջացաւ պարերով ու երգով : Երգերէն մէկուն շատ հաւնած էր էլէն : Հոս կը դնենք զայն Հրատի լեզուով թարգմանութիւնն ալ դիմացը :

Ա .

Միքէ—էվաի—Տիվիէ—Չէ—նիքէ Բրիգի—Գարբի—նէ Այէ—Օրիէ—Անթէխ—է—եզէ—Գարեմի—նի—Եզի—էրիէ—է—նիէ—Բավիէ—Հէտ—լէ—Սատրի—Տէ—Չէ—Վէխիւր Թիզիւնէ :

Բ .

Մաթէմի—Միզարմէ—Բալէ— Իւմէզ— Էսսաթէ— Արփա—Թի—էզինո—Իւտանի—Ամէս— Թէս— Իւրի— Ամէս—Սանտինէ Թան—Թիզի—էվաի—Տիվիէ :

Ա .

Միքէ—Երջանիկ—եղիր—Սեւ—Պզտիկ—Թոչունը Երէկ—Եկաւ—Չարնիլու—Իմ—Պատուհանիս—Եւ—Հոգիս—Բերկրեցաւ—Անիկա—Երգեց—Վաղը—կը—Տեսնաս զայն :

Բ .

Մաթեմի—Չիս—Ապրեցնող—Ծաղիկը—Երազներուս—Արեգակը—Եկուր—Այս—Իրիկուն—Եկուր—Երկայն—ժամանակ—Իմ—Բոզս—Երջանիկ—Եղիր :

ԿԵՐՊԱՍՆԵՐՈՒ ՎՐԱՅԷՆ ԻԻՂԻ ԲԻՄԵՐԸ ՀԱՆՆԷԼ

Առէ՛ք 270 կրամ բեւեկնի խէժի ոգի (Թիրեմեքի բուհու), 31 կրամ ալբու (40 աստիճան), 31 կրամ ծծմբային եթեր (էքեթ Սիլվիւրիֆ) : Իրար խառնեցէք, շարժեցէք և ապա պահեցէք ապակեայ խիցով ամրափակ սրուակի մը մէջ : Այս գեղաջուրը գործա-

ծելու համար, մաքրուելիք կերպասը կը դնէք քանի մը ծալք կտաւի վրայ, իւզոտուած կամ աղտոտ տեղը կը թրջէք անով և ապա ուրիշ բարակ կտաւով մը թեթեւակէս կը չփէք մինչեւ որ կերպասը չորնայ և բիծը ելլէ, եթէ բիծը հին է, աւելի աղէկ է որ անոր տեղը նախ քիչ մը տաքցնէք և ապա դեղը գործածէք:

ՁՄԵՌՈՒԱՆ ՄԷՋ ՎԱՐԴ ՈՒՆԵՆԱԼ

Մայիս ամսուան մէջ, երբ վարդենիները ծաղկելով վարդերը բացուիլ սկսին, չի բացուած կոկոններէն շատ մը ժողուեցէք և չափազանց բարակ ու չոր աղի մէջ պահեցէք: Աղը պէտք է կրակի վրայ չորացուցած ըլլաք, ձուլածոյ փոքրիկ ամանի մը մէջ, բայց պէտք է ամանին խուփը մասամբ գոցել, որ չըլլայ թէ աղին ճարձատիւնը ձեր աչքերուն վնասէ: Աղը սանին մէջ չորնալով, խիստ բարակ փոշիի մը պիտի վերածուի: Յետոյ այս աղի փոշիէն մաս մը կը լեցնէք ամանի մը մէջ և վարդի կոկոնները մէջը կը շարէք, այնպիսի կերպով մը, որ իրարու չգպչին: Ամանին մնացած մասն աղով կը ծածկէք, և բերանն ալ ամրափակ կը գոցէք, որ չըլլայ թէ ներս օդ մտնէ:

Վարդի կոկոններն աղի մէջ թաղելէ ետքն, երբ քանի մը ամիս վերջը հանէք պիտի տեսնէք որ բոլորովին չորցած են, բայց մի՛ վախնաք, քիչ մը կոթէն մկրատով կտրեցէք և ջրով լեցուն ծաղկամանի մը մէջ դրէք ապա զարմացմամբ պիտի տեսնէք որ չորցած ու մեռած կարծուած կոկոնները քիչ քիչ պի-

տի վերակենդանանան ու վերջապէս պիտի բացուին: Այս յարութիւնը թէեւ վաղանցիկ բան մը պիտի ըլլայ, սակայն ո՞վ չի բաղձար ձմեռուան մէջ գոնէ օր մը բացուած վարդի մը տեսքը վայելել:

Պ Ա Ր Տ Ք Մ Ի Ը Ն Է Ր

Անտանելի սիրտ հատնում. . . ի՛նչպէս ալ շուտ կը ծերացնէ մարդը. դեռ քանի՛ տարեկան եմ. որջա՛փ աշխոյժ և կայտառ էի:

— Առաջին անգամ մեծ դժուարութեամբ կրցայ պարտք ընել, Ներսէս ձայն մը կը դիմադրէր, կարծես թէ ոճիր մը պիտի գործէի, մտիկ չըրի, որովհետեւ պէտք ունէի, վարժուեցայ, նորէն պարտքեր ըրի, բայց առաջին օրէն ի վեր անգամ մ'ալ հանգստութեան երես չտեսայ:

— Պարտք ունենալ և չկրնալ վճարել—անկէ աւելի սոսկալի բան չկայ աշխարհի վրայ:

— Սենեակդ նստեր գործով մը կը զբաղիս, բան մը կը մտածես, կամ ուրախ գուարթ քանի մը բարեկամաց հետ կը խօսակցիս, կ'ըրօսնուս. յանկարծ դուռը կը դարնեն, քեզ կ'ուզեն, մէկը ձեռքը հաշուութուց մը, կամ մուրհակ մը, կը ներկայանայ և դրամ կ'ուզէ, ինչ որ չունիս: Պէտք ես ճամբել, այսինքն խնդրել, համոզել, խոստանալ և սուտ խօսիլ, կ'երթայ նա, և հետը կը տանի գործդ, մտածումդ, զուարթութիւնդ, և ամէն ինչ:

— Փողոցը կեցեր ես, կարեւոր խնդրոյ մը վրայ

կը թնդայ : Արդեօք երբ պիտի դան բարապաններն ու գրագիրները, և տմարդութեամբ փողոց նետեն կարասիքս, այսինքն զիս — չէ՞ որ մեր գոյքը նոյն ինքն մեր անձն լսել է — և յանձնեն արդարութեան ճիրանին : Ի՛նչ անպատուութիւն :

Բարեկամ, քեզ կը յորդորեմ պարտք չընել : Պարտք ընելը քու ձեռքդ է, իսկ վճարելը՝ պարագաներուն : Չգայուն և վեհանձն մարդու մը համար պարտքը դժոխք է, չկրնար վճարելն՝ անարգութիւն : Պարտքը քեզ ստախօսութեան կ'առաջնորդէ, ստախօսութիւնը՝ խաբեբայութիւն է, խաբեբայութիւնը՝ գողութիւն : Գուցէ որ մ'ալ ձեռքէդ բռնէ և զքեզ բանտին սեմէն ներս հրամցնէ :

(Պալլաֆ)

Թարգմ.
Ա. Գ.

Ս Պ Ա Ս Ո Ղ Կ Ա Ռ Ա Պ Ա Ն Ը

Լորտ Չէսթէրֆիլի, որ որքան հարստութիւն՝ նոյնքան ալ արտառոց բնաւորութիւն : Բ'ունէր : Օր չէր ըլլար կամ շաբաթ մը չէր անցնէր որ մէկ յիմարութիւն չընէր, բայց չէր ալ ուզէր որ մէկը իր խենդութիւններուն երեսէն վիսա կրէ, ու երբ անոնք որ իր արարքով ծանր կորուստ մը տուած է, քառապատիկը կը վճարէր :

Օր մը՝ բարեկամի մը այցելութեան երթալու պարտաւորուած ըլլալով՝ հագուած ապրանքէն դուրս ելաւ և հետիոտն քալել սկսաւ : Բայց քիչ յետոյ բարակ

անձրեւ մը սկսաւ գալ : Եւ որովհետեւ հովանոց կրելու սովորութիւն չունէր, անմիջապէս վարձու կառք մը բռնեց, և մէջը տեղաւորուելով՝ երթալիք տեղին հասցէն տուաւ կառապանին :

Կառքը սկսաւ սուրալ՝ Թայմզ գետին երկայնքը : Երբ փոքր նաւահանգիստ մը հասաւ, Լորտը իր մէկ բարեկամին ընտանեկան խումբը անսնելով՝ հրաման ըրաւ կառապանին որ կանգ առնէ ու իրեն սպասէ : Իսկոյն կառքը կեցաւ և Լորտ Չէսթէրֆիլտ շուտափոյթ այս խմբակին քով հասաւ, որովհետեւ անոնք ալ զինքը տեսնելով՝ կանք առած էին :

Քիչ մը խօսակցելէ յետոյ Լորտը տեղեկացաւ որ այդ բարեկամը՝ քանի մը ամսուան համար զրօսական պտոյտ մը պիտի ընէ իր ընտանիքով դէպի Ամերիկա, և իր զրօսանաւը երթալու համար նոյն նաւահանգիստէն մակոյկ պիտի նստէին :

Վերջին մնաք բարոյն շոգեհուսին մէջ ըսելու համար՝ Լորտ Չէսթէրֆիլտ ձեռքով նշանացի իմացուց կառապանին որ սպասէ, ինք եւս ընտանեկան խումբին միացաւ և ուղղակի զրօսանաւը գնաց :

Հոն մէկ քանի ժամ տեսակցութենէ և քանի մըն ալ գաւաթ ու խքի կնձելէ յետոյ, ամբողջ ընտանիքը թախանձագին խնդրեցին Լորտէն որ ինքն ալ մասնակցի այն զրօսական պտոյտին : Եւ որովհետեւ զուլաները բաւական տաքցեր էին, Լորտ Չէսթէրֆիլտ իր հաճութիւնը տուաւ և շոգեհուսն ալ տրուած հրամանին համեմատ անմիջապէս ճամբայ ելաւ :

Երեք ամիս տեւեց սոյն զրօսական պտոյտն, և շոգեհուսը վերադարձաւ նոյն նաւահանգիստը ու երկաթ նետեց :

Ամբողջ ընտանիքը ցամաք ելաւ, ինչպէս նաեւ

Լորտ Չէսթէրֆիլտ ալ, եւ ինքզինքը դէմ առ դէմ գտաւ երեք ամիս առաջ հոն թողած կառքին, որու նստարանին վրայ կառապանն անհոգ կերպով իր ծխամորճը կը ծխէր :

Երբ Լորտը մօտեցաւ կառքին, կառապանը մտրակը ձեռքն առնելով՝ կառքին դուռը բացաւ ու Լորտը ներս հրամցուց :

Լորտ Չէսթէրֆիլտ կառքը նստելէն յետոյ՝ կառապանը հարցուց թէ՛ առջի տուած հասցէն պէտք է երթալ :

— Ո՛չ, պատասխանեց, Լորտն ու իր ապարանքին հասցէն տուաւ :

Կառապանն ուղղակի ապարանքը դիմեց, եւ հոն հասնելուն Լորտը իր գրպանէն երկու շիլին հանելով՝ կառապանին ձեռքը դրաւ :

— Ի՞նչ է այս, ազնիւ Լորտս, հարցուց կառապանն, ձեր պարտքն է 1512 շիլին, որովհետեւ իմ կառքս նստած օրերնիդ յունիսի 2ն էր, իսկ այսօր սեպտեմբերի 4ն է, 92 օրական, վեց շիլին օրական վարձքը՝ կ'ընէ 582 շիլին, իսկ գիշերուան վարձքը՝ 10ական շիլին 932, համագումար 1512: Կանոնաւոր տետրակ բռնել սկսեցի՝ երբ ձեր բարձրութիւնը հրաման ըրաւ՝ որ իրեն սպասեմ, և յետոյ չօգնեաւով մեկնելնիդ անսայ: Յանցապարտ պիտի գտնուէի՝ եթէ ձեր եկած միջոցին հոն չգտնուէի:

— Այո՛, այո՛, իրաւունք ունիք, ու ես պարտաւոր եմ վճարել ձեր պահանջքը, ու անմիջապէս վճարեց 1512 շիլինը ու ապարանքէն ներս մտաւ՝ այն դէմքով՝ իբր թէ իր բարեկամին այցելութենէն վերադարձած է :

ՍՈՂՈՄՈՆ ԵՒ ԵՐԿԱԹԱԳՈՐԾԸ

Սողոմոն՝ երբ Երուսաղէմի հոյակապ և սքանչելի տաճարին շինութիւնը աւարտեց, փափաքեցաւ մեծահանդէս խնջոյք մը տալ անոր շինութեան աշխատող ճարտարապետներուն ու գործաւորներուն՝ ուստի հրաման ըրաւ իր մատակարարին որ՝ այն ինչ օրը հրաւէր զրկէ բոլոր աշխատաւորներուն ներկայ զտնուիլ սոյն խնջոյքին :

Մատակարարը՝ սոյն հրամանը ի գործ դնելով տաճարին մէջ պատրաստեց փառաւոր սեղան մը՝ և բոլոր գործաւորները կարգաւ շարուեցան սեղանին բոլորտիքը: Սողոմոն եւս գալով բազմեցաւ սեղանին զլուխը եւ հրամայեց ճաշ սկսելու :

Դեռ ճաշը չէր աւարտած՝ երբ տաճարին դրան ուժգին հարուած մը տուին դուրսէն: Սողոմոն հրաման ըրաւ որ դուռը չի բանան եւ ո՛չ մէկն իր տեղէն ելլէ :

Բայց հարուածները հետզհետէ աւելի բուռն կերպով կը կրկնուէին՝ եւ տաճարն հիմէն կը թնդար: Սողոմոն եւ բոլոր բազմականները կը զարմանային թէ՛ ո՞վ կրնար ըլլալ այս յանդուգն արարածն որ անոանց վախի՛հարուածներուն ուժգնութիւնը կը բարձրացնէր շարունակ՝ առանց գոնէ վայրկեան մը դադար առնելու :

Վերջապէս Սողոմոն չի կրնալով այլ եւս համբերել այս յանդգնութեան՝ հրամայեց որ դուռը բանան, տեսնելու համար թէ ո՞վ է այս մարդն ու ի՞նչ կ'ուզէ :

Տաճարին դռները բացուեցան, եւ ահա՛ ներս մտաւ յաղթահասակ եւ երեսն ու ձեռքերը մրտա ծխոտ մարդ մը, որու ձեռքը կար ահագին մուրճ մը:

Սեղանին առջեւ կանգ առաւ, եւ հրամայող ձայնով մը, ուղղակի Սողոմոնին հարցուց թէ՛ ինչո՞ւ համար զինքն ալ խնջոյքին չեն հրաւիրած:

— Բայց ո՞վ էք դուք, պատասխանեց Սողոմոն, եւ ի՞նչ յանդգնութեամբ կուգաք խոովել այսպիսի հանդէս մը:

— Երկաթագործ մ'եմ, ըսաւ մարդուկը խորխտ ձայնով, եւ ամենայն իրաւամբ կը պահանջեմ իմ պատուոյ տեղս այս սեղանին զուլան, քանի որ եթէ ես իմ արուեստովս այդ բոլոր գործաւորներուն գործիքները, տաճարին պէտք եղած երկաթները չչինէի, անկարելի էր որ այս տաճարը բոլոր գործաւորներով ու վարպետներով կարենայիք ի զուլս հանել: Հարցուցէ՛ք այս բոլոր արուեստագէտներուն, հիւսնեւորուն, քարակոփներուն, ծեփիչներուն թէ՛ իրենց գործիքները ո՞րու շինել կուտան:

Սողոմոն վերջին ծայր զարմացմամբ չորս կողմ ակնարկ մը նետեց, ու դատ զատ ամէն վարպետներուն հարցուց թէ իրա՞ն է այս մարդուն ըսածները:

— Այո՛, ըսին ամէնքն ալ, մենք մեր գործիքները այս մարդէն կ'առնենք, ու երբ մաշին կամ աւրուին՝ վերստին ասոր կը տանինք նորոգել տալու. հետեւաբար եթէ այդ գործիքները չունենանք, եւ ո՛չ մէկ գործ կրնանք յառաջ բերել:

— Շա՛տ իրաւունք ունիք եղբր, բարեկամ, ըսաւ Սողոմոն երկաթագործին դառնալով, բայց նախ եւ առաջ գացէք աղւոր մը լուացուելով մաքրուեցէ՛ք և յետոյ եկէ՛ք իմ աջ կողմս նստեցէ՛ք:

320 Քիլոմէթր քանճուքեամբ հողային պատեան մը:

— Երկիրս ուր մենք կ'ապրինք — եւ ասոր շնորհիւ միայն — ծածկուած է օդային պատեանով մը՝ մթնոլորտով: Առանց ասոր, մարդը, կենդանիները, բոյսերը պիտի դադրէին ապրելէ: Մեր արբանեակը՝ լուսինը՝ մթնոլորտ չունի — կամ մենք չենք տեսած — եւ ասկէ կը հետեւցնենք թէ լուսնի վրայ կենդանի արարած գոյութիւն չունի: Մեծ տարրաբան մը կ'ըսէ թէ « կեանքը խտացած օդ է »:

Շատ անգամ երկիրս ու իր մթնոլորտը կը նմանցնեն Նարինջի մը՝ որու կարմրուկ կեղեւը կը ծածկէ զայն: Պիօ Բնագէտը 48 քիլոմէթր կը հաշուէ մթնոլորտին բարձրութիւնը, իսկ Լիէ աստղագաշխն, արշալոյսի տեւողութեան վրայ հաշուելով 322 քիլոմէթր կուտայ օդի խաւին թանձրութեանը. այս վերջին թիւը կ'ընդունինք նաեւ ասուպներու զիտողութեամբ: Երկրիս տրամագիծը 13,000 քիլոմէթր. ըլլալով, միջոցին մէջ պիտի երեւի ան մշուշի մը, շոգիի խաւէ մը ծածկուածի պէս՝ որու թանձրութիւնը հազիւ իրենին քառասուներորդ մասն է:

Մթնոլորտի այս խաւը ծանր է, Թորիչէլլիի հռչակաւոր փորձը (1643ին) ցուցուցած է թէ՛ մինչեւ վերին խաւը հասնող օդի սիւնի մը ծանրութեան հակադեբալու համար 76 սանդիմէթր բարձրութեամբ սնդիկի սիւն մը պէտք է: Մէկ քառակուսի սանդիմէթր բարձրութեամբ սնդիկի սիւնակի մը ծանրութիւնն է 1033 կրամ ասկէ կը հետեւի թէ երկրիս մակերեսային իւրաքանչիւր քառակուսի սանդիմէթրը՝ նոյնքան ճնշում մը կը կրէ, որով ամբողջ երկրագունդին մակերեսի վրայ ծանրացող օդին ճնշումը 5

կը նետէ դուռին այն վակոնին ուր կը գտնուէր մեռելը, եւ որովհետեւ անոր պահպանները նախազգուշութիւն ունեցած չէին զայն բանալիով ալ գոցելու, կը բանայ ու կը մտնէ ներս: Անկիւն մը տեղաւորուելէ ետքը, երկար ատեն կը նստին երկու ուղեւորները, լուռ ու մունջ, վերջապէս ներս մտնող ճամբորդը, խզելու համար անվերջանալի լուրթիւնը, կը սկսի մենախօսել, օգին, ճամբորդութեան, շրջակայ տեսարաններուն վրայ, որոնց ամէնուն ալ պատասխան չըստանար միւսէն, որ անխօս անշուկ մոմի պէս կը ցցուէր անկիւնն ի վեր, աչքերը փակած, հանդարտ ու երջանիկ մրափի մը մէջ երազելու գիրքով, եւ ճամբորդը միշտ կը կարծէ որ, ան կը քնանայ: Մէկ մ'ալ, կառախուսմբի ուժգին մէկ ցնցումէն արձանացած ուղեւորը, որուն կապերը արդէն խախտած էին, պատանքի պէս գետին կը զլորի երեսի վրայ, իր սառած ձիք անդամներուն փայտացած կարծրութիւնը մեծագոյ զղբրդիւն մը հանելով գետին փոռած ատեն: Միւս ուղեւորը, անմիջապէս օգնութեան կը փութայ վերցնելու համար արկածեալ դժբաղդ ճամբորդը, որ իր խոր քունին մէջ, գետին գլտորուելու դժբաղդութիւնը կ'ունենար առանց զգալու:

Ո՛րչափ մեծ կ'ըլլայ զարմացումը կարեկից ճամբորդին՝ օգնութեանը փութացած մարդը, եւ մինչեւ այն ատեն ողջ կարծած դէմի ընկերը մեռել գտնելով, Անաբեկութիւնը եւ սոսկումը կը պաշարեն զինքը, մեռելի մը քովը գտնուելը, եւ մտածելով որ, վերջին կայարանը հասած ատեն՝ զինքը պիտի ձերբակալեն՝ իբր սպաննիչ ճամբու ընկ'որջը, քանի որ միեւնոյն վակոնին մէջ կը գտնուէին առանձին:

Յանկարծ գաղափար մը կ'արթննայ միտքին մէջ.


կառախումբը անտառի մը մթաստուեր արահատներէն անցած պահուն, ուժգին կերպով մը կը հլէ դուրս կը ձգէ իր փորձանաւոր ընկերը:

Քիչ ետքը քօնտիւքթէօնը ապահովուելու համար թէ դեռ հանգիստ մը նստած է մեռելը իր տեղը, ակնարկ մը կը նետէ վակոնին պատուհանէն ներս: Բայց որչա՛փ մեծ կ'ըլլայ իր այլայլումը անոր տեղ ուրիշ մը տեսնելով հոն: Ձի կրնար բնականարար հարցնել թէ, ո՞ւր է մեռելը, որովհետեւ ատիկա կրնար պատասխանատուութիւնը հրաւիրել իր վրայ, ուստի տոմսը ծակելէ ետքը այդ ուղեւորին, անձկութեամբ կը հարցնէ անոր:

— Ո՞ւր է, հոս ուրիշ ճամբորդ մ'ալ պիտի ըլլար :

Արթուն ուղեւորը սակայն չվարանիր պատասխանելու, եւ անմիջապէս վրայ կը բերէ.

— Այո, անիկա, նախորդ կայարանը վար իջաւ: Tableau :



ԼՐԱՔԵՐՆԵՐԸ ԻՆՉՊՊԵՍ ԼՈՒՐ ԿԸ ՀԱՒԱՔԵՆ

Ժամանակ մը խմբագիրները կը նստէին հանգիստ մը սենեակին մէջ եւ թերթերուն նիւթ կը հայթայթէին: Հիմակ փոխուած է այդ գրութիւնը, Գաղափար մը կազմելու համար թէ արդի լրագրները ի՞նչ տամբարինակ միջոցներու կը դիմեն լուր մը ամէնէ առաջ,

ամենէն ճիշտը տալու համար: Պատմենք անոնցմէ մէկ քանին:

Դուռներ կան որոնք միշտ գոց կը մնան լրարբերին առջեւ ո՛րքան ալ յամառ ու նրբամիտ ըլլայ ան, օրինակի համար, հարցաքննիչ դատաւորին սենեակը: Բլքի բարիգիւտի խմբագիրներէն մէկը հարցաքննութեան մը գաղտնիքը կորզելու համար հարցաքննիչ դատաւորին սենեակին վառարանի փայտի սնտուկին մէջ պահուցուեցաւ: Ուրիշ խմբագիր մըն ալ Պօրտոյի մէջ, ամբողջ չորս ժամ քարտուղարին գրասեղանին տակ կծկըտած մնաց:

Նոր բան մը գտնելու համար արդի լրարբերը չվարանիր աշխարհիս շրջանը իսկ կատարելու: Մաթէնի խմբագիրներէն Պ. Կասթօն Սթիկլէր՝ Ժիւլ Վէրնի վէպերէն մէկուն դիւցազնին Ֆիլիաս Ֆօկի կատարածը կրկնելու գազափարլ ունեցաւ, այն է աշխարհիս շրջանը կատարել 80 օրուան մէջ, բայց Ֆօկի ատենը անդրսիպերեան երկաթուղին չկար, հետեւաբար Պ. Սթիկլէր աւելի կարճ ժամանակի մէջ կատարելու էր այդ շրջանը: 1901 Մայիս 20ին մեկնեցաւ Բարիզէն Պէրլին, Բէթէրսպուրկ, Մօսկուա, Ախրիկա եւ Անգլիայի ճամբով աշխարհիս շրջանը կատարելու: Երկու օր ետքը Ժուռնալի աշխատակիցներէն Պ. Նէնտի Թիւրօ մեկնեցաւ Բարիզէ, նոյն շրջանը կատարելու բայց հակառակ ուղղութեամբ: Խնդիր էր թէ՛ ո՞վ առաջ պիտի հասնի: Եւ շատ մը գրաւներ բռնուեցան:

Առաջին վերադարձողը եղաւ Պ. Սթիկլէր, որ 63 օրուան մէջ 32 հազար քիլօմէթր ճամբայ կտրած էր: Երկաթուղիի, կառքերու ցնցումէն կտրաքամակ եղած էր: Իր աչքին ու մօքին առջեւ տակաւին գոյութիւն ունէին արագ արագ փախչող ծառերու եւ գիւղերու

տեսքը: Ամբողջ այս ճամբորդութեան միջոցին՝ մէկ արկած միայն պատահեցաւ: Լիվըբուլէն Լօնտօն երթալու կառախուճը փախցուց: Վերադարձին Ամիէն կանգ առաւ Ժիւլ Վէրնը ողջագուրելու համար: Ճամբորդութեան միջոցին հեռագիր մը ղրկեց թերթին, որ հարիւր ոսկիէն աւելի արժեց:

Գալով Պ. Թիւրօի, քսան երեք օրի չափ ստիպուեցաւ կանգ առնել ամուր գետին եզերքը՝ որ չորացած էր, եւ 86 օրուան մէջ նոյն շրջանը կատարելով վերադարձաւ Բարիզ:

Մեծ ճամբորդութիւններու ձեռնարկող լրարբերներու մէջէն յիշենք Դանիացի Պ. Գարլ Սիպէրկ, որ ամբողջ Ասիան քալելով անցաւ՝ Անդրսիպերական երկաթուղիին ինչպէս բանելը քննելու համար, եւ Օրիորդ Հարտի Ամերիկուհին, որ մինչեւ Ալասքայի սառնադաշտերու խորերը գնաց, ոսկի փնտռողներու կեանքը ուսումնասիրելու համար:

Կան պահուած լրարբերներ, որոնք քրջահաւաք՝ պապուկ կամ կառապան եղած են, հասկնալու համար թէ այդ արհեստաւորները ի՞նչ կը վաստկին:

Անգամ մը Պ. Լուի Բօլէան վիճարանութեան բռնուեցաւ Ժիւլ Սիմօնի հետ մուրացկաններուն խեղճութեանը իրական կամ կեղծուած ըլլալուն վրայ: Ժիւլ Սիմօն կը պնդէր թէ մուրացկանները իրօք խեղճ ու աղքատ են: Իրիկուն մը ժամը՝ երկուքը անցած աստենները Ժիւլ Սիմօնի դուռը զարնուեցաւ: Խեղճ ու կրակ երեւոյթով մէկը պաղատագին կտոր մը հաց կը խնդրէր: Տանտէրը խղճալով վրան ներս առնելու եւ հրամայեց որ լաւ մը փորը կշտացնեն: Ետոյ մուրացիկին կնկանը հիւանդ պառկած ըլլալը ի-

մանալով երեսուն զրուշի չափ դրամ ալ տուաւ անոր ու ճամբեց:

Յաջորդ օրը երբ նորէն Պ. Բօլէնի հետ բանավէճի բռնուած էր, հակառակորդը յայտնեց թէ՛ առջի գիշերուան մուրացիկը ինք Բօլէնն էր . . . :

Յիկարօյի խմբագիրներէն Պ. Հիւկ Լըռու ալ մուրացիկի արհեստը փորձեց: Սկիզբները գործը անյաջող դնաց, որովհետեւ խակ էր տակաւին եւ քանի մը տեղերէ վռնտուեցաւ, բայց վարժուելով մինչեւ իսկ տանտէրին քովը ելաւ, ճարտարօրէն դժուրեց անոր գաղափարները, եւ տասը զրուշի չափ դրամ ու հինուկ բանթալօն մը առնելով մէկնեցաւ: Այս կերպով յաջողեցաւ օրական 40-50 զրուշ մը հանել՝ առանց հաշուելու հաւաքած հին լաթերը:

Նորէն Յիկարօյի խմբագիրներէն Պ. Ժօրժ Տանիէլ հանրակառքի մէջ տոմսակալաճառ եղաւ: Ամբողջ օրը չափչըփեց՝ մէյմը կառքին վրայ շուլլուելով, մէյ մը վար ցատկելով:

Անցորդներէն մէկը շփոթելով երկու անգամ վճարեց տոմսակին գինը, իսկ ուրիշ մէկ քանի հոգիներ ալ տոմսակալաճառին խակութենէն օգտուելով յաջողեցան առանց քսակին բանալու ճողոպրիլիրիկուան խեղճ նորեկը 15 զրուշի չափ սխալ մը ունէր հաշիւներուն մէջը, զոր գրպանէն վճարելու էր:

Ուրիշ անգամ մը, հասկնալու համար թէ՛ Բարիզի ոստիկանները իրենց պաշտօնը լաւ կը կոտարեն՝ թէ ոչ, պապուկի հագուստներ հագած շքեղ պիսիքլէթ մը առաւ ձեռքը եւ սկսաւ փողոցները թափառիլ, ոստիկանները բնաւ դիտողութիւն չէին ըներ թէ այդ խեղճ ու կրակ հագուած մարդը՝ ո՞ր կէտէ ձեռք ձգեր է մեծագին պիսիքլէթ մը, երկու ժամ ետքը միայն

ոստիկան մը խելք ըրաւ այդ հարցումը ընել իրեն եւ կամաւ տրուած շփոթ պատասխանին վրայ ոստիկանատուն առջնորդեց զայն:

Բրքի Պլեօ թերթին խմբագիրներէն մէկը, Պ. Շաբլ վալլիէ մտածեց սուտ խենդ ըլլալ եւ Բարիզի փողոցները պտրտիլ տեսնելու համար թէ ոստիկանները ինչ պիտի ընեն, Հին, գոյնը նետած ռտէնկօթ մը հագաւ, կուրծքին վրայ շատ մը պատուանշաններ կախեց եւ հովանոցը՝ սուրի մը պէս բռնած պուլվարները սկսաւ չափել:

Ոստիկանի մը առջեւ կանգ առաւ ու ըսաւ:
— Ես Նարոլէոն եմ, զինե՛՛ր, քեզ տասնապետ կ'ընեմ:

— Ճամբադ գնա՛, պատասխանեց ոստիկանը կըռնակը դարձնելով:

Երեք անգամ կրկնեց նոյն բանը եւ հազիւ թէ ոստիկան մը խելք ըրաւ զինքը պահակատուն տանելու:

Մարտ ամիսի ցուրտ առտու մը Սէն զետի կամուրջներէն՝ մէկը ինքզինքը ջուրը կը նետէր: Սիրոյ ցաւէն է, մտածեցին անցորդները, Յր սխալէին, Այդ մարդը լրարեբ էր եւ հետաքրքրութեան համար այդպէս կ'ընէր: Գետը ինկողները ազատելու համար յատուկ ոստիկանական մարմին մը կայ, վերջերս այդ տուկ ոստիկանական մարմին մը կայ, վերջերս այդ տուկ խումբին կցեցին նաեւ աղէկ լողալու վարժուած շուներ՝ որոնք ջուրը իյնալով վտանգի մէջ եղող տղաներ՝ որոնք ջուրը իյնալով վտանգի մէջ եղող տղաները պիտի ազատէին: Այդ գետը նետուող մեքղաքները պիտի ազատէին: Այդ գետը նետուող մեքղաքները պիտի ազատէին էր հասկնալ թէ այդ շունները լրարեբին ալ նպատակն էր հասկնալ թէ այդ շունները կարո՞ղ են իրենց պաշտօնին: Ինքը քաջ լուրորդ մը ըլլալով շուտով բռնեց ինքզինքը ջուրին վրայ եւ սպասեց որ գան զինքը ազատեն այդ համբաւաւոր շունները: Բայց պարապ տեղը: Մինակ ոստիկանները

նաւակներով օգնութեան եկան եւ զինքը ջուրէն դուրս հանեցին : Ետքէն իմացութեամբ որ շուները դեռ նոր ճաշերնին աւարտած ըլլալով՝ պահապաններնին վախցած էին որ հիւանդ կ'ըլլան եւ նախամեծար համարած էին թողուլ ջուրը ինկող մարդը որ ինքզինքը ազատէ : Յաջորդ օրը մեծագորդ յօգուածով մը վարկարեկ կ'ըլլային ազատարար շուները :

Ամերիկայի լրարբեր մը Պ. Վ. Գարթըր, Նիւ Եօրք եւ Լիվէրբուլի միջեւ երթեւեկող շոգենաւի մը մէջ հնոցպան եղաւ, իր արհեստակիցներուն պէս հազուած անոնց տաժանելի աշխատութեանը մասնակից եղաւ : Օրերով շոգենաւին ամուսի ամբարանոցներուն մէջ մնաց պզտիկ սայլակներ լեցնելով, շնջած օղը ծանր էր, ամուսի փոշին կոկորդը կը չորցնէր ու կ'այրէր : Օր մը փոթորիկի ատեն, օդաուլթեան ծակէն ալիք մը ներս խուժելով կէս մը խեղդուած մնաց նորեկ հնոցպանը : Ամէնէն զժուարն էր հնոցներուն դիմացը կայնելը եւ մէջը ամուսի նետելը. տաք շունջ մը կ'այրէ երեսը եւ հրաշէկ ամուսի կտորներ ցատկելով կէս մը կը կուրցնէին : Ճամբորդներուն սեղանին աւելցուքները կը տրուէր իրենց եւ ա'յնքան յոգնած ու անօթի կ'ըլլար որ կը լափէր կերակուրի զոուելի խառնուքները :


Միս Պընքս ամերիկուհին ճանչցնելու համար թէ խեղճ ու աղքատ հոգիները ինչ զրկանքներ կը կրեն ինք ալ մասնակից եղաւ անոնց : Ամէնէն առաջ Լոնտոնի մէջ տուն մը սպասուհի մտաւ, աշխատութեան տակ կ'ընկճէին զինքը եւ շատ գէշ կը սնուցանէին :

Տասն եւ հինգ օր ետքը մայրաքաղաքին մեծ օրաթերթերէն մէկուն մէջ սկսաւ ներմակ գտակիլ ու կրծկալիլն ակ յօղուածներու շարքը, որ ահագին ազմուկ

հանեց : Յետոյ արդուկիչ եղաւ, եւ ետքէն ալ փոզօցները աւուղ : Մուրացկանութիւն ըրաւ եւ ծաղիկներ ծախեց :

Լոնտոնի ոստիկաններէն մէկը սիրահարեցաւ իրեն եւ ամուսնութեան խնդրեց :

Ուրիշ երկու ամերիկուհիներ ալ ժօհն եւ Մէրի Վանվօրսթ զանազան գործատեղիներու մէջ աշխատելով՝ ուսումնասիրեցին Ամերիկայի գործաւորուհիին կեանքը եւ յետոյ հատոր մը գրեցին գործաւորուհիին Միացեալ Նահանգներու մեջ անունով : Ասկէ ծագում առաւ Ամերիկայի մէջ գործաւորուհիներու վիճակը բարւոքող Օրէնքներու քուէարկութիւնը :



ԵՐԿՐԱԳՈՒՆՏԻ ԿԵԴՐՈՆԱՅԻՆ ԿՐԱԿԸ

Մեր հին աշխարհը աշխատելու վրայ է ամէն կողմէ եւ կը սկսի շարժիլ : Մարթինիքի հրաբխային ժայթքումէն առաջ ստորերկրեայ շարժումներ տեղի ունեցած էին, նոյնը նշմարուած է նաեւ ժայթքումէն յետոյ, ուրեմն ինչ կ'անցնի կը դառնայ մեր երկրագունտի խորքը. բաւական հետաքրքրական պիտի ըլլար ճանչնալը :

Բայց միթէ կարելի պիտի ըլլա՞յ ճանչնալու :

Դարուկէսէ աւելի առաջ Մօրէրթիւիս չափազէտը կ'առաջարկէր որ խոշոր ծակ մը բանան երկրագունտին մինչեւ կեդրոնը, որպէսզի կարելի ըլլայ վստատին հօրէն ճանչնալ ներքին կազմութիւնը այն մոլորակին

որուն վրայ կ'ապրինք, Գրեթէ ամէնն ալ յիմարի տեղ զրին այդ մարդը՝ եւ սակայն հարիւր տարիներէ աւելի վերջը Հումպօլտ գիտնականն ալ ունեցաւ նոյն գաղափարը, ասոր ապացոյց է 1843ին Արակոյի գրած մէկ նամակը: Հումպօլտ կը գտնուէր վէսթֆալիայի Նոր-հագուէրք կոչուած վայրը, ուր կը հսկէր հանքի մը խոզարկութեան աշխատութիւններուն, եւ ահա թէ՛ ի՛նչ կը գրէ:

« Մեր ունեցած գործիքներով կրնանք մինչեւ 2000 մէթր խորութեան մը հասնիլ եւ եթէ կատարելագործելով այս գործիքները աւելի ոյժ մը գործածենք, կրնանք շատ աւելի խորերը հասնիլ: Կարծեմ թէ 70 սանթիկրատ աստիճանով ջուրի ահագին քանակութիւն մը անգին արժէք մը պիտի ունենար, եւ եթէ երբէք 2000 մէթր խորութենէն չկարենանք խիտ տաք ջուր մ'առաջ բերել սակայն դարձեալ գիտական խիտ շահեկան ծառայութիւններ կրնայ մատուցանել նմանօրինակ ծակ մը »:

Հումպօլտի առաջարկը գործադրողներ եղան, եւ յիրաւի կարծելով հանքային հարստութիւններ գտնել Հիւսիւսային Սիլէզիոյ Բարուշովից վայրին մէջ, սկսան փոս մը բանալ, զոր մտադրած էին յառաջ վարել մինչեւ 2500 մէթր խորութիւն, ինչ որ կ'առաջարկէր Հումպօլտ:

Գործողութիւնը կը կատարուէր երկաթեայ խողովակներով, որուն ծայրը կար ադամանդէ շրջանակ մը: Խողովակը կը մղէին հողին մէջ եւ կը դարցնէին, եւ երբ հողով կամ քարերով լեցուէր, վեր կը հանէին կը պարպէին եւ վերստին կը շարունակէին այդ վերջին խողովակին ծայրը անցնելով ուրիշ մը, որուն արտաքին տրամագիծը կը համապատասխանէր նա-

խորդին ներքին տրամագծին: Տեսակ մը հսկայական հեռադիտակ էր:

Բայց եկած էր աստիճան մը յորում խողովակներու այդ շարքը կը կռէր 4000 քիլօ, որով այլ եւայլ տեղերէ խորտակում յառաջ գալով ստիպուեցան դադարեցնել աշխատութիւնը: Եւ եթէ այս գործողութեամբ երկրաչափները հողային այդ մասին վրայով կարողացան երկրաբանական մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը կատարել, եթէ կարելի եղաւ խողովակներու մէջէն ջերմաչափներ իջեցնելով ճանչնալ երկրիս խորութիւններու տաքութեան աստիճանները, որոնք որոշուէին կարենալ հաւաքելու համար ծանօթութիւններ նախնական կարեւոր տարրերու մասին եւ կազմելու համար գաղափար մը երկրագունտիս կեդրոնին վրայով: Եւ յիրաւի ի՛նչ է 2000 մէթր խորութիւն մը երբ նկատի առնենք թէ երկրագունտիս շառաւիղին երկայնութիւնը 6000 հազարամէթրէ աւելի է: Ուրեւ երկրիս արտաքին մաշկը միայն մատչելի եղած է մեզի:

Այս պայմաններու մէջ՝ ամէն ենթադրութիւն ներելի պիտի ըլլար եւ գիտնականները երկրիս խորքերու մասին տարբեր կարծիքներ յայտնած են: Մեքերու մասին տարբեր կարծիքէն է, որ կ'ըսէ թէ ծամասնութիւնը Պէտտանի կարծիքէն հեղուկ է, մեր մոլորակին ներքին մասը բոլորովին հեղուկ է, նկատի առնելով թէ քանի՛ կարելի ըլլայ առաջ երնկատի առնելով թէ քանի՛ լերմութեան թաւ երկրիս խորքերուն մէջ՝ այնքան ջերմութեան յաւելում մը կը նշմարենք, այսինքն՝ իւրաքանչիւր 33 մէթրին մէկ աստիճան, որով Պէտտան կ'ապացուցանէ կեդրոնային կրակին գոյութիւնը: Այդ համապատասխանէ կեդրոնային կրակին գոյութիւնը: Եւ միայն անց-ւաւոր բնագէտը կ'ընդունի թէ երկիրը ո՛չ միայն անց-

եալ շրջանի մը մէջ հեղուկ էր, այլ նաեւ հեղուկ է հիմա եւս եւ միայն անոր մակերեւոյթն է կարծրացած: Այդ կարծրացումը յառաջ կուգայ արտաքին ցուրտէն, որով երկրագունտի նախնական ջերմութիւնը կամաց կամաց կորսնցուցած է իր աստիճանը:

Ուրեմն երկրագունտի մակերեւոյթի վրայ մեր նշմարած արկածները կը վերատրուին այն անհամեմատութեան, որ գոյութիւն ունի երկրագունտի կարծր մասին հաստութեան եւ հեղուկ մասին շառաւիղին ահագին տարածութեան միջեւ: Այդ արկածներուն գլխաւորներն են հրաբխային ժայթքումները եւ երկրաշարժերը: Երկրագունտի առաջին կարծր մասին ներքեւ կարծրացած նիւթերը ենթակայ ըլլալով ամփոփումի եւ ծաւալումի օրէնքներուն կը խորտակուին շարժելով եւ տեղափոխուելով արդէն կազմուած խաւերը: Երկիրը այն ժամանակ կը պատահի եւ ներքին նիւթերու յուզումին շկարենալով դիմադրել, առաջ կուգան երկրաշարժները եւ հրաբխային ժայթքումները:

Ահա՛ թէ ինչ կը պատասխանէ Պէրթըլօ այս մասին:

« Այո՛, իմ կարծիքովս հարկ է որ երկրիս կեդրոնը գոյութիւն ունենայ հեղուկ մարմիններու զանգուած մը կամ ջերմութեան ո՛րեւէ շարժիչ մը »: Մեծահամբաւ քիմիագէտը իր 1894 Ապրիլ 5 ի ատենախօսութեան մէջ կարծիք յայտնած է, թէ շնորհիւ գիտութեան անընդհատ յառաջագիմութեան կարելի պիտի ըլլայ օգտուիլ երկրագունտի ներքին ջերմութեանէն: Ուրեմն ըսել է թէ շարժիչ ոյժը գոյութիւն պիտի ունենայ ամէն տեղ, երկրիս ամէն մէկ կէտին վրայ եւ մինչեւ որ այդ ոյժը նուազում մը կրէ եթէ

այդ ալ կարելի է — որ հազարաւոր եւ հազարաւոր դարեր սահին մարդկութեան վրայէն:

Ահա՛ գիտական գեղեցիկ երազ մը, եւ եթէ յիշուի կեդրոնային կրակը գոյութիւն ունի, դժբախտաբար մարդ տակաւին շատ հեռու է անոր տիրանալէ, եւ մահաւանդ թէ շատ աննշան իսկ է յանկարծական այս երեւոյթներուն հանդէպ: Ենթադրելով թէ Մարթինիքի Բըլէ լերան հրաբխային ժայթքումը արդիւնք է երկրագունտի ներքին կրակին, ուրեմն ըսել է թէ կարելի է որ տեղի ունենան մեծադողորդ երկրաշարժներ եւ աւելի զարհուրելի իրողութիւններ:

Ուրիշ գիտնականներու նայելով այս արկածները տարբեր պատճառներու արդիւնք են:

Ամէնն ալ համակարծիք չեն որ երկրիս կեդրոնը հեղու մարմիններու ընդունարան մ'ըլլայ: Երկրաբաններ ալ կան որ կը պնդեն թէ ամբողջ երկրագունդը արդէն կարծրացած է, եւ թէ երկրային այդ ահաւոր երեւոյթներն արդիւնք են տարրաբանական գործողութիւններու որոնք տեղի կ'ունենան այլ եւ այլ խոթիւններու որոնք տեղի կ'ունենան այլ եւ այլ խորուրութիւններու մէջ. այսպէս ծծմբային նիւթերու տարրութիւններու մէջ. այսպէս ծծմբային նիւթերու տարրութիւններն անձարուծումը եւ այլ եւ այլ բաղադրութիւններն անձարեւային կամ ծովային ջուրերու որ կ'անցնին հողին մէջ: Այս գործողութիւններով յառաջ եկած տարրաբանական ջերմութիւնը կուտակուելով հուսկ ապա կը պատահէ երկրիս խաւերը եւ կը ժայթքէ դուրս:

Կան նաեւ ուրիշ երեւոյթներ որոնք կրնան պատճառել հողային շարժումներ, եւ որքան բազմաթիւ են այն յեղաշրջումները որ տեղի կ'ունենան մեր ներքեւը, կքում, սահում, փլուզում, շարժում եւ խորտակում յաճախ կը ձեւափոխեն երկրագունտի ներքին կազմութիւնը:

կեղերոնային կրակի ենթադրութեան հակառակորդներէ շատեր կը կարծեն թէ երկրիս խորքերուն մէջ կան լավայի խաւեր, որոնք շոգիի եւ կազերու ճնշումին ներքեւ յանկարծական դուրս կը ժայթքին երկրային կեղեւին ճեղքերէն. Բայց անոնք որ ընդունած են երկրիս խորքերու մէջ հեղուկ մարմիններու գոյութիւնը, իրք փաստ կը բռնեն ստորերկեայ շարժումներու միաժամանակ տեղի ունենալը եւ դիտել կուտան թէ երկրաշարժերը, հրաբխային ժայթքումները յաճախ կը պատահին միաժամանակ թէպէտ իրարմէ հեռուոր մասերու մէջ:

« Ուրեմն ի՞նչպէս կ'ըսէ Բարվիլ, կարելի պիտի ըլլայ ըմբռնել այս զուգադիպութիւնը, եթէ մնայուն ոյժերու եւ զլպուածներու վերագրուէր անոնց շարժառիթը »:

Շատ դիւրին է այս ամէնուն բացատրութիւնը, եթէ երկրային շարժումներուն աղբիւրը փնտոնք կեղերոնային կրակին մէջ, որ միշտ պատրաստ է ժայթքելու երբ տեղաւոր կէտ մը գտնէ երկրային կեղեւին վրայ:

« Հրաբուխները մէկ մէկ ճամբաներ են, երբեմն պատահական եւ երբեմն մնայուն, որոնցմէ դուրս կ'ելնէ ներքին հնոցին չափազանց ջերմութիւնը »: Ահա թէ ի՞նչպէս կը բացատրէր Պէտտանի աշակերտներէն մին, Եւ երբ ականատես կ'ըլլանք այնպիսի զարհուրելի արկածի մը որպէսին էր Մարթինիքը — որ կ'ահարեկէ ամբողջ աշխարհը, որ 30,000 է աւելի մարդերու մահուան պատճառ կ'ըլլայ եւ որ կը ծածկէ մոլորակի մը մէկ մասը, այն ժամանակ մարդկային միաքը սոսկումէ շուարած ուրիշ բան չի կրնար բերել իր առջեւ, բայց եթէ կրակի ընդունարան մը, որ

յանկարծակի իր թուճերը խորստեկելով խառնարանէ մը դուրս կը հոսեցնէ իր կիզիչ եւ աւերիչ ալիքները:

Մինչեւ այսօր այս խնդիրը տակաւին չէ լուծուած երկրային խառնակութիւնները դեռ անբացատրելի են: Մարդ արարածը թէպէտ կը կարծէ թէ տէրն է երկրին, սակայն ծանօթութիւնը չունի այն օրէնքներուն որ կը շարժեն այն մակերեւոյթը որուն վրայ կ'ապրի, չի կրնար բացատրուիլ թէ ուրկէ կը ծագին այն մերթ բուռն մերթ տկար և գրեթէ յարատեւ ցնցումները, ինչպէս կը շարժի ըսուած է, եռացող ջրով լեցուն պտուկի մը թեթեւ կափարիչը:

Երբ կը ջանան թափանձել երկնային անհունութեան գաղտնիքներուն մէջ, օդապարիկով կը բարձրանան օդային երեւոյթները ուսումնասիրելու համար բայց պիտի կարենա՞ն իջնել օր մը, աւելի հեռուն, երկրիս խորքերուն մէջ, գիտնալու համար ի՞նչ ինչ կայ հոն եւ ինչէ՛ր բաղկացած է: Պէթըլօ կ'ըսէ թէ « 3000-4000 մէթր խորութեամբ փոս մը բանալը այս դարու երկրաչափներուն համար դժուարին գործ մը չէ »: Բայց միայն այս հսկայական գործը բաւական է:

Ճլամարիտն հետեւեալը կը գրէ:

« Անցեալ, ներկայ եւ ապագայ յաղթանակներէն ո՛րքան մեծ պիտի ըլլայ այն յաղթանակը որուն արդիւնքը պիտի ըլլար ծանօթացնել մեզի այն գաղտնիքները որ ծածկուած են ոտքերնուս ներքեւ »:

կուգայ աթոռին վրայ կը նստի և կենդանին ի զուր ճիգ կը թափէ վրան յարձակելու :

Հիմակ կուգայ գազանագուսպին համար գերագոյն վայրկեանը : Գազանին շղթան կը քակեն , մարդը՝ կեանքը վտանգի կը դնէ : Կենդանին կայծակի պէս մարդուն կոկորդը կը ցատկէ , մարմինը կատաղութենէ սարսուռն՝ իր հինգ հարիւր լիպրա ջիղի ու ղնդերի գանգուածին տակ զայն ընկճելու համար :

Գազանագուսպն ալ ասոր համեմատ զինուած է : Վզին բոլորտիքը անցուցած է հաստ կաշիէ՝ լայն վզնոց մը , և կուրծքը փաթտած է . . . յարդէ լայն իրանակապ մը : Յարդին վրայէն կենդանիին ճիրանները կը սահին առանց տեղ մը կարենալ կառչելու : Եթէ կենդանին սովորականէն աւելի վտանգաւոր է՝ գազանագուսպը գլուխը կ'անցնէ երկաթէ վանդակ մը : Մէկ ձեռքով բռնած է երկճիւղ ձող մը , իսկ միւսով՝ աթոռ մը :

Աթոռը իբր վահան կը ծառայէ . կենդանիին զունը անոր չորս ոտքերուն մէջ կը մտնէ և երկճիւղ ձողն ալ՝ որու ծայրերը կլորցած են՝ իր ոյժը կը կտրէ առանց զինքը վիրաւորելու :

Գազանը գետին կը զլորի և կրկին վեր կը խոյանայ : Զսպողը՝ քրտինքներու մէջ՝ տեղէն չհարժիր : Զեռքի ցուպը գազանին ոնգունքները կը մղէ (մարմինին ամէնէն զգայուն մասն է ոնգունքը) և կենդանին՝ ցաւէն ոռնալով ետ կը նահանջէ :

Այս գործողութիւնը քանի մը անգամ կրկնելէ ետքը գազանը վերջնապէս զսպուած է , ա'լ գտաւ իր տէրը , թէեւ կ'ատէ զայն բայց վրան յարձակել չփորձեր ալ եւս :

* * Ասիկա տակաւին սկիզբն է , սակայն : Կեն-

դանին վարժուեցաւ մարդուն ներկայութեանը հանդուրժել , Հիմա հնազանդեցնելու է զայն : Ասոր համար համբերութեամբ շարժելու է : Թարմ միսի կտոր մը տալով վանդակին մէջ կը պտտցընեն զայն , հրաշէկ երկաթով մը վախցնելով ցատքել կը սորվեցնեն , իսկ դժուարին խաղերը սորվեցնելու համար , օրինակի համար գունտ մը գոյրել և այլն , շղթաներով զայն գունտին վրայ կապելով կը վարժեցնեն :

Բոլոր գազանները նոյն բնութիւնը , նոյն հոգեբանութիւնը չունին : Առիւծը ամենէն աւելի զգայունն է քաղցր վարմունքի , բնապէս չար չէ և կարելի է անոր երախտապարտութիւնը պտանալ , մանաւանդ մատակ առիւծը՝ այս մասին գերազանց է արուէն : Անգամ մը Պոսթօք գազանագուսպին քառագեղին մէջ տիկին Բիանք ներկայացում մը տուած ատեն առիւծը վրան յարձակեցաւ , նոյն պահուն մատակ առիւծ մը խոյանալով հակառակորդին վրայ , գազանագուսպ կիներ ժամանակ ունեցաւ դուրս փախչելու : Ընդհակառակը վագրը՝ մանաւանդ յովազը բացարձակապէս զրկուած են ամէն բարի զգացումէ , և հինգ վեց տարի ետքն ալ՝ առջի օրուան պէս կ'ուտեն իրենց տէրը որ զլրենք սնուցած է : Ասոնք վախցնելէ ուրիշ ճար չկայ : Արջը՝ ամենէն խելօքիկ մանչուկն է , կատարած խաղէն ինքն ալ հաճոյք կ'ըգայ :

Մարդուն ձայնին , նայուածքին մէջ բան մը կայ որով գազանը կը հնազանդի մէկուն և ո'չ միւսին : Էմանուէլ գազանագուսպը այս մասսն նշանաւոր է , մինակ նայուածքովը կենդանին կը խոնարհեցնէ , Բայց վա՛յ իրեն եթէ կենդանիներէն մին վրան յարձակի , անմիջապէս միւսներն ալ կ'ընկերանան անոր : Նոյնպէս վա՛յ է եկեր իրեն եթէ ոգելից ըմպելի կը գոր-

Ճածէ, վանդակը մտածին պէս գազանները կ'զգան թէ գինով է ան, և ողջ դուրս չելլեր անկէ, նոյն իսկ եթէ հրաշքով կարենայ աղատիլ՝ անկարելի է որ այլ եւս վանդակ մտնէ, գազանները չեն մոռնար:

* * * Թէ ի՞նչ վտանգներ կ'սպառնան գազանազուսպին: Ամենէն առաջ կենդանիին չափազանց ընտանութիւնը: Կատու մը ձեզ կը զգուէ, եթէ քիչ մը ուժով գգուէ մորթերնիդ բարակ մը կը ճանկէ, եթէ առիւծ մը ըլլար՝ կատուին տեղը՝ միսը մէկտեղ կը տանէր:

Երբեմն ալ վայրկենական սրտնեղութիւն մը կը բռնէ կենդանին: Տեսնուած է որ առիւծներ կատղած են մէկէն ի մէկ, որովհետու նուագածուներու խուճը տարբեր կտոր մը զարնել սկսած է:

Գազանազուսպներուն ամենէն վախցածը՝ այն փոփոխութիւնն է որ տեղի կունենայ կենդանիին մէկ որոշ տարիքին մէջ, ա՛լ չի ննազանդիր և կարմիր կը ցեսնէ:

Անգամ մը անգլիացի գազանազուսպ մը զլուխը առիւծի մը բերնին մէջ դնելու փորձը կը կատարէր՝ երբ սուկուժով զգաց թէ առիւծին բնութիւնը փոխուած է, առանց աճապարանքի գլուխը դուրս քաշեց. իրա՛ւ ալ նոյն պահուն գազանին կզակները զոցուցան մարդուն թուշը մէկտեղ տանելով:

Գառագեղներու մէջ, վանդակին ետին ազատ անցքեր կան ուր կը թողուն որ գազանները պտիտն՝ երբ ներկայացումը լիննայ: Անգամ մը Պօնավիթա զսպիչը իր 27 առիւծները դուրս հանած էր այսպէս, երբ նուպիական առիւծ մը յարձակեցաւ ուրիշ առիւծի մը վրայ, ակնթարթի մէջ քսան և եօթը առիւծները իրարու վրայ ինկան: Ժամ մը ամբողջ՝ Պօնավիթա՝

կատաղի գազաններուն դէմ մաքառելէ ետքը հազիւ կրցաւ կարգի բերել, ինք ալ կուրծքին վրայ խոշոր վէրք մը առնելով:

Ուրիշ անգամ մը Պօսթօք ներկայացումներ կուտար Պիրմիկամ քաղաքին մէջ, երբ առիւծներէն մէկը փախչելով կոյուղիի մը մէջ մտաւ: Պօսթօք պէտք եղած օգնականները առնելով հասաւ, ճիրանի հարուածներէ պաշտպանուելու համար զլուխը երկաթ սան մը անցուցեր էր: Ամենէն վտանգաւոր մէկ վայրկենին սխալ քայլ մը առաւ ոտքը սահեցաւ, զլխու դրած սանն ալ գետին ինկաւ մեծ աղմուկ հանելով: Գազանազուսպին գործը լինցած էր... բայց, տարօրինակ բան, առիւծը սանին հանած աղմուկէն վախնալով սկսաւ փախչիլ և կոյուղիին միւս ծայրը լարուած որոգայթին մէջ ինկաւ:



Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Ը

Նպարավաճառի մը յաճախորդներէն մէկը՝ օխայ մը խահուէ կ'առնէ, բայց երբ տուն կը տանի և գաւաթ մը խահուէ եփելով կը խմէ, կը տեսնէ որ սոսկալի կերպով գէշ տեսակէն է: Այնպէս որ գաւաթը կէս կը թողու:

Մարդուկը՝ փոխանակ խահուէն նպարավաճառին ետ տանելով փոխելու, ուղղակի շունչը նշանաւոր

լրագրի մը խմբագրատունը կ'առնէ և, ծախքը վճարելով հետեւեալ ազգը հրատարակել կուտայ :

«Ինքզինքը պարկեշտ և ուղղամիտ ցցունող նպատակով մը մէկ օխայ խահուէ գնեցի և վստահեցի իր խօսքերուն՝ առանց քննելու տուն տարի : «Բայց երբ եփելով գաւաթ մը խմել ուզեցի , տեսայ «որ սոսկալի կերպով հոտ մը ունի և ամենէն գէշ տեսակէն է :

«Արդ սոյն ազգով իրեն կ'իմացնեմ որ՝ եթէ սոյն «խահուէն անմիջապէս փոխելով՝ լաւ անսակէն չի «ղրկէ , պարտաւոր պիտի զգամ ինքզինքս՝ հետեւեալ «օրը սոյն լրագրի միջոցաւ իւր անունը , հասցէն հրատարակել :»

Բերս , Բ... փողոց , թիւ 18

Մարդուկը երբ իրիկուան տուն դարձաւ , տեսաւ որ 37 օխա զատ զատ ծրարով խահուէ զրկուեր է երեսուն և եօթը նպարավաճառէ՝ որոնք առջի օրը զանազան յաճախորդներու մէկ մէկ օխա ծախած էին , և վախցած էին որ իրենցմէ գնած կ'ըլլայ այդ ծանուցումն ընել տուողը :



Զ Ո Ւ Ա Ր Ծ Ա Լ Ի Ք

Հայրն ու որդին :

— Գրիգոր , տղա՛ս , գիտես որ արգելած եմ քեզ՝ Գէորգի տունը երթալ՝ անկիրթ և չար տղայ մըն է , չեմ ուզեր որ անոր տունը երթաս ու անոր հետ խաղաս :


— Շատ լա՛ւ , հայրի՛կ , ուրեմն կրնայ Գէորգ մեր տունը գալ , ես՝ բաւական կըթուած եմ մայրիկիս և քու շնորհիւ :



Վարսավիրայի մը կրպակին մէջ

— Ո՛հ , Պարոն , կ'ըսէ երիտասարդ մը՝ սափրիչին , չեմ գիտեր՝ ի՞նչ պատճառ ունիք միշտ քսամենքի պատմութիւններ ընելու :

— Պատճառը շատ պարզ է , կը պատասխանէ սափրիչը , այդպիսի պատմութիւններով վեր կը ցցուին ձեր մազերը , և կը զիւրանայ իմ ալխատութիւնս :



ՊԱՆՔՆՕԹՆԵՐ ՀԱԳՆՈՂ ՄԱՐԴԸ

Լրագիրները կը ծանուցանեն մահը ձօն Սթիլի , արտակարգ Ամերիկացի մը որ շիջած է այս վերջերս ամենայետին թշուառութեան մէջ , վեց ամսուան ժամանակամիջոցի մը մէջ 15 միլիոն տուար վատնելէ վերջ : Իր կեանքին նկատմամբ հազորդուած մանրամասնութիւնները՝ կատարեալ խելացիոր մը ենթադրել պիտի տան զինքը : Այդ մարդը պանթոմիմներով հազուստ մը շինելու և իր պատուհանէն դուրս՝ բուհայնով ոսկի փողոց նետելու չափ առաջ գացած էր : Բայց եթէ հաւատ ընծայեմ նամակի մը զոր Բէնսիլի-վանիայէն ստացայ երբեմն , և զոր ստորագրողը չեմ վանկայէն ստացայ երբեմն , և զոր ստորագրողը չեմ ճանչցած բնաւ , պիտի մղուիմ հետեւցնելու թէ այս

մարդը կատարելապէս տէր էր իր դատողութեան :
 Կարգ մը մանրամասնութիւններ ինծի անանկ կար-
 ծեցնել կու տան թէ ինքն իսկ գրած է այդ նամակը :
 Ես կը գոհանամ միայն նոյնութեամբ . թարգմանելով
 զայն, գրողին թողլով բովանդակ պատասխանատու-
 ութիւնը այն «բարասօքսալ» գաղափարներուն, որոնք
 պարզուած են անոր մէջ, և որոնք սակայն անհաճոյ
 չեն թուիր ինծի :

* * *

Ահաւասիկ այդ նամակը . —

«Պարոն, տարակոյս չկայ որ շատ պիտի զարմա-
 նաք այս էջերը կարդալով, և ես ամէն ներողութիւն
 կը խնդրեմ ձեզմէ, քանի մը վայրկեան ձեր աշխա-
 տութիւնը, և կամ, — ինչ որ աւելի ծանր է, — ձեր
 ունայնամտութիւնը խռովելու համար : Մի՛ վախ-
 նաք : Ողորմութիւն մը չպիտի խնդրեմ ձեզմէ : Ես
 այն տեսակ լրագրող մը չեմ որ ոչ իսկ տող մը բան
 գրած է՝ և որ սակայն չպիտի վարանի ձեր եղբայ-
 րակցական օգնութիւնը հայցելու : Ես այն կատա-
 կերգակը չեմ որ ոչ մէկ բեմի վրայ ելած է, և որ
 սակայն ձեր վեհանձնութեան կ'ապաւինի ու հինգ
 ֆրանք կը խնդրէ յանուն արամբրգական տրուեստին :
 Ես այն զարհուրելի կիներ ալ չեմ որ իբր թէ կը զմայ-
 լի ձեր վրայ, — ինչպէս արդէն ամէն քրոնիկագրի
 վրայ, — եւ որ իր հոգւոյն խռովանքը կը պարզէ
 ձեզի : Ես, քանի մը ամսուան ընթացքին միլիոնա-
 տէր մը եղայ, և եթէ կը համարձակիմ այդ վիճա-
 կովս հպարտանալու, պատճառը սա է որ զայն կոր-
 սընցուցած եմ այսօր :

«Ձեզի չպիտի ըսեմ թէ ինչպէս ձեռք բերի այն

վեց միլիոն տօլարի գումարը որ իմ բովանդակ հա-
 րատութիւնս էր : Ես աղքատ ու նախապաշարեալ ծը-
 նած եմ, կարդալով կենսագրութիւնը բոլոր այն
 բարձր անձնաւորութեանց որոնք ոսկիի իշխաններ
 են, դիտած էի որ անոնց ծնողքը միշտ խոնարհ աշ-
 խատաւորներ եղած են : Երկաթուղիներու կամ քար-
 իւղի իշխանները՝ նախ ստիպուած էին շատ համեստ
 արհեստներ ի գործ դնել : Տասը տարեկանիս՝ երբ ա-
 ռաջին անգամ ըլլալով անցորդի մը առջեւ ծունգի
 կու գայի անոր կօշիկները ներկելու համար, հասկցայ
 թէ օր մը ոսկիի դէզի մը պիտի տիրանամ : Որովհե-
 տեւ ես ալ համեստ արհեստ մը ի գործ կը դնէի, հե-
 տեւարար՝ հարստանալու համար անհրաժեշտ եղող
 պայմանը ունէի : Ապագան այն աստիճան ժպտուն
 կ'երեւար ինծի, որ ընկերներէս մէկէն խնդրեցի որ
 իմ լուսանկարս հանէ : Այդ ընկերօ, անշան լուսա-
 նկարչական գործիք մը ունէր : Իսկոյն գոհացուց փա-
 փաքս, և ես խնամով պահեցի լուսանկարս՝ որպէս զի
 ներկայացնեմ այն բիրթութիւններուն՝ որոնք իմ սկզբը-
 նաւորութեանս տեղեկանալ պիտի ուզէին :

«Կեանքին նկատմամբ մեծ վստահութիւն մը պէտք
 է սնուցանել, այդպէս իր ժամանակակիցներուն կօ-
 շիկները ներկելով հանդերձ՝ զուարթ ըլլալու համար :
 Ատիկա զբաղում մըն է՝ որ իմացականութիւնը չի
 զարգացներ, Բարիքի պուլվաոններուն վրայ կան ծե-
 րունիներ՝ որոնք շատ մեծ ծառայութիւններ մատու-
 ցած ըլլալով հանդերձ՝ կօշիկ կը ներկեն առանց
 տրտնջալու : Կարծես միայն այդ եղած է իրենց գոր-
 ծը, գործ մը որ բնաւ չի պատշաճիր իրենց յարգելի
 խորշոմներուն : Անոնք կը տուկան այդ արհեստին,
 ես սակայն, շուտ զզուեցայ անկէ : «Համբերութիւն,
 կ'ըսէի ինքնիրենս, մօտ ատենէն միլիոնատէր պիտի

ըլամ, և իմ կարգիս պիտի կրնամ տիրաբար վարուել բոլոր անոնց հետ՝ որոնք այսօր զիս սպասաւորի մը տեղ կը դնեն» : Ինչպէս կը տեսնէք՝ հարստութեան մասին շատ մեծ յարգանք մը չէի տածեր, և իմ արկածներուս շարունակութիւնը պիտի կրնայ ձեզի ապացուցանել թէ միշտ արհամարած եմ զայն :

Թերեւս դիտած էք որ միլիառատէրները շատ կ'ախորժին երիտասարդներու խորհուրդ տալէն, և հատորներ կը գրեն՝ անոնց հասկցներու համար թէ ինչ կերպով կարելի է հարստանալ, եթէ իրենց հաւատ ընծայենք, արդիւնաւոր շահադիտութիւններ ընելու համար պէտք է տէր ըլլալ բոլոր իմացական ու բարոյական յատկութեանց, Ապահովաբար իրաւունք ունին այս կարգի հատորներ հրատարակելու : Եւ որովհետեւ այդ տեսութեանց օրինակ ցոյց կու տան ինքզինքներին՝ կը հետեւի թէ միեւնոյն ատեն ալ խելացիութեան և առաքինութեան ամուր համբաւ մը կ'ապահովեն իրենց : Ասկէ զատ, պէտք է խոստովանիլ թէ լաւ բան մըն է բարի սկզբունքներու մասին ժողովուրդին յարգանք ընծայելը : Զէ՞ մի որ առանց ատոր նոյն իսկ այդ միլիառատարներուն շահադիտութիւնները պիտի վտանգուին :

«Այդ գրքերը յաճախ կը կրկնեն թէ մեր ծախքերը պէտք է համաչափ ընթացք մը ունենան մեր հասոյթներուն հետ, ինչ որ շատ ճիշդ է : Ես միշտ այդ սկզբունքին հետեւած եմ, և միշտ զգուշացած եմ շահածէս աւելին ծախսելէ : Այս իմաստուն կանոնը կը ստիպէր զիս որ արտաքոյ կարգի յոգնութեան մը մատնեմ երեւակայութիւնս, որպէս զի կարենամ պարտքերս հատուցանել : Այդպէսով մէկ կողմէ կամքս կը զարգանար ու կը զօրանար, ու միւս կողմէ ալ իմ հնարամտութիւնս կը մեծնար :

«Իմ շռայլութիւններս միշտ կը զարմացնէին իմ ազգակիցներս, և ճշմարիտ վարկ մը կը ստեղծէին ինծի : Խնայողութիւնը զիս ամէն օր աշխատելու պիտի հարկադրէր, և համեստ ապրուստ մը միայն պիտի ապահովէր ինծի : Ծռայլութիւնը զիս դէպի շահադիտութիւններն ու դէպի հարստութիւն առաջնորդեց : Երեսուն տարեկանիս, — այսինքն տասը ամիս առաջ, — վեց միլիոն տոլար ունէի : Լուրջ մարդիկ կը յարգէին զիս, երիտասարդ ազլիկները՝ որոնք կամքի տէր մարդիկը կը սիրեն, ինծի չէին զլանար իրենց համակիր ակնարկները : Խոնարհները՝ իմաստուն խրատներ կը խնդրէին ինձմէ, ու նոյն ատեն ալ՝ քիչ մը դրամ : Այն ատեն է որ որոշեցի կրկին թշուառութեան մէջ խորասուզուի :

* * *

«Թիմօն՝ աշխարհի ամէնէն ապուշ մարդը դարձաւ բարկանալով իր բոլոր այն բարեկամներուն դէմ, որոնք զինքը լեցցին՝ աղքատանալէն անմիջապէս վերջ : Եթէ քիչ մը լաւ դիտած ըլլար աշխարհային իրերը, այն ատեն դիւրաւ պիտի կարենար գուշակել այդ կարգի տափակ միջադէպը մը : Թիմօն՝ ապերախտեցողութեամբ՝ ապացուցանելով թէ ինք տակաւին շատ բարստութեան տէր էր, և թէ սխալ կը մտածէին՝ հարստութեան հազար տարեկան կարծելով, Ասիկա շատ ողորմելի հաճոյք մըն է : Բայց արհամարհել ոսկին՝ մինչդեռ ամէն մարդ զայն կը պրշտէ, շիրքն ու միլիոնատէրի ազմարդ զայն կը պրշտէ, նոյն իսկ ծիծաղելի զարճնելի դեցութիւնը պժգալի, նոյն իսկ ծիծաղելի Նախկին ասա այն հաճոյքը զոր ես կրցայ վայելել : Նախկին քրիստոնեաներ՝ չեն վարանած իրենց անձը զոհելու՝ կռապաշտութեան դէմ իրենց նորըստաց հաւատքը

«Լրագիրները երկարօրէն պատմեցին այս գայթակ-
ղական միջոցէպը : Իբրօրթններ ուզեցին գիտնալ
քանակութիւնը այն գումարին՝ զոր ցրուած էի թա-
տերասրահին մէջ, և խոնարհութիւններ ըրին առջևս՝
երբ յայտնեցի թէ 5000 տոլարէն պակաս չէր : Ինծի
հարցուցին թէ ինչու այս կարգի շոյայութիւն մը
ըրած էի : Իրենց ըսի թէ քրիստոնէական մտածումէ
մը առաջնորդուած էի, թէ ուզած էի յստակ կերպով
մը ցոյց տալ ոսկիին աղետալի ազդեցութիւնը, որ
կրնայ բռնաբար մարել գեղեցկութեան փայլը : Անոնք
ժպտելով մտիկ ըրին պատասխանս, և յաջորդ օրը
հրատարակեցին բոլոր այն բաները՝ զորս ըսած էի
իրենց :

«Ասիկա՛ իմ շահատակութիւններուս առաջինը ե-
ղաւ : Ես տակաւին չատ մը ուրիշ շահատակութիւն-
ներ ալ ըրի : Հրապարակային աճուրդի մը միջոցին,
40000 տոլար վճարելով գնեցի Փրանսական «բասթիլ»
մը (տեսակ մը նկար), և անմիջապէս վերջ, նոյն իսկ
աճուրդի սրահին մէջ, այրեցի գայն : Գեղարուեստի
սիրահարները զուր տեղը աշխատեցան որ ձեռքէս
խլեն այդ նկարը : Գնահատիչ քննիչները իբր բար-
բաշոս ամբաստանեցին զիս : Բայց ես ուզած էի բո-
ղոքել ամաթէօններու այն ունակութեան դէմ՝ որով
կենդանի արուեստագէտները անօթի կը մեռցնէին, և
տեսակ մը ապուշ փառասիրութեամբ՝ ամբողջ հարս-
տութիւններ կը յատկացնէին հին գործերու գնման :

«Ամերիկեան կառավարութիւնը տասը տոլար
տուած էր թշուառ կնոջ մը որ 23 դաւակներ աշխարհ
բերած էր : Իսկոյն 100ական տոլար յատկացուցի բո-
լոր այն ընտանիքներուն որոնք աասը տարիէ ի վեր
թշուառութեան մէջ կը գտնուէին, և որոնք ոչ աղ-

ջիկ զաւակ ո նէին ոչ ալ մանչ : Ծիտակը ըսելով՝ ին-
ծի շատ հաճոյ չէր թուեր քաջալերել ծնունդը բոլոր
այն խեղճ պղտիկներուն որոնք գէշ պիտի սնուցուէին,
գէշ պիտի խնամուէին, և հետեւաբար՝ ճակատագրա-
կանօրէն պիտի պարտուէին կեանքի պայքարին մէջ :

«Իմ արտառցութիւններս, — որովհետեւ արտառո-
ցութիւն անունը կուտային իմ այս աստիճան տրա-
մադրական գործերուս, — վերջին ծայր կը զբօսեցնէին
իմ ազգակակիցներս, որչափ աւելի ծայրայեղութեան
դիմէի այնքան երջանկութիւն կը զգային : Վերջ ի
վերջոյ ձանձրանայ այդպէս իրենց զուարճութեան
աղբիւր ըլլալէն : անանկ ատեն մը ուր դեռ երեք մի-
լիոն տոլար ունէի, իմ ձիադարմաններուս մէջ երե-
սուն տարեկան մարդ մը կար, որուն արտակարգ սը-
գեղութիւնը, հիւանդկախ ու ապականեալ երեւոյթը,
սմսեղուկ ապուշութիւնը, աղտոտութիւնն ու գինու-
վութիւնը գրաւած էին զիս : Երբեք չէի տեսած
մարդ մը որ այդ ձիադարմանիս չափ հրէշային երե-
ւոյթ մը, մթ ին իմացականութիւն մը և աղտոտ հո-
գի մը ունենար : Այդ մարդուն տուի հարստութեանս
մնացորդ մասը կազմող 3000000 տոլարը, պայման
դնելով սակայն որ ո՛չ իր սովորութիւնները փոխէ,
ոչ ալ իր հագուստները : Այդ մարդը իսկոյն համա-
կիր ընդունելութեան մը արժանացաւ ամերիկեան
ընկերութեան կողմէ, որ սակայն բոլորովին մոռցած
էր զիս, իմ կործանումս իմանալէն անմիջապէս վերջ
Ներբեմնի ձիադարմանս ձեռքի վրայ պտտցուեցաւ,
չատ մարդիկ անոր անխնամ վրայ-գլուխը ընդօրինա-
կեցին, և կիներ սիրեցին իր պժգալի հոտը : Այն
հիւղակէն, ուր քաջուած եմ, կատարեալ հրճուան-
քով մը դիտեցի իր բարձրացումը, և իսկապէս եր-

ջանկութիւն զգացի այն օրը՝ երբ իմացայ թէ ամուսնացեր է օրիորդ Հարիսըն հետ :

«Չեմ գիտեր թէ երկար ատեն պիտի կարենամ զիմանալ թշուառութեան՝ որուն վերադարձած եմ ա՛յնպէս ինչպէս սիրահար մը վերստին կը միանայ երբեմնի սիրուհիի մը՝ որ ալ տաղտուկ միայն կը պատճառէ իրեն : Ես ձեզմէ օգնութիւն չեմ խնդրեր : Ես միայն ուզեցի ձեզի յայտնել ինչ որ ըրի այստեղ : Եւ որպէս զի չմղուիք մտածելու թէ ճարպիկութեամբ մը ձեր ուշագրութիւնը հրաւիրել կ'ուզեմ իմ վիճակիս վրայ, ո՛չ ճշմարիտ անունս, ոչ ալ հասցէս կը յայտնեմ ձեզի :» —

* * *

Ո՛վ գիտէ, այս էջերը գրողը թերեւս նոյն ինքն ձօն Սթիւն է. այն շուրջ մարդը որ այս օրերս մեռաւ Ֆրանքլինի ծննդավայրին մէջ :

ՆՕՁԻԻՐ



ՔԻՉ ՄԸ ԲԱՆՈՎ ԶՈՒԱՐՃԱՑԷՔ

1. — Գետինին վրայ երկայն ուղիղ գիծ մը կը դձեն : Քանի մը հոգի կը շարունակն այդ գծին երկայնքը և ծռելով աջ ձեռքերնին աջ սրունքնուն տակէն անցուցած կը ջանան այդ գիծին ուղղահայեաց գիծ մը դձելու. որուն դժածը որ ամէնէն երկայնը ըլլայ ան է յաղթականը : Այս խաղը կարծուածին

չափ դիւրին չէ, որովհետեւ հաւասարակութիւնը գիւրաւ կը կորսուի :

2. — Երկու հոգի, դէմ դէմի, մէկ մէկրի չափ իրարմէ հեռու, մէկ ծունկերնուն վրայ եկած են. միւս սրունքնին օդին մէջ է և այդ ոտքը կը բռնեն մէկ ձեռքով, Միւս ձեռքերնին կայ մէյ մէկ ճրագ, մէկը վառ, իսկ միւսը մարած : — Կը ներէ՞ք որ ճրագս վառեմ, կը հարցնէ մին : — Սիրով, կը պատասխանէ միւսը : Ըսելը զիւրին է, բայց կատարելը ո՛չ : (Այս խաղին համար առաջուրէն գետինը անպետ լըրագիրներով ծածկելու է, որպէս զի մոմին կաթկըթուքները չաղտոտեն գետինը :

3. — Երկու հոգի, աչքերնին կապած, դէմ դէմի կը պառկին գետինը, մէկ մէկ ձեռքերնին զիւրար բռնած են, իսկ միւսներուն մէջ կայ ոլորած թուղթէ տրձակ մը : « Պատրաստ ես », կը հարցնէ մին : — Այո՛, կը պատասխանէ միւսը և փոխադարձաբար կը սկսին իրարու գլխի զարնել թուղթի տրձակներով՝ միշտ ջանալով հակառակորդին հարուածներէն խուսափիլ : Այս խաղը ա՛լ աւելի զուարճալի կը դառնայ երբ ներկաներէն քանի մը հոգի թղթէ տրձակներով երկու հակառակորդներուն գլուխին կը զարնեն փոխնի փոխ :

4. — Լուացքի զամբիւղի մը երկու բռնելիք տեղերէն կ'անցունէք ամուր աւելի կոթ մը որու երկու ծայրերը կը հաստատեն երկու աթոռներու վրայ : Թեթեւաշարժ մէկը կը նստեցնեն աւելի կոթին վրայ՝

ձի նստելու դիրքով՝ երկու ոտքերն ալ զամբիւղին մէջ կախած: Այդ պարոնը, գաւազանի մը ծայրով պարտաւոր է աթոռին վրայ դրուած չորս դրամները գետին ձգել: Տասնէն ինը՝ անկարող է յաջողիլ եւ դրամներուն տեղ ինք գետին կ'իյնայ:

5. — Պարոն մը արծաթ կոթով գաւազան մը գետինը կը կեցնէ ուղղահայեաց եւ ճակատը գաւազանին կոթին կոթնցնելով անդադար արծաթէ գլուխը կը դիտէ: Այս դիրքին մէջ հինգ վեց անգամ գաւազանին շուրջը դառնալէն ետքը եթէ հրամցուի իրեն սրահին մէջ այն ինչ առարկան բռնել, չպիտի յաջողի կատարել զայն, որովհետեւ գինովի պէս կը դանդաջէ և ոտքի վրայ կենալու ալ կարողութիւն չունենար:

6. — Զախ ձեռքով աջ ոտքերնիդ բռնեցէք եւ աջ ձեռքով ալ ձախ ականջնիդ. յետոյ ջանացէք ցած առարկայի մը վրայ դրուած խից կամ լրագիր մը վերջընել ակռաներովսիդ:

7. — Յարդի շիւղ մը գետինը դրէք և գրաւ բռնեցէք որ մէկը չպիտի կրնայ վրայէն ցատքել՝ պայմանաւ որ ո'չ ոտքերը իրարմէ զատէ, ոչ ալ սրունքները ծալլէ:

8. — Հանդիսականներէն ամենէն ուժով մարդուն հետ գրաւ բռնեցէք որ պարզ լուցկի մը անկարող է մինչեւ վարի յարկը տանելու: Գրաւը բռնելէ ետքը զմեկինիդ հանեցէք եւ մանրիկ կտոր մը կտրելով փափկօրէն ձեռքին մէջ դրէք, յետոյ ուրիշ մը: Հա-

կառակորդնիդ շուտով պիտի նշմարէ թէ այդ հաշուով քանի մը ժամ պէտք է մէկ լուցկին ամբողջովին վարի յարկը փոխադրելու համար:

9. — Տիկնա՛յք, այս իրիկուն տարօրինակ փորձ մը պիտի կատարեմ ձեզ. ո'չ այս սենեակին մէջ պիտի գտնուիմ, ո'չ ալ դուրսի սրահը, բայց դուք զիս պիտի տեսնէք ինչպէս որ հիմակ կը տեսնէք: Ո'չ տախտակամածին վրայ պիտի կենամ, ո'չ պիտի պառկիմ, ո'չ նստիմ, ո'չ պիտի պարեմ, ո'չ ցատքեմ. վարը չպիտի երթամ, ո'չ ալ սանդուխին վրայ կենամ, բայց ձայնս պիտի լսէք եւ ձեր ըսածին սլատասխան պիտի տամ: Ո՞վ գրաւ կը բռնէ հետս: »

Գրաւը բռնելէ ետքը, դուռը կը բանաք ու շըրջանակին մէջ կը կայնիք, հոգ տանելով որ ոտքերնիդ տախտակամածին չդպչի:

10. — Գրաւ կը դնէք որ բերանը ամուր գոցուած շիշէ մը գինի կրնաք խմել, երբ ձեզի լաւ գոցուած շիշ մը կուտան, շիշին յատակի խոռոջը գինի կը լեցընէք եւ յետոյ գաւաթի մը մէջ պարպելով կը խըմէք:


11. — Հանդիսականներուն հարցուցէք թէ՛ երկու ձեռքով հակիթ մը կրնան կտրել, բնականաբար ամէնքն ալ պիտի պատասխանեն թէ՛ ադկէ դիւրին ի՞նչ կայ, Գրաւ բռնեցէք ամէնէն ուժեղ անձին հետ, և տուէք իրեն չեփած հակիթ մը, եւ ըսէք իրեն թէ, հակիթին երկու սուր ծայրերը երկու ամբիւն մէջ դնելով՝ ուզածին չափ սեղմէ: Տեսնենք ի՞նչպէս պիտի կտրէ:

Կրնայ ըլլալ որ հակիրթը ձախլիկութեամբ ձեռքին մէջ գառնալով կոտորի և վրան զլուխը ու գետինը ազտոտէ, նախագգուչութեան համար առաջուրնէ վըրան լաթ մը տարածելու է:


Շ Ո Ւ Ք Ի Խ Ա Ղ Ե Ր



Մեծ մայրը



Փիղ



Խոզ




Նապաստակ




Սկիւռ




Խափշիկ



Ինչևիկ



Շուկ



Արջ

ՏԱՐԵՑՈՅՅԻ ՆՈՒԷՐՆԵՐԸ ԻՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

ԱՀԱ ԹԷ ԻՆՉՊԵՍ

ՀԻՆԳ ՀԱՐԻԻՐ ՏԱՐԵՑՈՅՅԻ ՓՈԽԱՐԺԷՔԸ

ՆՈՒԷՐ ԿՈՒՏԱՆՔ ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ա .

Դրեցէք մէկ էջի չափ զուարճալիք մը կամ ծիծաղալարժ պատմութիւն մը, եթէ չէք կրնար դուք ձեզմէ բան մը արտադրել, Եւրոպական հազարամէկ հրատարակութիւններ կան, որոնք լեցուն են խնդուք պատճառող նիւթերով, ասոնցմէ հատ մը ընտրեցէք եւ թարգմանելով մեզի շնորհեցէք :

Ամենէն գեղեցիկ ու առաջին նկատուած գրութեան տէրը պիտի ընդունի մեկ օսմ. ոսկի արժողութեամբ գիրք հրատարակիչ Վ. և Պ. Չարդարեան եղբարց գրատուններէն, Կ. Պոլիս, Չաքմաքճըլար Միւսաբեկի խանի դրան կից թիւ 24—26 եւ Բերա, Գուլէ գարու, թիւ 695, ուր կը գտնուին ամէն տեսակ գիրքեր ու ամէն լեզուէ դասագիրքեր :

Երկրորդ նկատուածը պիտի ընդունի 500 պահատան եւ 500 նամակի քուղի իր անուովը տպագրուած տպարանագետ Նշան էֆ. Պէրպէրեանի կողմէ :

Բ .

Ամէն առաւօտ պէտք մը դարձած է ամէնուս համար ալ Մանգումեն ձեռք առնել տեսնելու համար թէ՛ ի՞նչ շահեկան նորութիւններ կը պարունակէ :

Ընթերցողին ճաշակին համեմատ այդ նիւթերը բնականաբար շահեկանութեան բոլոր աստիճանները կը ներկայացնեն : Արդ, եթէ Ձեզի մնար, 1907 Յունուար 1էն մինչեւ 1907 Մարտ 31, երեք ամսուան Մանգումէներուն մէջ, Ձեր նկատմով ժողովրդին ամէնէն օգտակար նկատուած երեք յօդուածներուն ընտրութիւնը, դուք որո՞նք պիտի ընտրէիք :

Որոշակի գրել Մանգումէի թիւը և յօդուածին վերնագիրը եւ ստորագրութիւնը :

Որուն որոշածները որ իբր առաջին նկատուի պիտի ընդունի մեկ քարեկան Մանգումէ նուէր :

Երկրորդ նկատուածը՝ վեց անուան Մանգումէ նուէր :

Երրորդ նկատուածը Գասիմի թարգմանած Աշխարհաբար Նարեկէն օրինակ մը նուէր :

Գ .

Մեր աղջիկները դպրոցէն ելնելէ ետքը ի՞նչ զբաղումներ պէտք է ունենան, բանաձեւել զանոնք հինգ պատասխաններու շարքով մը :

Լաւագոյն չպատասխանը գրողը պիտի ընդունի գեղեցիկ Ոսկի Մասանի մը՝ իր անունը վրան փորագրուած և ոսկերիչ Գառլօի կողմէ պատրաստուած Մեծ Շուկայ Արապածը օղլու փողոց թիւ 18 :


Երկրորդ նկատուածը Ս. Ոսնճեան փասակազմ Աղթափալիք մը :

Երրորդ նկատուածը իր անուն տպագրուած 100 ոսկեզօծ այցետոմս :



Դ.

Սոյն սափորին մէջ երեք հատ դեղձանիկ պահուած են, մէկը որ կարենայ գտնել զանոնք (և եթէ գրտնողները մէկէ աւելի ըլլան վիճակաւ) պիտի ընդունի իբր նուէր գեղեցիկ վանդակ մը գեղաձայն դեղձանիկով մը ի միասին ամէն տեսակ թռչուններ եւ վանդակներ վաճառող Յակոբ աղա Գասպարեանի կողմէ (Բերայ Գուլէ Գարու թիւ 695):



Ե.

Սոյն Լաբիրինթոսին ներսը կը գտնուի 1000 հատ զանազան՝ անվթար եւ սիրուն նաճակադրոշմներով

լեցուն աչպօմ մը, զոր պիտի նուիրէ հաւաքելի նա-
մակադրոշմի վաճառական՝ Մարտիրոս էֆէնտի Արայ-
ճեան, (Կ. Պոլիս, Ղալաթեա, Աւստրիական նամա-
կատան ետեւի կողմը եւ Գոմեսիօն-խանի կից, Տէմիր
խան, թիւ 25) :

Մեր ընթերցողներէն ո՛վ որ սիրահար է նամա-
կադրոշմներու թող աշխատի ներս մտնել և առնել
սոյն գեղեցիկ և հիասքանչ նուէրը :

2.

Տարեցոյցի բոլոր ընթերցողները կ'ընդունին նաեւ
Լուսանկարչութիւն սորվելու համար խիստ շիւրասոյց
մէթոտ մը իբր նուէր :

Պ Ա Յ Մ Ա Ն

Մեր ընթերցողները պատասխանելով այս հար-
ցումներուն թէ՛ հաճելի ժամանց մը կ'ունենան, թէ՛
գեղեցիկ նուէրներ կ'ըստանան և թէ՛ իրենց աշխա-
տակցութիւնը նուիրած կ'ըլլան մեր յաջորդ տարւոյ
տարեցոյցին, որովհետեւ լաւագոյն պատասխանները
պիտի հրատարակենք :

Բոլոր անոնք որոնք կը փափաքին մասնակցիլ սոյն
մրցումներուն պէտք է յարգեն հետեւեալ պայման-
ները :

1. Իրենց պատասխանները մեզ շրկեն առ առաւելն
մինչեւ 1907 Մարտ 31 Պոլսոյ եւ Ապրիլ 10 գաւա-
ռաց համար :

2. Բոլոր սոյն մեր նիւթական զոհողութիւնները
միմիայն մեր ընթերցողներուն համար ըլլալուն, պէտք

է բոլոր շրկուած պատասխաններուն ճակատը, թուղ-
թին վերի ձախ անկիւնը, կտրելով փակցեել սոյն



ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅԸ

Ն. Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ ԵՒ ՈՐԴՈՒ

1907 ԹՈՒՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՂՏՈՐԳ

կտրօնը : Այն պատասխանները որոնք չեն կրեր սոյն
կտրօնը բնաւ նկատողութեան չպիտի առնուին :

3. Բոլոր նուէրները պիտի տրուին Ապրիլ ամսոյ
մէջ և շահածները պիտի ծանուցուին Մանզումէի
միջոցաւ :

4. Նամակները պէտք է ուղղել հրատարակիչ-գը-
րավաճառ Զարդարեան Եղբարց, Կ. Պոլիս. Զաքմաք-
ճըլար թիւ 24-26 :

ՄԱՆԶՈՒՄԷԻ ԷՖՔԵԱՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ

խիստ մաքուր հայերէնով մը խմբագրուած կը
հրատարակուի ամէն օր արշալոյսին :

Կը բովանդակէ իր մէջ խիստ շահեկան ու ըն-
թեռնելի յօդուածներ :

Կը հրատարակի ամէն թիւով առաջին եւ չորրորդ
էջին մէջ երկու թերթօն վէպեր :

Ունի քաղաքական լուրերու ճոխ բաժին մը Անգ-

ղիբրէն, Գերմաներէն եւ Ֆրանսերէն թերթերէ քաղուած:

Ամէնէն թարմ ու ամէնէն վերջին լուրերն ու հետազիրները օրը օրին կը հրատարակէ Մանգրումէ իր բազմադիմի ազբիւրներուն շնորհիւ. Մեծ կարեւորութիւն կուտայ ներքին լուրերու հրատարակելով պաշտօնական գեկոյցները, դատական լուրերը, օրինական տրամադրութիւնները, եւ բոլոր օրուան լուրերը, միշտ թարմ, միշտ հաւաստի աղբիւրներէ քաղուած:

Մանգրումէ իր Չորեքշաբթի օրուան թիւը յատկացուցած է առեւտրական ծանօթութիւններու, թղթակցութիւններու եւ սեղանաւորական ու վաճառականական խնդիրներու, որոնց լայն տեղ մը տալու համար թերթին չորրորդ էջն ալ Չորեքշաբթի օրերը, փոխանակ ծանուցումի յօդուածներով կը զարգարուին:

Իսկ Շաբաթ օրերը առաջին եւ չորրորդ երեսը յատկացուած է գրականութեան, ուր կը տեսնուին մեր հրապարակին ամէնէն լաւագոյն գրողները փոխն ի փոխ:

Մանգրումէ միակ հայաթերթն է որ ամենէն աւելի տարածուած է Պոլսոյ, գաւառներու եւ արտասահմանի մէջ, շնորհիւ իր բազմակողմանի պարունակութեան Անընդհատ հետեւող մը մեծապէս կը մշակէ ու կը զարգացնէ թէ՛ իր միտքը եւ թէ՛ հասկցողութեան աստիճանը:

Այս ամէն առաւելութիւններով մէկտեղ, Մանգրումէ խիստ զիւրամտջելի գինով մը կը ծախուի: Իւրաքանչիւր թիւը ձեռքէ կը ծախուի 10 փարայի: Գաւառներու համար բաժնեգինն է տարեկան 1 Օսմ. ոսկի: Վեցամսեայ 3 արծաթ մէճիտ, Պոլսոյ համար 5 մէճիտ տարեկան, 50 ղրուշ վեցամսեայ: Արտասահմանի համար 25 Փրանք եւ 13 Փրանք: Վճարումները միշտ կանխիկ կ'ընդունուին:

ԳՐԱՎԱՃԱՌ—ՀՐԱՏԱՐԱԿԶ

Զարդարեան Եղբարք

Կ. ՊՈԼԻՍ, ՉԱՔՄԱՔՃՆԼԱՐ, ԹԻԻ 24—28
ԲԵՐԱՅ ԳՈՒԼԷ ԳԱՔՈՒ, ԹԻԻ 695

Զարդարեան գրատունը իր 44 տարուան գոյութեամբը այսօր իր բոլոր յաճախորդները գոհացնելու վիճակին մէջն է, թէ՛ իր տեսակներուն այլազանութեամբը և թէ՛ գիներու և գեղջերու պայմաններովը: Զարդարեան գրատունը փութով եւ խղճի մտօք կը կատարէ զաւաններէ եկած բոլոր յանձնարարութիւնները:

Զարդարեան գրատունը հայերէն եւ հայատառ տաճկերէն վէպերու ճոխ մթերք մը ունի, որոնք վարձու ալ կուտայ ամսական բաժանորդագրութեամբ:

Զարդարեան գրատունը նուէրի համար պատրաստած է ոսկեգօծ եւ գեղեցիկ կազմերով շատ մը օգտակար գիրքեր՝ որոնք միտքը ու աչքը միանգամայն կը հրապուրեն:

Զարդարեան գրատունը կը գնէ տաճկերէն, հայերէն և ֆրանսերէն ամէն տեսակ գիրքեր գոհացուցիչ պայմաններով:

Զարդարեան գրատունը կը հրատարակէ ամէն տեսակ գիրքեր, և կը վարձատրէ անոնց հեղինակները:

Զարդարեան գրատունը կը կատարէ տպագրական գործերու և կազմի ամէն տեսակ յանձնարարութիւն:

Զարդարեան գրատունը կը զբաղի նաև գործածուած նամակաղորդմաներու առևտրով, թէ՛ կը գնէ և և թէ՛ կը վաճառէ ու փափաքողներուն ալ ծանօթութիւններ կուտայ ձրիապէս:

Զարդարեան գրատունը մասնաճիւղ մը ունի Բերայ, Գուլէ գարու, թիւ 695, իր Բերայի յաճախորդներուն զիւրութեան համար, ուր կը գտնուին Փրանսերէն, հայերէն և այլ լեզուէ բազմաթիւ գիրքեր:

Զարդարեան գրատունը կը փափաքի զաւաններու մէջ ևս ունենալ մասնաճիւղեր եւ այս պատճառով:

աւել տալիս ու գործունեայ գործակալներ կը
կը փնտռէ:

Չարդարեան գրատունը առանց դիմելու անգամ
մը գիրք գնելը իր գործը չգիտնալ ըսել է:

Չարդարեան գրատունը վերջապէս իր նոր ու գոր-
ծածուած գիրքերու հաւաքին մթերքովը միշտ կը հա-
մաձայնի իր յաճախորդներուն հետ:

Հասցե

درساعات چقمقجیل یوقوشنده ۲۶ - ۲۴ نومرولی

زارتاریان کتبخانه سنه

Չարդարեան Գրատուն

Չախմախչուր, թիւ 24—26, Կ. Պոլիս

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԶԱՐԴԱՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա Ղ Օ Թ Ա Գ Ի Ի Ք

Հս ժամակարգութեան Հայ. Ս. Եկեղեցւոյ

Դասակարգեց ՍԱՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆ. [Երկրորդ Տիպ.]

Սոյն Ազօթագրքին առաջին անգամ գրութիւնը քիչ ժա-
մանակին մէջ սպառելով, այս անգամ Բ. տպագրու-
թիւնը աւելի ընտիր թուովով եւ սքանչելի կազմե-
րով հրատարակուած է: Աժէն հայ քրիստոնեայի պի-
տանի, և նուէրի համար իր տեսակին մէջ մէկ հատիկ:
Լաթակազմ 10 շշ. Հետիր լաթակազմ 12, ոսկեզօծ
17, թաւշապատ 25, Փառակազմ 25 շշ.:


ԼՔՈՒԱՄ ՔՆԱՐ.— Արտաչէս Յարութիւնեանի

գողտրիկ բանաստեղծութեանց հաւաքածոն զոր այն-
չափ գնահատուեցաւ լրագրաց մէջ: Գրն 5 շրուէ:

ՆՈՐ ՔԵՐԱԿԱՆ ՅՐԱՆՍ.— Մ. էֆ. Յովհաննէսեան իր ու-

սուցչական փորձառութեամբը այս անգամ հեղինակած
է Փրանսերէնի սոյն գիրքուսոյց քերականը որուն մէջ
աշակերտը հաւասարապէս պիտի կարենայ ուսանիլ
ձեռագիր ու տպագիր կարգով ու գրել: Գին 60 փարա:

Վարժարաններու համար մասնաւոր զեղչ:
Ուսուցիչներու օրինակ մը նմոյշ կը շրկուի:



Կը ստանձնէ

Հրգեհի եւ ծովային ասպնովագրութիւններ՝ շա-
հաւէտ պայմաններով:

Աժէն տեսակ գոմիսիօնի գործեր, ներածում, ար-
տածում եւ մաքսային գործողութիւններ:

Եւրոպական առաջնակարգ գործարաններու մի-
ջաւ՝ գունաւոր եւ պարզ պատկերազարդ քառթ-
թաւներու պատրաստութիւն, ֆոթօկրաֆի համե-
մատ:

Կը հայթայթէ

«Թօմաս Սքիւտօր» Անգլ. Տան դրամարկներէն:

Սաքսոնիոյ առաջնակարգ բիանոներ ամսական
վճարումներով:

Ամենավերջին դրութեամբ պիտի քլէթներ:

Աժէն տեսակ երկրագործական եւ թիթեղագործի
մեքենաներ:

Ուղղուած քանակութեամբ եւ տեսակով ընտիր եւ
հոտաւէտ թէյեր:

Գաւառային յանձնարարութիւններ փութով կը
կատարուին:

Հասցե

Աքրահաւ Կ. Կառնեան, Իզմիտ

Դ Ե Ր Ձ Ա Կ Ա Տ Ո Ւ Ն

Կ'ուղէ՞ք գիտնալ թէ ո՞ր է Միրիճանեան դեր-
ձակատունը, ահա այս անգամ իր յաճախորդաց դի-
ութեան համար փոխադրած է իր գործատեղին Բե-
րայ շիտակ ճամբայ բասաթ Կալաթա Սէրայ թիւ 16
խանութր, ուր պիտի գտնէք ֆրանսական եւ անգլ.
կերպասներու ճոխ մթերք մը, նաեւ խնամալ աշ-
խատութիւն coupe napolitaine, ճաշակ եւ նրբութիւն:
Բաւ է անգամ մը այցելել վստահ ըլլալու համար:

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ ՏՊԱՐԱՆԷՆ
Այս Ձմբան մէջ պիտի հրատարակուին

ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ ԴՐԵՅ

ՔԱՍԻՄ

Ժողովրդական գրողի հանդամանքով ՔԱՍԻՄ միշտ ընտրած է այնպիսի նիւթեր որոնք ուղղակի վերաբերութիւն ունին ընտանեկան ներքին կեանքի բարօրութեան և արտաքին յարաբերութիւններու ազնուացման հետ: Նոյն նպատակով գրած է նաև այս գիրքը որ խնամոտ տպագրութեան մը առարկայ եղած՝ պիտի հրատարակուի ընտիր թուղթով, սիրուն զարդագրերով, տոկուն կազմով, և հակառակ պարունակութեանը ճոխութեան ու 200 է աւելի էջերու ստուարութեանը պիտի ծախուի անօրինակ կերպով ածան գինով մը:

Շարունակաբար պիտի հրատարակուին ՔԱՍԻՄի երկու աշխատասիրութիւններն ալ:

Պատկերազարդ հատոր մը սիրուն կողքով, որու 400 է մօտ էջերուն մէջ խտացուած են 1300 է աւելի կերակուր, խմորեղէն և անուշեղէն պատրաստելու միջոցները: Հարուստ, միջակ դասակարգի, և աղքատ խոհանոցներու մէջ պատրաստուած կերակուրներէն և ոչ մին զանց առնուած է: Կը պարունակէ երեկոյթի և ուրիշ հանդիսաւորութիւններու առթիւ պատրաստուելիք սեղաններու պատկերներ:



Անհրաժեշտ է, պէտք է որ ամէն տղայ կարդան
ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

որ զուարճալի անթիւ անէքտօղներով և 60 ի չափ պատկերներով խիստ հրապուրիչ ընկեր մը ըլլալու սահմանուած է օրիորդներուն և պատանիներուն:

« Ազգային գրադարան



NL0142454

13834